

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ  
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

# ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 3 (73)  
2016 թ.

Գլխավոր խմբագիր՝  
Ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀՀ իրավաբանների միություն,  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ

Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ո ղ ի ղ ո լ ը

Սամվել Դիլբանդյան -

Ի.գ.դ., գլխավոր խմբագրի տեղակալ  
Կարեն Գևորգյան -

Ի.գ.թ., գլխավոր խմբագրի տեղակալ  
Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար  
Գևորգ Դանիելյան - Ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - Ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - Ի.գ.դ.

Դավիթ Ավետիսյան - Ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - Ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - Ի.գ.դ.

Վիգեն Քոչարյան - Ի.գ.թ.

Խմբագրության հասցեն՝  
ՀՀ, 0025 Երևան,  
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ  
իրավագիտության ֆակուլտետ:  
Հեռ. 060-71-02-47  
Էլ. կայք՝  
[http://ysu.am/faculties/hy/Law/  
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Խմբագրությունը կարող է  
հրապարակել նյութեր՝ համամիտ  
չլինելով հեղինակների  
տեսակետներին:  
12 համակարգչային էջից ավելի  
չպատվիրված նյութերը չեն  
ընդունվում:  
e-mail: [a\\_petrosyan@ysu.am](mailto:a_petrosyan@ysu.am)  
Դասիչ՝ 77771  
Տպագրական 7 մամուլ  
Գրանցման թիվը՝ 798  
Տպաքանակը՝ 500  
Գինը՝ պայմանագրային  
Հանձնված է շարվածքի  
4.10.2016  
Հանձնված է տպագրության  
2.11.2016

СОЮЗ ЮРИСТОВ РА  
ЮРИДИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ ЕГУ

# ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 3 (73)  
2016 г.

Главный редактор:  
к.ю.н., проф. Левон Оганян

Учредитель и издатель:  
Союз Юристов РА,  
Юридический факультет ЕГУ

## Редакционный совет

Самвел Дилбандян -

д.ю.н., зам. главного редактора

Карен Геворгян -

к.ю.н., зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артуր Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Виген Кочарян - к.ю.н.

Адрес редакции:  
РА, 0025 Ереван,  
ул. Алека Манукяна 1,  
юридический факультет ЕГУ.  
Тел.: 060-71-02-47  
e-mail: a\_petrosyan@ysu.am  
web: [http://ysu.am/faculties/hy/Law/  
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

7 усл. печ. л.  
Тираж: 500  
Сдано в набор 04.10.2016  
Подписано к печати 2.11.2016

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

#### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Էդգար Շաթիրյան

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ..... 4

Հեղինե Հախվերդյան

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՐԱՍԱԴՐԿԵԼԻՔ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄԸ ՀՀ-Ի ՀԱՄԱՐ ..... 15

Ռուսլան Մարանդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՐԱՔԿԵ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ..... 24

Աիդա Իսկոյան, Լիլիթ Երեմյան

ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՔՐԵԱԻՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԱԿՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ..... 32

#### ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Արման Թաթրյան

ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՁԵՐՔԱԿԱԼՄԱՆ ԵՎ ԲԵՐՄԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՈՒՄ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ..... 41

Գևորգ Բաղդասարյան

ՄԵՂԱԴՐԱՆՔԻՑ ՀՐԱԺԱՐԿԵԼՈՒ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ..... 58

Արսեն Մարտիրոսյան

ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԵՎ ՆԱԽԱԳԾԻ ..... 70

#### ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Տիգրան Խաչիկյան

ՄԱՔՍԱՅԻՆ ՏԵՍԱԶՆՆՄԱՆ և ՋՆՆՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՐԳԱԿՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 81

Անի Միքայելյան

ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՍԲ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ..... 91

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ..... 103

# ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԲԱՐԵԼԱԿՄԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

## Էդգար Էդուարդի Շաթիրյան

*Երևանի պետական համալսարանի իրավագիտության  
ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ*

### I. Նախաբան

Հայաստանի Հանրապետությունում հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասությունները արձանագրված են արձանագրություններով, մասնավորապես՝ «actio popularis» ինստիտուտի տեսանկյունից, արդիականություն են ձեռք բերել վերջին տարիներին՝ պայմանավորված հասարակական, առավելապես՝ բնապահպանական կազմակերպությունների կողմից վարչական ակտերը դատական կարգով վիճարկելու գործընթացներով: Հարկ է նկատել, որ այս կապակցությամբ կայացված դատական ակտերը չեն առանձնանում օրենքների կիրառման անհրաժեշտ միասնականությամբ, իսկ ՀՀ սահմանադրական դատարանի՝ խնդրո առարկա որոշումներին տրվել են տարաբնույթ մեկնաբանություններ: Նշենք, որ սույն ոլորտում առկա հիմնախնդիրները և դրանց վերաբերյալ երբեմն իրարամերձ դիրքորոշումները հատուկ են ոչ միայն Հայաստանի Հանրապետությանը, այլև արտասահմանյան մի շարք պետություններին, ինչն էլ ավելի է ընդգծում այդ հիմնախնդիրների արդիականությունը և դրանց համալիր հետազոտության արդյունքներով միասնական իրավակիրառ պրակտիկայի ձևավորման անհրաժեշտությունը:

Սույն հոդվածի շրջանակներում քննության նյութ կդառնա էկոլոգիական իրավունքների պաշտպանությանն ուղղված ներպետական և միջազգային-իրավական որոշ կառուցակարգերի բարելավման արդի միտումները՝ հաշվի առնելով այդ կապակցությամբ ձևավորված դատական պրակտիկան:

**II. Հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասությունների վերաբերյալ ՀՀ օրենսդրության սահմանադրականությունը և այս կապակցությամբ ձևավորված դատական պրակտիկան**

Օրհուսի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ սահմանադրական դատարանի որոշման մեջ ամրագրված է, որ կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է մի շարք պարտավորություններ, այդ թվում՝ «ներպետական օրենսդրության շրջանակներում ապահովել արդարադատական համակարգի կամ անկախ և անաչառ մարմնի միջոցով կոնվենցիայով նախատեսված անձանց խախտված իրավունքների վերականգնման առավելագույնս հեշտացված հնարավորություն, ընդհուպ՝ արդարադատության մատչելիության ֆինանսական կամ այլ խոչընդոտների վերացման կամ նվազեցման համապատասխան հա-

մակարգի ստեղծումը»<sup>1</sup>: Ուշադրության է արժանի սույն որոշման 3-րդ կետում տեղ գտած այն ձևակերպումը, համաձայն որի՝ Կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները կոչված են ապահովելու նաև անձի խախտված իրավունքների, ազատությունների դատական պաշտպանության և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրականացումը:

Թեղուտի հանքավայրի առնչությամբ կայացված դատական ակտերում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (28.11.2007թ.)<sup>2</sup> 3-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի՝ «խախտվել» բառից հետո «նրա» արտահայտության<sup>3</sup> սահմանադրականության հարցի հետ կապված՝ ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ<sup>4</sup> անհրաժեշտություն առաջացավ արմատապես անդրադառնալու հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասությունների խնդրին: Մասնավորապես, վերլուծելով վիճարկվող նորմը և այն համադրելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի (2005թ. խմբ.) դրույթների հետ, Սահմանադրական դատարանը գտել է, որ այդ նորմը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը նշված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Այդ կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է. «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջինս և, մասնավորապես, դրա 3-րդ հոդվածը շահագրգիռ հասարակական կազմակերպությունների առնչությամբ չի սահմանել ուրիշի խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի *իրացման դեպքերը և կարգը* (ընդգծումը մերն է): ...սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը՝ հաշվի առնելով *actio popularis* բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները: Նման իրավակարգավորումը կնպաստեր ոչ միայն խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, այդ թվում՝ դատական պաշտպանության արդյունավետությանը, այլև կբարձրացներ քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող հասարակական կազմակերպությունների դերը: Ընդ որում, ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրա-

<sup>1</sup> ՀՀ սահմանադրական դատարանի 2000թ. դեկտեմբերի 26-ի թիվ ՍԴՈ-269 որոշման 2-րդ կետը:

<sup>2</sup> Օրենսգրքն ուժը կորցրել է 05.12.2013 թվականին (ՀՕ-139-Ն):

<sup>3</sup> 05.12.2013թ. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները... Այս առումով կարելի է փաստել, որ ՀՀ վարչական դատավարության նոր օրենսգրքում տեղ են գտել նույնական դրույթներ, ինչ 28.11.2007 թվականի օրենսգրքում:

<sup>4</sup> ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. սեպտեմբերի 7-ի թիվ ՍԴՈ-906 որոշումը:

վունքի իրացման դեպքերը և կարգը սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպությունների, որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը: Այս դիրքորոշումը համահունչ է նաև «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, որի համաձայն՝ կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում: Վարչական դատավարությունում այլոց իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքի (“Actio popularis”) առնչությամբ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ, որպես կանոն, եվրոպական երկրներում այս ինստիտուտն իր դասական իմաստով և լրիվ ծավալով կիրառություն չունի... Բոլոր դեպքերում հիմնական մոտեցումն այն է, որ առանց իրավական շահի actio popularis-ը պետք է բացառվի»<sup>1</sup>:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ ՀՀ սահմանադրական դատարանը հանգել է այն եզրակացությանը, որ ինչպես «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի դրույթները, այնպես էլ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (28.11.2007թ.) 3-րդ հոդվածի վիճարկվող դրույթները, ըստ էության, չեն բացառում հասարակական կազմակերպությունների կողմից համապատասխան *իրավական շահագրգռվածության* պայմաններում այլոց իրավունքները պաշտպանելը «actio popularis» սկզբունքով: Ընդ որում, այդպիսի եզրահանգման հիմքն են ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում (2005թ. խմբ.) ամրագրված դրույթները, որոնք ևս չեն բացառում «ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով դատարան դիմելու հնարավորությունը»:

Հասարակական կազմակերպությունների կողմից վարչական գործերով դատարան հայց ներկայացնելու իրավունքի իրացման առանցքային չափանիշը իրավական շահագրգռվածությունն է, ինչի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Սույն գործով «Էկոլոյար» բնապահպանական հասարակական կազմակերպությունն Օրիուսի կոնվենցիայի<sup>2</sup> իմաստով «շահագրգիռ»<sup>3</sup> կազմակերպություն է, հետևաբար՝ օգտվում է այդ կազմակերպության կանոնադրական նպատակներից բխող, շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող հարցով դատական պաշտպանության իրավունքից»<sup>4</sup>:

<sup>1</sup> Սույն տեղում, կետեր 6-8:

<sup>2</sup> «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» 1998 թվականի կոնվենցիա (Օրիուսի կոնվենցիա):

<sup>3</sup> «Շահագրգիռ հասարակայնությունը» շրջակա միջավայրին վերաբերող հարցերով որոշումների ընդունման գործընթացի արդյունքում ազդեցություն կրող և (կամ) նման ազդեցության ենթակա և (կամ) նշված գործընթացում շահագրգռված հասարակայնությունն է: Ելնելով սույն սահմանման իմաստից՝ շրջակա միջավայրի պահպանության հարցերով զբաղվող և ազգային օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին համապատասխանող ոչ կառավարական կազմակերպությունները համարվում են շահագրգիռ կազմակերպություններ (Օրիուսի կոնվենցիայի 2-րդ հոդ. -ի 5-րդ կետ):

<sup>4</sup> ՀՀ վճռաբեկ դատարանի 30.10.2009թ. որոշումը թիվ ՎԴ/3275/05/09 վարչական գործով:

Խնդրո առարկայի հետ կապված ուշադրության է արժանի ՀՀ վարչական դատարանի 2010 թվականի մարտի 24-ի վճիռը թիվ ՎԴ/3275/05/09 գործով, որում մասնավորապես նշված է. «Վարչական արդարադատությունը կրում է հասցեավորված բնույթ: Այսինքն՝ անձը ցանկացած կամ վերացական պահանջներով դատական պաշտպանության դիմել չի կարող, այլ նա կարող է դիմել դատարան, երբ հանդիսանում է շահագրգիռ անձ, այսինքն՝ վարչական մարմնի կողմից խախտվել են անձի հանրային սուբյեկտիվ իրավունքները: Վարչական դատավարությունն առաջին հերթին ծառայում է մարդու և քաղաքացու իրավունքների, անձնական շահերի պաշտպանությանը: Դա նշանակում է, որ վարչական արդարադատություն կարող է հայցել միայն այն անձը (ֆիզիկական կամ իրավաբանական), որը գտնում է, որ վարչարարությամբ իր իրավունքները կամ շահերն անմիջականորեն շոշափվել են: Անձինք չեն կարող դատարանում հայցել անձամբ իրենց չվերաբերող որևէ վարչարարության ստուգում միայն այն պատճառով, որ նրանք ընդհանրապես շահագրգռված են վարչական մարմինների իրավաչափ գործունեության մեջ»<sup>1</sup>:

Հղում կատարելով ՀՀ սահմանադրական դատարանի 2000 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՍԴՈ-269 որոշմանը՝ ՀՀ վարչական դատարանն արձանագրել է. «Որոշմամբ մեկ անգամ ևս փաստվում է, որ Օրիուսի կոնվենցիան հասարակական կազմակերպություններին ուղղակի դատավարական իրավասություններով չի օժտում: Ավելին, նշված կոնվենցիայից նման պարտավորություն ուղղակի չի բխում, քանզի պետությունը պետք է «ներպետական օրենսդրության շրջանակներում ապահովի արդարադատական համակարգի կամ անկախ և անաչառ մարմնի միջոցով կոնվենցիայով նախատեսված անձանց խախտված իրավունքների վերականգնման առավելագույնս հեշտացված հնարավորություն»: Նման իրավասությունները ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով արդեն իսկ սահմանված են, ինչը հնարավորություն է տալիս իրականացնել անձանց խախտված իրավունքների լիակատար պաշտպանություն, որոնց թվում, սակայն, հասարակական կազմակերպությունները ներառված չեն»<sup>2</sup>: Սույն գործով կայացված դատական ակտից ակներև է դառնում, որ դատարանն առաջնորդվել է այն տրամաբանությամբ, որ գործող օրենսդրությունը բացառում է հասարակական կազմակերպությունների կողմից այլոց իրավունքների դատական պաշտպանության հնարավորությունը՝ մերժելով կազմակերպության հայցը: ՀՀ վճռաբեկ դատարանի 01.04.2011թ. որոշմամբ սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքը մերժվեց<sup>3</sup>: Ընդ որում որոշման մեջ հղում է կատարված ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. սեպտեմբերի 7-ի թիվ ՍԴՈ-906 որոշմանը, որով այդպիսի մասնակցությունը, ըստ էության, իրավաչափ է համարվել:

Հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասությունների հիմքում ընկած է բացառապես օբյեկտիվ իրավական շահագրգռվածությունը, կամ, այլ կերպ ասած, տվյալ պարագայում էականն օբյեկտիվ իրավունքի խախտումն է: Խոսքը վերաբերում է այն օբյեկտիվ իրավունքի խախտմանը, որն ու-

<sup>1</sup> Այդ կապակցությամբ Տե'ս նաև ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 17.09.2011թ. թիվ 127 որոշումը «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի կիրառման դատական պրակտիկայի մասին»:

<sup>2</sup> ՀՀ վարչական դատարանի 24.03.2010թ. վճիռը թիվ ՎԴ/3275/05/09 գործով:

<sup>3</sup> ՀՀ վճռաբեկ դատարանի 01.04.2011թ. որոշումը թիվ ՎԴ/3275/05/09 վարչական գործով:

նի հանրային նշանակություն, բխում է հանրային հարաբերություններից, և որում, իր կանոնադրական նպատակներեց ելնելով, տվյալ հասարակական կազմակերպությունն ունի «բավականաչափ շահագրգռվածություն»: Նկատենք, որ սույն եզրույթն իր ամրագրումն է ստացել Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետով<sup>1</sup>, ինչի կապակցությամբ ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի կազմում գործող Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեն համապատասխան որոշման մեջ արձանագրել է, որ, Թեղուտի հանքավայրի շահագործմանն առնչվող վարչական ակտերը վիճարկող՝ «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպության ներկայացրած դատական հայցը վարույթ չընդունելով, խախտվել են Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները<sup>2</sup>:

2014 թվականին հաստատվել է Համապատասխանության կոմիտեի՝ 2013 թվականի վերոնշյալ որոշումը՝ արձանագրելով, որ Թեղուտի հանքավայրի շահագործման օրինականությունը վիճարկող հայցով հասարակական միավորումներին դատարան դիմելու իրավունքից զրկելով՝ Հայաստանի կառավարությունը խախտել է Օրհուսի կոնվենցիայով ամրագրված հասարակական միավորումների՝ հանրային շահերի պաշտպանության հայցով դատարան դիմելու իրավունքը<sup>3</sup>:

Քննարկվող հիմնախնդրին լուծում տալուն, թերևս, կարող են նպաստել «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ նոր օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջադրված իրավակարգավորումները: Նախագծի<sup>4</sup> 16-րդ հոդվածում թվարկված են կազմակերպության իրավունքները, այդ թվում՝ կազմակերպության կողմից իր կանոնադրության նպատակներին համապատասխան՝ դատարանում օրենքով սահմանված կարգով իր և իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերը ներկայացնելն ու պաշտպանելը

<sup>1</sup> «Յուրաքանչյուր Կողմ ազգային օրենսդրության շրջանակներում պարտավոր է ապահովել, որ շահագրգիռ հասարակայնության ներկայացուցիչները, ովքեր ցուցաբերում են բավականաչափ շահագրգռվածություն կամ որպես այլընտրանքային տարբերակ համարում են, որ տեղի է ունեցել այս կամ այն իրավունքի խախտում, եթե դա համապատասխան Կողմի վարչական վարույթի նորմերով սահմանվում է որպես նախապայման, ունենան հնարավորություն, ազգային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և առանց ստորև բերված 3-րդ կետի կամ սույն Կոնվենցիայի այլ համապատասխան դրույթների խախտման, դատարանում և (կամ) օրենքին համապատասխան ստեղծված անկախ և անկողմնակալ մարմնում՝ ընդունված որոշումների վերանայման հնարավորություն՝ 6-րդ հոդվածի դրույթների շրջանակներում ընդունված ցանկացած որոշման, կատարված գործողության կամ անգործության օրինականությունը նյութական և ընթացակարգային իրավունքի տեսանկյունից վիճարկելու նպատակով»:

<sup>2</sup> Միաժամանակ, Կոմիտեն ՀՀ կառավարությանն առաջարկել է փոփոխություններ կատարել, մասնավորապես՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում՝ հստակորեն ամրագրելով հասարակական կազմակերպությունների՝ վարչական մարմինների գործողությունները դատական կարգով վիճարկելու իրավունքը (Findings and recommendations with regard to communication ACCC/C/2011/62 concerning compliance by Armenia (adopted by the Compliance Committee on 28 June 2013), "IV. Conclusions and recommendations"):

<sup>3</sup> Economic Commission for Europe, Meeting of the Parties to the Convention on Access to Information, Public Participation in Decision-making and Access to Justice in Environmental Matters (Fifth session, Maastricht, the Netherlands, 30 June and 1 July 2014), Decision V/9a on compliance by Armenia:

<sup>4</sup> Տե՛ս նախագծի լրամշակված տարբերակը (<http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=41241>)



(մաս 1, կետ 7): Ընդ որում, Նախագծի վերոնշյալ հոդվածով ամրագրված կարգավորումներին համապատասխան՝ *կազմակերպությունն իր շահառուների* դրա կանոնադրությամբ նախատեսված անձանց կամ անձանց խմբերի, *օրինական շահերը դատարանում ներկայացնելու է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում* (մաս 2): Այլ կերպ ասած, Նախագծով առաջադրված համապատասխան կարգավորման չվերանայման դեպքում կազմակերպությանը հնարավորություն է տրվելու իր շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնել բացառապես մեկ ոլորտում, որպիսի օրենսդրական կարգավորման պայմաններում առնվազն ամբողջական լուծում չի տրվի հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասությունների հիմնախնդրին՝ նկատի ունենալով դրանց և դրանց գործունեության ոլորտների բազմազանությունը: Հատկանշական է, որ մինչ Նախագծի լրամշակումը, նախատեսվում էր քննարկվող հարցին լուծում տալ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով<sup>1</sup>, որի 216.6-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված էր, որ հասարակական կազմակերպությունը հնարավոր կամ փաստացի շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնում է շրջակա միջավայրի, պատմամշակութային արժեքների պահպանության, ինչպես նաև օրենքով ուղղակիորեն սահմանված այլ ոլորտներում: Այսպիսով, Նախագծով ամրագրված համապատասխան կարգավորման հետ կապված, կարելի է արձանագրել հետքայլ ի համեմատ մինչ այդ մեկ այլ օրինագծով նախատեսված կարգավորման:

Նախագծի 16-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված են այն պայմանները, որոնց *միաժամանակյա առկայության պայմաններում կազմակերպությունը շրջակա միջավայրի պահպանության ոլորտից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել դատարան*: Դրանք են՝

1) հայցադիմումը պետք է բխի կազմակերպության կանոնադրական նպատակներից և խնդիրներից և ուղղված լինի կազմակերպության շահառուների՝ կազմակերպության կանոնադրային նպատակների հետ կապված կոլեկտիվ շահերի պաշտպանությանը,

2) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում կազմակերպությունը պետք է մասնակցած լինի հիմնադրությամբ փաստաթղթերի<sup>2</sup> կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին կամ կազմակերպությանը հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորություն տրված չլինի, և

3) հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն 2 տարվա ընթացքում կազմակերպությունը պետք է գործունեություն ծավալած լինի վերոնշյալ ոլորտում:

Վերոնշյալ պայմանների ամրագրումն օրենսդրական մակարդակում բնորոշ է նաև Օրիուսի կոնվենցիայի անդամ որոշ պետությունների: Միաժամանակ, պետք է

<sup>1</sup> Այն ներառված էր Նախագծի ընդունմամբ պայմանավորված, Հայաստանի Հանրապետության մի շարք օրենքներում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարում նախատեսող օրինագծերի փաթեթում:

<sup>2</sup> Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթղթերի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) նախագծեր («Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 21.06.2014թ. ՀՀ օրենքի հոդ. 4, մաս 1, կետ 6):

նկատի ունենալ, որ քննարկվող հիմնախնդրի հետ կապված զարգացումներն ընթանում են ոչ կառավարական կազմակերպությունների (այդ թվում՝ բնապահպանական) համար արդարադատության լայն մատչելիություն ապահովելու ուղղությամբ:

### III. Հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասությունների վերաբերյալ արտասահմանյան դատական պրակտիկան

Արտասահմանյան առանձին պետություններում ոչ կառավարական կազմակերպությունների locus standi (legal standing)-ն պայմանավորված է իրավունքների և օրինական շահերի առկայությամբ, և դատարանների կողմից դրան տրվում է նեղ կամ լայն մեկնաբանություն: Այսպես, օրինակ, 1998 թվականին Եվրոպական համայնքների դատարանը հրաժարվեց բնապահպանական հարցերով իրավասությունների հարցի հետ կապված որդեգրել լայն մոտեցում *«Գրինպիսի խորհուրդը և այլք ընդդեմ Եվրոպական հանձնաժողովի» գործով* (C-321/95, (1998) ECR I-1651): Մի քանի մասնավոր անձինք և ոչ կառավարական կազմակերպությունը դատարան էին ներկայացրել հայցադիմում՝ վիճարկելով Իսպանիայի կողմից Կանարյան կղզիներում արդյունահանվող հումքով աշխատող երկու էլեկտրակայանների կառուցման Եվրոպական Միության կողմից ֆինանսավորման օրինականությունը: Առաջին ատյանի դատարանը հրաժարվեց քննել գործը, ինչին հետևեց Եվրոպական համայնքների դատարանի մերժումը: «Եվրոպական ընկերակցության հիմնադրման մասին» պայմանագրի համապատասխան դրույթի (հոդված 230(4))<sup>1</sup> համաձայն՝ ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ կարող է ներկայացնել հայցադիմում՝ վիճարկելով այն որոշումները, որոնք ընդունվել են նշված անձի նկատմամբ՝ անհատապես, ինչպես նաև այն որոշումները, որոնք թեև ընդունված են այլ անձի հասցեագրված կանոնակարգի կամ որոշման ձևով, սակայն անմիջականորեն և անհատապես շոշափում են նրա շահերը:

Առաջին ատյանի դատարանը որոշեց, որ Գրինպիսը՝ որպես ոչ կառավարական կազմակերպություն, չի կարող ունենալ locus standi, քանզի այդ կազմակերպությունը չի ներկայացնում locus standi ունեցող անձանց և չունի սեփական որոշակի շահագրգռվածություն: Հասարակական ընդհանուր շահի առկայության դեպքում locus standi-ի և Եվրոպական Միության օրենքների կիրառության ոլորտում բացերի (պայմանավորված վերը նշված 230-րդ հոդվածի սահմանափակ մեկնաբանությամբ) վերաբերյալ «Գրինպիս» կազմակերպության փաստարկները, ինչպես նաև փաստարկն այն մասին, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ընթացակարգի վերաբերյալ տեղեկատվություն և խորհրդատվություն ստանալու իրավունքը նրան թույլ է տալիս դիմել դատարան, հաշվի չառնվեցին Եվրոպական համայնքների դատարանի կողմից:

Որոշ պետություններում, որտեղ սահմանված են օրինական շահի առկայությունը ստուգելու օրենսդրական խիստ պահանջներ, locus standi-ն ընդլայնվել է մեկնաբանության միջոցով: Այս առումով բնապահպանական կազմակերպությունները locus standi-ի ձեռքբերման հարցում որոշակի հաջողության են հասել Նորվեգիայում, թեև այստեղ կիրառվում է օրինական շահի առկայության չափանիշը<sup>2</sup>: Դեռևս 1979 թվականին «Alta»-ի գործով նորվեգական բնապահպանական ընկերությանը

<sup>1</sup> europa.eu.int/eur-lex/en/treaties/dat/ec\_cons\_treaty\_en.pdf.

<sup>2</sup> Section 28 of the Administration Act (Forvaltningsloven) and section 54 of the (Civil) Procedure Act (Tvistemalsloven) require that a party has a “legal interest”. Bugge, Hans Christian, The new article on environmental protection in Norway’s Constitution, in World Survey, op. cit., էջ 321, (“There are no special rules for environmental rights and interest”).

(Norges Naturvernforbundet) վերապահվեց locus standi: Այս կապակցությամբ Նորվեգիայի գերագույն դատարանը որոշեց. «Հանգամանքներից ելնելով՝ հայցվորի մոտ կարող է առկա լինել հայց ներկայացնելու օրինական շահ, եթե անգամ որոշումն ուղղակի ազդեցություն չի ունենում նրա իրավական վիճակի վրա: Կախված հանգամանքներից՝ շահագրգիռ կազմակերպությունը ևս կարող է ունենալ անհրաժեշտ օրինական շահ, եթե անգամ հարցի լուծումը ուղղակի ազդեցություն չի ունենում կազմակերպության կամ դրա անդամների իրավունքների վրա: Պետական մարմինների գործունեության դատական վերահսկողության անհրաժեշտությունը կարող է վճռորոշ գործոն լինել տվյալ հարցում»<sup>1</sup>:

Մի շարք պետությունների օրենսդրությամբ հասարակական կազմակերպությունների՝ դատարան դիմելու իրավունքի իրացումը պայմանավորվում է բավականաչափ շահագրգռվածության առկայությամբ: Այս կապակցությամբ ուշադրության է արժանի Շվեդիայի փորձը, որտեղ նախկինում էկոլոգիական թույլտվությունները բողոքարկելու հնարավորություն ստանալու համար բնապահպանական կազմակերպությունները պետք է գործունեություն ծավալեին երեք տարուց ավելի և ունենային առնվազն 2000 անդամ, որպիսի հանգամանքը Եվրոպական միության արդարադատության դատարանի կողմից դիտվել է Օրիուսի կոնվենցիայի իմպլեմենտացմանն ուղղված Եվրոպական միության օրենսդրության պահանջների խախտում<sup>2</sup>: Հասարակական կազմակերպությունների համար արդարադատության մատչելիությանն առնչվող Շվեդիայի օրենսդրությունը Ղատարանի որոշմամբ փոփոխվեց: Շվեդիայի Բնապահպանական օրենսգրքի 16-րդ գլխի 13-14-րդ հոդվածների համաձայն՝ բնապահպանական կազմակերպությունները, որոնք ըստ իրենց կանոնադրությունների՝ նպատակ ունեն նպաստելու բնության պահպանությանը, շրջակա միջավայրի պաշտպանությանը, կարող են Օրենսգրքին համապատասխան բողոքարկել թույլտվությունների, հաստատումների վերաբերյալ որոշումները:

Քննարկվող հարցադրման համատեքստում ուշագրավ են Եվրոպական միության արդարադատության դատարանի ակտերը: Այդ կապակցությամբ Ղատարանի (Չորրորդ պալատ) 12.05.2011 թվականի որոշման (preliminary ruling) պատճառաբանական մասում մասնավորապես նշված է. «ԵՄ անդամ պետությունների ազգային օրենսդրությունը չի կարող սահմանափակել շրջակա միջավայրի վրա հնարավոր էական ազդեցություն ունեցող որոշումների բողոքարկման հնարավորությունն անհատական շահերի խախտման հանգամանքով և պետք է հաշվի առնի նաև հասարակական շահերը (ընդգծումը մերն է), երբ դիմումատուն պնդում է ԵՄ էկոլոգիական օրենսդրությունից բխող օրենքի խախտման փաստը: Ղատարանի սույն որոշման հիմքում ընկած է Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման 85/337 դիրեկտիվի 10a հոդվածի պահանջն առ այն, որ շահագրգիռ հասարակայնության՝ բավականաչափ շահագրգռվածություն ունեցող կամ իրավունքի խախտման փաստը մատնանշող անդամների համար պետք է մատչելի լինեն դատական պաշտպանության ընթացակարգերը: Նրանք պետք է օժտվեն որոշումների բողոքարկման հնարավորությամբ այն հարցերի առնչությամբ, որոնց վերաբերյալ 85/337

<sup>1</sup> Case report at NRt 1980, էջեր 569 & 575, quoted in Basse, EllenMargrethe, Report from Denmark, in The concept of interest, op. cit., p. 41.

<sup>2</sup> Case C-263/08, *Djurgården-Lilla Värtans Miljöskyddsforening v. Stockholms kommun*, Judgement of the Court (Second Chamber) of 15 October 2009.

դիրեկտիվը նախատեսում է հանրային մասնակցության պահանջ: Դիրեկտիվի 10a հոդվածի համաձայն՝ ազգային օրենսդրությունը, նախատեսելով «բավականաչափ շահագրգռվածության» և «իրավունքի խախտման» չափանիշներ, պետք է ապահովի դրանց համապատասխանությունն արդարադատության լայն մատչելիություն ապահովելու նպատակին: Եթե 85/337 դիրեկտիվում ամրագրված դրույթներն անդամ պետություններին ընձեռում են զգալի հայեցողություն ֆիզիկական անձանց համար վերոնշյալ երկու հասկացությունների չափանիշների սահմանման հարցում, ապա նույնը չի կարելի ասել շրջակա միջավայրի պահպանության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների մասին: Վերոգրյալի հիման վրա հնարավոր է եզրակացնել, որ ԵՄ 85/337 դիրեկտիվը բացառում է ազգային օրենսդրությամբ այնպիսի կարգավորում, երբ արգելվում է հասարակական կազմակերպությունների կողմից ԵՄ էկոլոգիական օրենսդրության դրույթները ենթադրաբար խախտող շինարարական թույլտվությունների բողոքարկումը անհատական շահ չունենալու պատճառաբանությամբ<sup>1</sup>:

Հարկ ենք համարում նկատել, որ եվրոպական վերոնշյալ և մի շարք այլ պետությունների օրենսդրության, դրա զարգացման միտումների, ինչպես նաև այդ պետություններում վերջին տարիներին ձևավորված դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ ոչ կառավարական կազմակերպությունների համար նախատեսվում է արդարադատության լայն մատչելիություն:

#### IV. Վերջաբան

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված չեն շահագրգիռ հասարակական կազմակերպությունների՝ այլոց խախտված իրավունքների կապակցությամբ դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը, իսկ առկա իրավակարգավորումների պայմաններում վերջին տարիներին կայացված դատական ակտերում օրենսդրական ակտերի դրույթներին տրվել են ոչ միատեսակ մեկնաբանություններ, ինչով պայմանավորված՝ ձևավորված դատական պրակտիկան համահունչ չէ խնդրո առարկայի հետ կապված զարգացումների արդի միտումներին: Այդ կապակցությամբ արդիական են այնպիսի իրավակարգավորումների մշակումը և դրանց ներդրումը, որոնք լիարժեքորեն կհամապատասխանեն ժամանակակից միջազգային չափորոշիչներին և կբխեն այն փաստաթղթերից, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը:

<sup>1</sup> Judgment of the European Court of Justice (Fourth Chamber). Preliminary ruling under Article 234 EC, from the Oberverwaltungsgericht für das Land Nordrhein-Westfalen (Germany), In Case C-115/09, 12 May, 2011.

## ИМПЕРАТИВ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ПРАВОВЫХ ОСНОВ ЗАЩИТЫ ЭКОЛОГИЧЕСКИХ ПРАВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННЫХ МЕЖДУНАРОДНЫХ ТЕНДЕНЦИЙ

**Эдгар Шатирян**

*Доцент Кафедры конституционного права  
Ереванского государственного университета,  
кандидат юридических наук*

---

В Республике Армения постановка вопросов, касающихся процессуальной правосубъектности общественных организаций, в частности с точки зрения института «actio popularis», приобрела актуальность в последние годы, что обусловлено процессами оспаривания в судебном порядке административных актов общественными, преимущественно экологическими организациями. Следует заметить, что вынесенные в связи с этим судебные акты не выделяются необходимым единством в применении законов, а в связи с предметом спора по разному толкуются постановления Конституционного Суда РА. Отметим, что имеющиеся в этой сфере проблемы и зачастую взаимоисключающие подходы в их отношении присущи не только Республике Армения, но и ряду иностранных государств и это обстоятельство еще более подчеркивает актуальность этих проблем и необходимость формирования единой правоприменительной практики по результатам их комплексного исследования.

В рамках данной статьи рассмотрены некоторые вопросы, касающиеся современных тенденций совершенствования внутригосударственных и международно-правовых механизмов защиты экологических прав, учитывая сформировавшуюся в этой связи судебную практику.

Можно констатировать, что действующим законодательством РА не установлены случаи и порядок реализации заинтересованными общественными организациями права на обращение в суд в связи с нарушенными правами других лиц, а в условиях существующего правового регулирования в судебных актах, вынесенных в последние годы, положениям законодательных актов давались неоднородные толкования, и обусловленная этим судебная практика не созвучна современным тенденциям развития в связи с указанной проблемой. С этой связи остается актуальным вопрос разработки и внедрения таких правовых регулирований, которые будут в полной мере соответствовать современным международным стандартам и вытекать из тех документов, к которым присоединилась РА.

## THE DEMAND FOR THE BASIS OF LEGAL DEFENSE OF ENVIRONMENTAL RIGHTS IN THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF CONTEMPORARY INTERNATIONAL DEVELOPMENTS

**Edgar Shatiryan**

*Associate Professor at the YSU Chair of Constitutional Law,  
Candidat of Legal Sciences*

In the Republic of Armenia the issues concerning NGOs' legal standing before the court, especially from the perspective of "actio popularis" institution, have gained actuality recently which is conditioned by the judicial procedures of challenging administrative acts by the NGOs, most of which are environmental organizations. It should be noted that the judicial acts in this respect do not manifest necessary coherence in their application of laws, and the decisions of the RA Constitutional court on the given subject matter are interpreted differently. It is worth mentioning that the fundamental issues existing in this sphere as well as controversial views thereof are inherent not only in the Republic of Armenia but also in a range of foreign states, which further highlights the actuality of those fundamental issues and the necessity of the formation of a coherent law enforcement practice based on the results of their comprehensive study.

Within the frames of the present article we referred to the contemporary tendencies of improvement of intrastate and some international – legal institutions directed to the defense of environmental rights taking into account the existing judicial practice.

To conclude, it can be stated that the RA legislation in force does not define the cases and procedure of the exercise of the right of concerned public organizations to bring cases before the court in respect to the violation of the rights of others, and in case of current legal regulations the provisions of legislative acts were given different interpretations in judicial acts made during the last years, therefore the established judicial practice is not in line with the current development trends concerning the subject-matter. In this regard, development and implementation of legal regulations corresponding to contemporary international standards and based on the documents that Republic of Armenia joined, is actual.

**Բանալի բառեր** – *հասարակական կազմակերպություն, Օրիուսի կոնվենցիա, դատավարական իրավասուբյեկտություն, դատական պրակտիկա, սահմանադրական դատարան, բավականաչափ շահագրգռվածություն, իրավունք, շահ, արդարադատության մատչելիություն:*

**Ключевые слова** - *общественная организация, Орхусская конвенция, процессуальная правосубъектность, судебная практика, Конституционный Суд, достаточная заинтересованность, право, интерес, широкий доступ к правосудию.*

**Key words** – *Non-governmental organization, Aarhus Convention, Legal standing before the court, judicial practice, Constitutional court, sufficient interest, right, interest, access to justice.*

## ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-Ի ՀԱՄԱՐ

### Հեղինակ Հախվերդյան

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս,*

*ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի գիտատուտումնական*

*կենտրոնի կրտսեր գիտաշխատող*

Էկոլոգիական ապահովագրության՝ որպես շրջակա միջավայրի պահպանության գործիքի հիմնական գործառույթներն են վնասի կանխարգելումը (որպես ռիսկերի կառավարման բաղադրիչ) և ապահովագրական դեպքի հետևանքով վնաս կրած անձանց հատուցում տրամադրելը: Գաղտնիք չէ, սակայն, որ կանխարգելման խնդիրն ապահովագրության շրջանակներում օբյեկտիվորեն նվազ ուշադրության է արժանանում, և առավելապես շեշտադրվում է վնաս կրած անձանց պատշաճ հատուցում տրամադրելու հարցը: Այս մոտեցումն է դրսևորվում նաև գիտական աղբյուրներում, քանի որ ապահովագրության մեխանիզմը, ըստ էության, ամբողջ ծավալով սկսում է գործել ապահովագրական դեպքի վրա հասնելու պարագայում:

Ապահովագրական հատուցման կառուցակարգը քննարկելիս պետք է նկատի ունենալ այն ճշմարտությունը, որ հատուցման արդյունավետությունը չի կարող գնահատվել՝ հիմք ընդունելով միայն տրամադրվող հատուցման չափը, այլ պետք է հաշվի առնել նաև ապահովագրական տվյալ ծածկույթի շրջանակներում ընդգրկվող վնասները և դրանց առանձնահատկությունները: Այս առնչությամբ դժվար է չհամաձայնել այն դիրքորոշման հետ, որ էկոլոգիական ապահովագրության դեպքում հատուցման ենթակա վնասների ընդլայնման միտումն անհրաժեշտաբար հանգեցնում է հատուցման ենթակա գումարների մեծացման<sup>1</sup>, ինչը իր հերթին պետք է արադարացված լինի հատուցման հստակ կառուցակարգի գործառնամբ:

Էկոլոգիական ապահովագրության պոլիսները, որպես ընդհանուր կանոն, հնարավորություն են տալիս հատուցելու ոչ միայն վթարային աղտոտման, այլ նաև բացասական ազդեցությունների տևական կուտակման հետևանքով շրջակա միջավայրին պատճառված վնասները: Բացի այդ, ապահովագրական պոլիսի գործողության ընթացքում հատուցվում են մարդկանց կյանքին և առողջությանը, ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքին պատճառված վնասները, որոնք առաջ են եկել շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության հետևանքով<sup>2</sup>: Այնուամենայնիվ պետք է նշել, որ ներկայումս գոյություն չունի նշված վնասների համալիր հաշվարկման միասնական մեթոդիկա, թեև որոշ երկրներում այդպիսիք մշակելու փորձեր արվում են: Հիմնական դժվարությունն այն է, որ քննարկվող դեպքերում վնասների ի հայտ գալը հստակ սահմանափակված չէ ժամանակով և աշխարհագրական

<sup>1</sup> St' u Hui, W. Recent Developments in the EU Marine Oil Pollution Regime // Prevention and Compensation of Marine Pollution Damage: Recent Developments in Europe, China and the U.S.A. Kluwer Law International, 2006, N 1-23, 21-2, էջ 13:

<sup>2</sup> St' u Заключительный технический отчет. Блок деятельности 13. Экологическая ответственность и экологическое страхование. - М. : апрель 2008, июль 2009, էջ 65:

տարածքով<sup>1</sup>:

Թեև էկոլոգիական ապահովագրության շրջանակներում դիտարկվող վնասներն ամենատարբեր դրսևորումներ կարող են ունենալ, գիտության մեջ մշակվել է դրանց որոշակի դասակարգում, որի չափանիշը ապահովագրական դեպքի հետևանքով բացասական ներգործության ենթակա օբյեկտներն են: Եվ այսպես, ըստ նշված դասակարգման՝ վնասների տեսակներն են.

1. *էկոլոգիական*, որն արտահայտվում է շրջակա միջավայրի և դրա առանձին տարրերի աղտոտմամբ, սպառմամբ, որակական և քանակական բացասական փոփոխություններով, ինչպես նաև վնասակար ֆիզիկական ներգործություններով,

2. *մարդկային*, այսինքն՝ մահ, առողջությանը պատճառված ֆիզիոլոգիական կամ գենետիկական վնաս,

3. *գույքային*, որը դրսևորվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականությանը պատճառված վնասի ձևով (ոչնչացում, վատթարացում, արժեքի նվազում և այլն):

Գտնում ենք, որ վերոգրյալ դասակարգումը մեթոդապես ճիշտ է արտացոլում էկոլոգիական ապահովագրության շրջանակներում դիտարկվող ապահովագրական դեպքերը վրա հասնելիս հնարավոր վնասների կառուցվածքը: Հետևաբար, հենց այս դասակարգումն ենք հիմք ընդունել ապահովագրական հատուցման կառուցակարգի առանձնահատկությունները դիտարկելիս:

**Ապահովագրական հատուցումը շրջակա միջավայրին պատճառված վնասի դեպքում:** Հաշվի առնելով էկոլոգիական վնասի առանձնահատկությունները և այն իրողությունը, որ ոչ միշտ է հնարավոր վերականգնել այն, կարևոր ենք համարում համասեռ հատուցում նախատեսելու փոխարեն որդեգրել այնպիսի մոտեցում, որը թույլ կտա ապահովագրական ծածկույթի սահմաններում առանձնացնել հատուցման հետևյալ տեսակները.

1. *Առաջնային հատուցում*, որն ուղղված է շրջակա միջավայրի և դրա տարրերի վիճակը բարելավելուն՝ վերադարձնելով այն ապահովագրական դեպքին նախորդած վիճակին: Այս առնչությամբ կարևոր է, որ ապահովագրական պոլիս ձեռք բերելիս ամրագրել հնարավոր ազդեցության ենթակա տարածքում շրջակա միջավայրի և դրա տարրերի վիճակը, ներառյալ՝ կենդանական և բուսական աշխարհը, բնական օբյեկտները և համալիրները<sup>2</sup>: Կարևոր է պատշաճ մոնիտորինգի իրականացումը:

Այդուհանդերձ, շրջակա միջավայրի նախնական որակի վերականգնումը ոչ միշտ է հնարավոր. հաճախ շրջակա միջավայրի և դրա առանձին տարրերի փոփոխություններն անդառնալի են լինում, ուստի այս պարագայում անհրաժեշտություն է առաջանում այլ եղանակով վերականգնել վնասները:

2. *Փոխարինող հատուցում*. սա հենց այն տեսակն է, որը կիրառելի է առաջինի անհնարինության դեպքում: Օրինակ, հրդեհից այրված անտառի վերականգնումն անհնար է, և փոխարինող հատուցումն ուղղված կլինի նոր անտառ հիմնելուն:

3. *Լրացնող հատուցում*, որն ուղղված է մինչև բնական միջավայրի նախկին վիճակի վերականգնման կամ փոխարինող աշխատանքների կատարման ավարտը կրած վնասները ծածկելուն:

<sup>1</sup> Տե՛ս Шинкаренко И. Э. Страхование ответственности: справочник. 2-е изд., испр. и доп. – М.: Аникл, 2006, էջ 291:

<sup>2</sup> Տե՛ս Wayne Harrington, Dorothée Prunier. A guide to environmental liability in Europe. 2011, էջ 16:



Մեր կողմից առաջարկվող վերոգրյալ բաժանումն ունի ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն: Այն հնարավորություն կտա յուրաքանչյուր դեպքի առանձնահատկություններից ելնելով՝ ապահովագրական ծածկույթի սահմաններում որոշել հատուցման առանձին տեսակների համար նախատեսված գումարների համամասնությունը և մշակել ռիսկերի կառավարման արդյունավետ ծրագիր: Իհարկե, հաճախ հատուցման նշված տեսակները, կախված պատճառված վնասի մասշտաբներից և բնույթից, կարող են կիրառվել զուգահեռաբար:

**Ապահովագրական հատուցումը մարդու կյանքին և առողջությանը պատճառված վնասի դեպքում:** Մարդու կյանքը և առողջությունը բարձրագույն արժեքներ են, և դրանց պատշաճ պաշտպանությունը նաև էկոլոգիական ապահովագրության համատեքստում արժանի է հատուկ ուշադրության: Ստորև ներկայացվող դիտարկումների հիմքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի<sup>1</sup> 60-րդ գլխի համապատասխան կանոններն են, որոնք դիտարկվում են ապահովագրական հատուցում տրամադրելու լույսի ներքո:

Ինչպես իրավացիորեն նկատում է Գ.Հ. Բեքմեյանը, կյանքը և առողջությունը՝ որպես արժեքներ, անվերականգնելի են, բացառությամբ այն դեպքերի, երբ առողջությունը հնարավոր է վերականգնել բժշկական միջամտության շնորհիվ<sup>2</sup>: Շրջակա միջավայրի անբարենպաստ պայմանների ներգործության արդյունքում առողջությանը պատճառված վնասը կարող է արտահայտվել օրգանիզմի կենսական և կեսաբանական գործառնությունների լրիվ կամ մասնակի կորստի ձևով: Անբարենպաստ պայմանների ներքո պետք է հասկանալ էկոլոգիապես վնասակար յուրաքանչյուր ներգործություն, այդ թվում՝ քիմիական և ռադիոակտիվ աղտոտվածություն, աղմուկ, թրթռում, մագնիսական դաշտերի ազդեցություն, ֆիզիկական և կենսաբանական այլ վնասակար ազդեցություններ:

Կարծում ենք՝ ավելորդ է քննարկման առարկա դարձնել էկոլոգիական ապահովագրության շրջանակներում կյանքին և առողջությանը պատճառված վնասի **լրիվ ծավալով** հատուցման սկզբունքն այն պարզ պատճառով, որ ապահովագրությունը՝ որպես քաղաքացիաիրավական պատասխանատվության ինստիտուտի համեմատությամբ իրավունքների պաշտպանության առավել հուսալի մեխանիզմ, որևէ պարագայում չի կարող առաջարկել նվազ բարենպաստ պայմաններ: Այս առնչությամբ կարևոր է նկատի ունենալ նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի<sup>3</sup> 1084-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված սկզբունքային պայմանը, որի համաձայն՝ տուժողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման գումարը կյանքի թանկացման դեպքում, օրենքով սահմանված կարգով, ենթակա է ինդեքսավորման: Այս մոտեցման արտացոլումն էկոլոգիական ապահովագրության հարաբերություններում թույլ կտա տևական ժամանակի ընթացքում երաշխավորել տրամադրվող հատուցման համարժեքությունը կյանքի պայմաններին: Այս ամենի հետ միասին պետք է նշել, որ հատուցման ենթակա են միայն այն վնասները, որոնք կարող են ստանալ դրամական արտահայտություն: Իսկ գիտության զարգացման ներկայիս մակարդակը նման հնարավորություն չի ընձեռում բոլոր տեսակի վնասների, օրի-

<sup>1</sup> Ընդունվել է 05. 05. 1998թ. , ուժի մեջ է մտել 01. 01. 1999թ. , ՀՀՊՏ 1998. 08. 10/17(50):

<sup>2</sup> Տե՛ս **Բեքմեյան Գ. Հ.**, Անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցումը: Եր.: Երևանի համալս. հրատ. , 2004, էջ 68:

<sup>3</sup> Ընդունվել է 05. 05. 1998թ. , ուժի մեջ է մտել 01. 01. 1999թ. , ՀՀՊՏ 1998. 08. 10/17(50):

նակ՝ մարդու գենետիկ հատկանիշների փոփոխության համար<sup>1</sup>:

Առողջությանը պատճառված վնասն է. Արաշինը դասակարգում է հետևյալ տեսակների.

1. վնասվածք,
2. մասնագիտական հիվանդություն,
3. առողջության այլ քայքայում<sup>2</sup>:

Էկոլոգիական ապահովագրության շրջանակներում, բնականաբար, մասնագիտական հիվանդությունների հարցը վերաբերելի չէ: Մյուս երկու դեպքում հատուցման վերականգնողական գործառույթն արտահայտվում է նյութական վնասների փոխհատուցմամբ, որոնք առաջացել են ոչ նյութական բարիքներին վնաս պատճառվելու հետևանքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի<sup>3</sup> 1078-րդ հոդվածը սահմանում է, որ քաղաքացուն հաշմոթյուն կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելու դեպքում հատուցման ենթակա են տուժողի կորցրած աշխատավարձը, եկամուտը, որը նա ստանում էր կամ կարող էր ստանալ, ինչպես նաև առողջության քայքայման հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերը՝ ներառյալ բուժվելու, լրացուցիչ սննդի, դեղամիջոցներ ձեռք բերելու, պրոթեզավորման, կողմնակի խնամքի, առողջարանական բուժման, հատուկ տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու ծախսերը, եթե պարզվել է, որ տուժողն ունի օգնության ու խնամքի նման տեսակների կարիք և չունի դրանք անվճար ստանալու իրավունք: Իսկ նշված հարցերի պատասխաններն ստացվում են բժշկասոցիալական փորձաքննությամբ, որը կարող է իրականացվել տուժողի, դատարանի, դատախազության և իրավապահ այլ մարմինների նախաձեռնությամբ:

ՀՀ քաղ. օր. 1078-րդ հոդվածն ամրագրում է, որ տուժողն իրավունք ունի ստանալ կորցրած աշխատավարձի կամ եկամտի հատուցում: Այստեղ կարևորվում է այն հանգամանքը, թե ինչ սկզբունքով է հաշվարկվում փոխհատուցման ենթակա կորցրած աշխատավարձի չափը: Համաձայն ՀՀ քաղ. օր. 1079-րդ հոդվածի՝ կորցրած աշխատավարձի (եկամտի) հատուցման ենթակա չափը որոշվում է միջին աշխատավարձից (եկամտից), որը նա ստացել է մինչև հաշմոթյունը կամ առողջության այլ վնասվածքը կամ աշխատունակության կորուստը: Այդ տոկոսները որոշվում են տուժողի մասնագիտական աշխատունակության կորստի, իսկ մասնագիտական աշխատունակության բացակայության դեպքում՝ ընդհանուր աշխատունակության կորստի աստիճանին համապատասխան: Այս առնչությամբ անձի իրավունքների լիարժեք պաշտպանության տեսանկյունից արժեքավոր մոտեցում է արտահայտում Մ. Շիմինովան. մասնագիտական աշխատունակության մասնակի կորստի դեպքում պետք է հաշվարկվի միայն մասնագիտական աշխատունակության կորստի աստիճանը և ոչ ընդհանուրը, որևէ կարող է վնասված լինել<sup>4</sup>: Առողջության քայքայման դեպքում աշխատունակության կորուստը կարող է լինել մշտական և ժամանակավոր, լրիվ կամ մասնակի<sup>5</sup>, և յուրաքանչյուր դեպքում ապահովագրական հատուցումը պետք է համապատասխանի անհրաժեշտ ծախսերի ծավալին:

Վերոհիշյալ ծախսերի հատուցման գումարները կարող են հատկացվել նաև ա-

<sup>1</sup> Տե՛ս Шинкаренко И.Э. նշվ. աշխ., էջ 292:

<sup>2</sup> Տե՛ս Абашин Э., Возмещение вреда. –М.: 2000, էջ 37:

<sup>3</sup> Ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

<sup>4</sup> Տե՛ս Шиминова М., Возмещение вреда причиненного здоровью. –М.: 1972, էջ 62:

<sup>5</sup> Տե՛ս Абашин Э., նշվ. աշխ., էջ 40:

պագա ժամանակի համար՝ բժշկական փորձաքննության հիման վրա որոշվող ժամկետների շրջանակներում, ինչպես նաև համապատասխան ծառայությունների և գույքի արժեքի նախապես վճարման անհրաժեշտության դեպքում՝ ներառյալ ուղեգրերի ձեռքբերումը, տրանսպորտային հատուկ միջոցներով ուղևորությունները և այլն: Ցավոք, ներկայումս ՀՀ-ում ընդունված չէ որևէ նորմատիվ ակտ, որը կկարգավորեր կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցման կարգի առավել մանրամասն դրույթներ, մասնավորապես՝ ո՞ր պահից պետք է սկսվի վնասի հատուցումը, ի՞նչ կարգով պետք է վճարվեն այդ գումարները և այլն<sup>1</sup>: Այս առումով արժեքավոր կարող է լինել ԽՍՀՄ փորձը, մասնավորապես՝ 1984 թ. ընդունված վնասի հատուցման կանոնները, որը վերլուծելիս Ս. Ե. Դոնցովը և Վ. Վ. Գլյանցևը ուշադրության են արժանացնում հետևյալ մոտեցումը. տուժած աշխատողներին և ծառայողներին հատուցում է տրամադրվում այն օրվանից, երբ նրանք աշխատանքային վնասի հետևանքով զրկվել են իրենց աշխատավարձից<sup>2</sup> (սա, ըստ էության, հենց վնասը պատճառվելու պահն է, և տրամադրվող հատուցումը պետք է հաշվարկվի հենց այդ ժամանակվանից սկսած):

Այն դեպքում, երբ ապահովագրական դեպքի հետևանքով արձանագրվել է մահ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի<sup>3</sup> 1081-րդ հոդվածի տրամաբանությամբ, հատուցում ստանալու իրավունք կվերապահվի հետևյալ անձանց՝ հիմք ընդունելով կերակրողին կորցնելու փաստը.

1. անչափահասներին՝ մինչև նրանց 18 տարեկան դառնալը,

2. 18 տարեկանից բարձր տարիքի սովորողներին՝ մինչև ցերեկային ուսուցման ձևով ուսումնական հաստատությունում ուսման ավարտը, սակայն ոչ ավելի, քան մինչև 23 տարեկան դառնալը,

3. 55 տարեկանից մեծ կանանց և 60 տարեկանից մեծ տղամարդկանց՝ ցմահ,

4. հաշմանդամներին հաշմանդամության ժամանակ,

5. ծնողներից մեկին, ամուսնուն կամ ընտանիքի այլ անդամին, որն զբաղված է մահացածի խնամքի տակ գտնվող նրա երեխաների, թոռների, եղբայրների և քույրերի խնամքով՝ մինչև վերջիններիս տանջորս տարեկան դառնալը:

Հատուցման ենթակա են նաև մահացածի հուղարկավորության հետ կապված ծախսերը, որոնք տրվում են դրանք կատարած անձանց:

Վերոգրյալ կանոնները կազմում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ անձի կյանքին և առողջության պատճառված վնասի հատուցման ինստիտուտի հիմքը, և էկոլոգիական ապահովագրության պարտադիր ձևի համատեքստում դրանց լրիվ ծավալով ապահովումը պետք է լինի անվիճելի պայման: Ինչ վերաբերում է կամավոր ապահովագրությանը, ապա այստեղ ապահովադիրն ազատ պետք է լինի որոշակի ընդհանուր սկզբունքների հետևելով՝ իր հայեցողությամբ որոշելու ապահովագրվող ռիսկերի և հատուցման ծավալը:

**Ապահովագրական հատուցումը քաղաքացիների և իրավաբանական անձանց գույքին պատճառված վնասի դեպքում:** Վնասների այս խմբի հատուցումը, ի տարբերություն նախորդ երկուսի, հաշվարկների տեսանկյունից առանձնակի բարդություն չի ներկայացնում, և էկոլոգիական ապահովագրության պոլիսի շրջանակներում հա-

<sup>1</sup> Տե՛ս **Քերմեյան Գ. Հ.**, նշվ. աշխ., էջ 96:

<sup>2</sup> Տե՛ս **Донцов С.Е., Глянцев В.В.**, Возмещение вреда по советскому законодательству. –М., 1990, էջ 196:

<sup>3</sup> Ընդունվել է 05. 05. 1998թ., ուժի մեջ է մտել 01. 01. 1999թ., ՀՀՊՏ 1998. 08. 10/17(50):

տուցումը պետք է տրամադրվի ապահովագրական ընկերության կամ դատարանի կողմից պատճառված վնասի փաստը հաստատված համարելու դեպքում:

**Ապահովագրական ծածկույթի չափը:** Էկոլոգիական ապահովագրության շրջանակներում տրամադրվող ապահովագրական ծածկույթի չափը միանշանակ կարելի է համարել համակարգի արդյունավետության պայմաններից մեկը: Այդուհանդերձ, այստեղ մենք իհարկե խնդիր չենք դնում սահմանելու դրամական մեծություններ, այլ առավել կարևորում ենք որոշակի մոտեցումների հստակեցումը: Իսկ մինչ դրանց անցնելը որպես ելակետ ընդունենք այն ճշմարտությունը, որը անկախ ծածկույթի չափից՝ դրա վերին շեմը պետք է սահմանափակ լինի, այսինքն՝ ապահովագրական պայմանագիր կնքելու պահին պետք է սահմանվի ապահովագրական ծածկույթի առավելագույն չափ՝ երրորդ անձանց պատճառված վնասների հատուցման գծով ապահովագրողի համար անկանխատեսելի պարտավորությունների առաջացումը բացառելու, ինչպես նաև ապահովագրավճարները ճիշտ հաշվարկելու համար: Ընդ որում, ապահովագրավճարների չափը, հիմնվելով ռիսկերի վրա, պայմանավորում է նաև ապահովագրական ծածկույթի վերին շեմը<sup>1</sup>:

Նշվածի հետ միաժամանակ առաջարկում ենք ընդունվելիք «Պարտադիր էկոլոգիական ապահովագրության մասին» ՀՀ օրենքով ընդհանուր ծածկույթի սահմաններում նախատեսել նաև հետևյալ շեմերը.

1. ապահովագրության պայմանագրում ներառված բոլոր ռիսկերի գծով ապահովագրական ծածկույթի վերին շեմ պայմանագրի գործողության ողջ ընթացքում,
2. ապահովագրական ծածկույթի վերին շեմ ապահովագրված առանձին ռիսկերի գծով,
3. ապահովագրական ծածկույթի վերին շեմ յուրաքանչյուր ապահովագրական դեպքի համար,
4. ապահովագրական ծածկույթի վերին շեմ յուրաքանչյուր ապահովագրական դեպքի համար մեկ սուբյեկտին տրամադրվող հատուցման համար:

Մեր կողմից առաջարկվող վերոգրյալ պայմանների շարքը ապահովագրական ծածկույթի շեմը սահմանելու նպատակով կարելի է երկար շարունակել: Իրավաբանական գրականությունում ապահովագրական ծածկույթի առավելագույն շեմը սահմանափակելու մոտեցումը ևս չի վիճարկվում<sup>2</sup>: Այստեղ հարկ է նկատել, որ ՀՀ օրենսդրությանը ծանոթ է առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվության ապահովագրության դեպքում ծածկույթի առավելագույն շեմ սահմանելն առանձին վնասների համար, մասնավորապես՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով<sup>3</sup> սահմանվում են անձի մահվան, առողջությանը կամ երրորդ անձանց գույքին վնաս պատճառելու դեպքում ծածկույթի առավելագույն շեմ: Այստեղ հիմնական մոտեցումը և նպատակը ապահովագրական շուկան կանխատեսելի դարձնելն է՝ իհարկե հաշվի առնելով պատճառված վնասները համարժեք հատուցելու և միևնույն ժամանակ ողջամիտ ապահովագրավճարներ և ռիսկերի կառավարման արդյունավետ ծրագրեր իրականացնելու առաջնահերթութե-

<sup>1</sup> St' u Streamlining the Use of Economic Instruments of Environmental Policy in the Rostov Oblast, Russia, Final Project Report, EAP Task Force Secretariat, CCNM/ENV/EAP(2002)1, OECD, Paris, 2002, էջ 31:

<sup>2</sup> St' u Соотношение права иностранных инвестиций и экологического права: сборник статей / под ред. А.Алиева, С.Крупко, А. Трунка. – М.: Норма, 2012, էջեր 173-174:

<sup>3</sup> Ընդունվել է 18.05.2010թ., ուժի մեջ է մտել 26.06.2010թ., ՀՀՊՏ 2010.06.16/26(760) Հոդ. 644:

յունը:

Ապահովագրական հատուցման կառուցակարգի քննարկման շրջանակներում կարևոր նշանակություն ունի նաև **հատուցում տրամադրելու ժամանակը**, քանի որ հաճախ դրանով են պայմանավորված անդառնալի հետևանքների կանխումը, ինչպես նաև ստեղծված իրավիճակի վատթարացումից խուսափելը:

Էկոլոգիական ապահովագրության շրջանակներում հատուցումները, որպես ընդհանուր կանոն, տրամադրվում են համապատասխան պահանջ ներկայացվելու դեպքում, որի դեպքում պետք է ապացուցվի, որ վնասները պատճառվել են պոլիսում ընդգրկված ապահովագրական պատահարի պատճառով, և այդ դեպքը տեղի է ունեցել պայմանագրի գործողության ընթացքում<sup>1</sup>:

ԵՄ-ում էկոլոգիական ապահովագրության ինստիտուտի գործառնման շուրջ կեսդարյա փորձի արդյունքում ձևավորվել են ապահովագրական դեպքը հայտնաբերելու և դրա մասին ապահովագրողին հայտնելու ստանդարտ ժամկետներ: Եվ այսպես, շրջակա միջավայրի վթարային աղտոտման դեպքում ապահովագրական դեպքը պետք է հայտնաբերվի և արձանագրվի առավելագույնը 7 օրվա ընթացքում, և համապատասխան ծանուցում ներկայացվի ապահովագրողին հայտնաբերվելու օրվանից 30-45 օրվա ընթացքում: Նույնանման ժամկետներ սահմանված են նաև ԱՄՆ-ում<sup>2</sup>:

Առաջին հայացքից 30-45-օրյա ժամկետը կարող է բավականին երկար թվալ մանավանդ այն դեպքում, որ պատճառված վնասները կարող են ունենալ մեծ ծավալներ, և օպերատիվ արձագանքման խիստ անհրաժեշտություն լինի: Սակայն այս ժամկետները միանգամայն ողջամիտ են այն առումով, որ ապահովագրական դեպքի հետևանքով վնաս կրած երրորդ անձինք հաճախ կարող են տեղյակ չլինել ապահովագրի և ապահովագրողի միջև կնքված պայմանագրից և դրա պայմաններից, հատուցման եղանակներից և այլ նրբություններից, որոնք հիմնականում վերաբերում են ապահովագրության պայմանագրի կողմերին: Եվ քանի որ վնաս կրած անձինք տարբեր աղբյուրներից առավել արագ կարող են տեղեկանալ վնաս պատճառած սուբյեկտի վերաբերյալ, հետևաբար համապատասխան պահանջները ներկայացվում են ապահովագրին, որն էլ նշված ժամկետում հաշվետվությունը և ստացված հատուցման պահանջները ներկայացնում է ապահովագրողին: Իրավաբանական գրականությունում նշվում է, որ ապահովագրի համար հույժ կարևորություն ունեն ապահովագրական դեպքի հնարավորինս վաղ արձանագրումը, տուժած երրորդ անձանց պահանջների ստացումը և իրավիճակի համապատասխան գնահատականների հետ միասին ապահովագրական ընկերություններին դրանք ներկայացնելը<sup>3</sup>:

Իհարկե, այստեղ շատ կարևոր է պահանջներ ներկայացնելու իրավունքն առանձին դեպքերի համար նշված ժամկետի ավարտով չսահմանափակելը, քանի որ հաճախ վնասները կարող են ի հայտ գալ ամիսներ և նույնիսկ տարիներ անց: Միա-

<sup>1</sup> St' u Kyriaki Noussia. Environmental Pollution Liability and Insurance Law Ramifications in Light of the Deepwater Horizon Oil Spill. The Hamburg Lectures on Maritime Affairs 2009 & 2010. Volume 23 of the series Hamburg Studies on Maritime Affairs, Hamburg, 2010, էջ 160:

<sup>2</sup> St' u **Dan R. Anderson**. Development of Environmental Liability Risk Management and Insurance in the United States: Lessons and Opportunities Risk Management and Insurance Review. Volume 2, Issue 1, pages 1–23, July 1998, էջեր 12-13:

<sup>3</sup> St' u **Spindel, N.W., Dore, M., Lichtenstein, M.D., Ricci, R.F., Stewart, J.I.** State environmental law handbook series, 7th ed., No. 48. Lowenstein Sandler, 2007, էջ 445:

Ժամանակ գտնում ենք, որ նպատակահարմար է չսահմանփակել վնաս կրած երրորդ անձանց իրավունքը հատուցման պահանջով դիմելու նաև ապահովագրողին: Սակայն բոլոր դեպքերում անհրաժեշտ է որպես հատուցում ստանալու պայման ամրագրել բարեխղճության սկզբունքը. հատկապես ուշ ի հայտ եկած վնասների դեպքում անհապաղ ծանուցել ապահովագրողին և/կամ ապահովագրողին: Ժամկետների պահպանումը հնարավորություն է տալիս նաև առավել հեշտությամբ և ճշգրիտ ստուգել պատճառական կապը ապահովագրական դեպքի և վնասների միջև:

Ինչպես արդեն նշվել է, ապահովագրավճարների հաշվարկման հիմքը ապահովագրվող ռիսկերի առանձնահատկություններն են, իսկ ապահովագրական ծածկույթի չափը ձևավորվում է՝ հիմք ընդունելով ապահովագրավճարները: Բնականաբար, ենթադրվում է, որ յուրաքանչյուր պայմանագրի շրջանակներում հաշվարկված ապահովագրական ծածկույթը պետք է բավարար լինի հատուցելու ապահովագրական դեպքի հետևանքով պատճառված բոլոր վնասները, այդ թվում՝ շրջակա միջավայրին, մարդկանց կյանքին և առողջությանը, քաղաքացիների և իրավաբանական անձանց գույքին հասցված վնասները: Սակայն չի կարելի բացառել այն դեպքերը, երբ աղտոտման ծավալները և վրա հասած հետևանքները այնքան ընդգրկուն և լայնածավալ լինեն, որ դրանց գումարը գերազանցի ապահովագրական ծածկույթի վերին շեմը: Եվ այստեղ հարց է առաջանում, թե ինչ մոտեցում է անհրաժեշտ որդեգրել հասանելի ծածկույթի սահմաններում վնասների արդարացի հատուցումն ապահովելու համար, այլ կերպ ասած՝ որ վնասները պետք է համարվեն առաջնահերթ հատուցման ենթակա, և որոնք՝ երկրորդական:

Կարծում ենք՝ բացակայում է մարդու կյանքի և առողջության՝ որպես բարձրագույն արժեքների առաջնահերթության վերաբերյալ այլ կարծիք դիտարկելու անհրաժեշտությունը: Հետևաբար նշված վնասների հատուցումը միանշանակ պետք է կատարվի առաջնահերթության կարգով:

Միևնույն ժամանակ գտնում ենք, որ հատուկ քննարկման առարկա է շրջակա միջավայրին պատճառված վնասների հատուցման հերթի հարցը: Խնդիրն այն է, որ շրջակա միջավայրի վրա առանձին բացասական ազդեցությունները ժամանակին չկանխելն ու չչեզոքացնելը անխուսափելիորեն կարող են բերել նոր մարդկային կորուստների կամ զանգվածային հիվանդությունների: Հետևաբար կարծում ենք, որ նման գնահատում ունեցող վնասների հատուցումը ևս պետք է կատարվի առաջնահերթության կարգով՝ մարդկանց կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցման հետ միաժամանակ: Կասկածից վեր է, որ դրանք իրենց կարևորությամբ գրեթե նույնանում են:

Ինչ վերաբերում է շրջակա միջավայրի վրա այն բացասական ներգործություններին, որոնց հետևանքների վերացումը զիջում է հրատապությամբ, ապա դրանց հատուցումը կարող է տրամադրվել առաջին խմբում ընդգրկված վնասները լրիվ չափով հատուցելուց հետո, եթե դեռևս չի սպառվել ապահովագրական ծածկույթը:

Եվ երրորդ խմբում վերջապես ընդգրկված կլինեն քաղաքացիների և իրավաբանական անձանց գույքին պատճառված վնասները, որոնք, անկասկած, իրենց կարևորությամբ և կենսական նշանակությամբ զիջում են առաջին երկուսին: Հետևաբար, այս դեպքում հատուցումը հնարավոր կլինի նախորդ հերթի վնասներն ամբողջությամբ հատուցելուց հետո միայն:

# ОБОСНОВАНИЕ МЕХАНИЗМА СТРАХОВОГО ВОЗМЕЩЕНИЯ В РАМКАХ ЭКОЛОГИЧЕСКОГО СТРАХОВАНИЯ, ВНЕДРЯЕМОГО В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Егине Ахвердян

*Преподаватель кафедры гражданского процессуального права ЕГУ*

Настоящая статья посвящена анализу механизма страхового возмещения в рамках экологического страхования - с целью дальнейшего рассмотрения вопросов по его внедрению в нашей стране. Основываясь на состоянии действующего регулирования института возмещения вреда в Гражданском Кодексе РА и его основных принципов, автор предлагает установить специфическую последовательность возмещения экологического и опосредованного этим вреда жизни и здоровью людей, а также имуществу, с учетом особенностей страхового случая и вероятности расширения его последствий. В частности, разработан подход возмещения вреда в следующей последовательности: 1. вред, причиненный жизни и здоровью людей, а также существенный экологический вред, который в дальнейшем может привести к нанесению вреда жизни и здоровью, 2. вред, причиненный окружающей среде, и, 3. имущественный вред.

## JUSTIFICATION OF THE REIMBURSEMENT MECHANISM IN THE CONTEXT OF ENVIRONMENTAL INSURANCE TO BE ENACTED IN THE REPUBLIC OF ARMENIA

Heghine Hakhverdyan

*Lecturer at the YSU Chair of Civil Procedure*

This article is devoted to scrutinizing the mechanism of insurance reimbursement within the context of environmental insurance to be enacted in Armenia. Based on the current regulation of reimbursement of damages in the Civil Code of RA and the main principles underlying this mechanism, the author proposes specific sequence of reimbursement of damages, taking into consideration the peculiarities of insurance accident and possible enlargement of the impacts. In particular, an approach is elaborated to reimburse damages giving preference to: first, damages to human life and health, as well as severe damage to the environment which may lead to further damages caused to people, second, damages to the environment, and, third, material loss.

**Բանալի բառերը՝** էկոլոգիական ավտոմեքանիզմ, ավտոմեքանիզմի պատահար, ավտոմեքանիզմի ծածկույթ, վնաս, հատուցում:

**Ключевые слова:** экологическое страхование, страховой случай, страховое покрытие, риск, вред, возмещение.

**Key words:** environmental insurance, insurance accident, insurance coverage, risk, damages, reimbursement.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՐԱՔՎԵ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

### Ռուսլան Մարանդյան

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ*

Հանրաքվեի կազմակերպումն ու անցկացումը հանրային իշխանության պարտականությունն են, որոնց ոչ պատշաճ կատարումը կարող է հանգեցնել համահասարակական որոշումների կայացման գործում այդ ինստիտուտի դերի նվազմանը, որը հիմնականում դրսևորվում է ժողովրդավարության արմատավորման բացթողումներով, ժողովրդաիշխանության ինստիտուտների կարևորության թերագնահատմամբ, անմիջական ժողովրդաիշխանությունը ներկայացուցչական ժողովրդաիշխանությունից կախվածության մեջ դնելու ձգտումներով:

Հանրաքվեի կազմակերպման և անցկացման արդյունավետության ապահովման գործում էական դեր ունեն նաև օրենսդրական կարգավորումները, որոնց սոցիալ-իրավական հիմնավորվածությունը և լիարժեքությունը կարող են դառնալ հանրաքվեի արդյունավետ կիրառման գրավական՝ նպաստելով ժողովրդի կամքի բացահայտմանը և հանրային վերահսկողության գործում նրա դերի բարձրացմանը: Այս համատեքստում ուշադրության են արժանի որոշ հիմնախնդիրներ, որոնց օրենսդրական ներկայիս լուծումները չեն ապահովում հանրաքվեի արդյունավետ կազմակերպում և անցկացում:

Ընտրողների կողմից հանրաքվե նախաձեռնելու իրավունքի իրականացման համար կարևոր է հանրաքվե նշանակելու նպատակով անհրաժեշտ ստորագրությունների վավերականության ստուգումը: Այս կապակցությամբ «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը (3-րդ մաս) սահմանում է. «Ստորագրությունների վավերականությունը ճշտվում է տեղական հանրաքվեի նշանակման համար անհրաժեշտ ստորագրությունների ընդհանուր թվի ոչ պակաս, քան 2 տոկոսի ընտրանքային ստուգման միջոցով»<sup>1</sup>:

Քննարկվող խնդրի առնչությամբ ժողովրդավարական ընտրությունների խորհրդի կողմից 2006 թ. դեկտեմբերի 16-ին և «Իրավունքի միջոցով հանուն ժողովրդավարության» Եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) կողմից 2007 թ. մարտի 17-ին ընդունված «Հանրաքվեների անցկացման խորհրդատվելի նորմերի ժողովածու»-ի «Հանրաքվեների անցկացման ուղեցույց»-ի 3-րդ բաժինը (4-րդ կետի «բ» ենթակետ) սահմանում է, որ պետք է ստուգվեն բոլոր ստորագրությունները: Իսկ նշված ժողովածուի Բացատրական հուշագրի 3-րդ բաժինը (39-րդ կետ) ամրագրում է, որ հանրաքվե անցկացնելու կապակցությամբ ժողովրդի նախաձեռնությունը չպետք է իրականացվի կամ արգելվի միայն ստորագրությունների որոշ էջերի ընտրանքային ստուգման արդյունքների հիման վրա, որոնցում կարող են պարունակվել կամ, հակառակը, չպարունակվել մեծ քանակի

<sup>1</sup> Տե՛ս «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը (ՀՀՊՏ N11 (186), Հոդ. 174, 01. 04. 2002):



անվավեր ստորագրություններ, քանի որ այլ էջերում կարող են առկա լինել այդպիսիք: Ծայրահեղ դեպքում կարելի է հրաժարվել որոշ ստորագրությունների ստուգումից, եթե առկա են օրենքով պահանջվող քանակի վավեր ստորագրություններ<sup>1</sup>: Այսինքն՝ Վենետիկի հանձնաժողովը բացառել է պատահականության գործոնի դերը ժողովրդի նախաձեռնության օրինականության գնահատման գործում: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ նպատակահարմար է «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովը ստուգում է բոլոր ստորագրությունների վավերականությունը, որի վերաբերյալ կազմվում է արձանագրություն: Հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովը կարող է չստուգել բոլոր ստորագրություններն այն դեպքում, եթե արդեն ստուգվել և վավեր են ճանաչվել տեղական հանրաքվեի անցկացման համար օրենքով նախատեսված անհրաժեշտ թվով ստորագրություններ»:

Հանրաքվե կազմակերպելու և անցկացնելու հիմնախնդիրների շարքում կարևորվում է նաև հանրաքվեի հանձնաժողովների կազմավորման կարգը, որը թույլ կտա ապահովել դրանց գործունեության անկախությունը: «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը (1-ին և 2-րդ մասեր) սահմանում է, որ հանրաքվեի կենտրոնական, ընտրատարածքային և տեղամասային հանձնաժողովներն են ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով կազմավորված համապատասխան ընտրական հանձնաժողովները<sup>2</sup>: ՀՀ ընտրական օրենսգրքի 42-44-րդ հոդվածների համաձայն՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին և անդամներին ընտրում է ԱԺ-ն, տարածքային ընտրական հանձնաժողովի անդամներին նշանակում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը, իսկ տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամ նշանակում են Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները)՝ մեկական անդամ, եթե խմբակցությունների թիվը մեծ է 4-ից, և երկուական անդամ, եթե խմբակցությունների թիվը փոքր է 5-ից, ինչպես նաև՝ համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովը՝ երկու անդամ<sup>3</sup>:

Անդրադառնալով հանրաքվեների հանձնաժողովներին՝ «Հանրաքվեների անցկացման ուղեցույց»-ի 2-րդ բաժնի 3.1-րդ կետը («b» ենթակետ) սահմանում է, որ հանրաքվեի կազմակերպման և անցկացման նկատմամբ վարչական մարմինների կողմից անկողմնակալ վերաբերմունքի՝ ձևավորված ավանդույթների բացակայության դեպքում բոլոր մակարդակներում՝ համապետականից մինչև տեղամասային, պետք է ստեղծվեն հանրաքվեի անկախ և անկողմնակալ հանձնաժողովներ<sup>4</sup>: Մասնավորապես, հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովում պետք է ընդգրկվեն՝

<sup>1</sup> St'u Code of Good Practice on Referendums (Adopted by the Council for Democratic Elections at its 19<sup>th</sup> meeting (Venice, 16 December 2006) and the Venice Commission at its 70<sup>th</sup> plenary session (Venice, 16-17 March 2007, CDL-AD (2007)008, Strasbourg, 19 March 2007), pp. 12, 21 (Հասանելի աղբյուրը՝ [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2007\)008-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2007)008-e)):

<sup>2</sup> St'u «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը (ՀՀՊՏ N32 (164), Հոդ. 758, 18. 10. 2001):

<sup>3</sup> St'u ՀՀ ընտրական օրենսգրքը (ՀՀՊՏ N42 (1222), Հոդ. 456, 30. 05. 2016):

<sup>4</sup> St'u Code of Good Practice on Referendums (Adopted by the Council for Democratic Elections at its 19<sup>th</sup> meeting (Venice, 16 December 2006) and the Venice Commission at its 70<sup>th</sup> plenary session (Venice, 16-17 March 2007, CDL-AD (2007)008, Strasbourg, 19 March 2007), p. 10 (Հասանելի աղբյուրը՝ տե՛ս վերևում):

ա) նվազագույնը մեկ դատավոր կամ այլ անկախ իրավաբան,  
 բ) խորհրդարանում ներկայացված կամ, առնվազն, որոշ քանակի ձայներ ստացած կուսակցությունների լիազոր ներկայացուցիչները: Վերջիններս պետք է տիրապետեն ընտրությունների կազմակերպման ու անցկացման վերաբերյալ մասնագիտական գիտելիքների:

Նշված նորմում, որպես ոչ պարտադիր պայման, նախատեսվում է հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի կազմում ներքին գործերի նախարարության ներկայացուցչի և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությունը<sup>1</sup>:

Գնահատելով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի, հետևաբար՝ նաև հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի կազմավորման՝ գործող կարգի արդյունավետությունը հանձնաժողովի անկախության ապահովման տեսանկյունից՝ կարծում ենք, որ պետք է ոչ թե հաշվի առնել խորհրդարանական մեծամասնության կարծիքը, այլ խորհրդարանում ներկայացված բոլոր կուսակցություններին հնարավորության տալ՝ տվյալ հանձնաժողովի կազմում նշանակելու իրենց լիազոր ներկայացուցիչներին:

Հանրաքվեի հանձնաժողովներում կուսակցությունների հավասար ներկայացվածության սկզբունքին անդրադառնում է «Հանրաքվեների անցկացման ուղեցույց»-ի 2-րդ բաժնի 3.1-րդ կետի «ե» ենթակետը<sup>2</sup>, համաձայն որի՝ քաղաքական կուսակցությունների հավասար ներկայացվածությունը կարող է հասկացվել բացարձակ կամ համամասնական հավասարության իմաստով: Այսինքն՝ բացարձակ հավասարության դեպքում բոլոր կուսակցությունները հանրաքվեի բոլոր հանձնաժողովներում պետք է ունենան հավասար թվով ներկայացուցիչներ, իսկ համամասնական հավասարության դեպքում կուսակցության ներկայացուցիչների թիվը որոշվում է ըստ խորհրդարանում կուսակցության ունեցած մանդատների քանակի:

Մեր կարծիքով, առաջնությունը պետք է տրվի բացարձակ հավասարության սկզբունքին, քանի որ խորհրդարանում մեծամասնություն ունեցող կուսակցության (կուսակցությունների) անհարկի մեծ չափի ներկայացվածությունը հանրաքվեի հանձնաժողովներում կարող է խոչընդոտել հավասարակշռված որոշումների կայացումը: Իսկ համամասնական հավասարության սկզբունքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ առաջին սկզբունքի կիրառմամբ հնարավոր չէ ամբողջությամբ համալրել հանձնաժողովի կազմը:

Վերը նշվածի հիման վրա նպատակահարմար է՝

1. ՀՀ Սահմանադրության 194-րդ հոդվածի 1-ին մասից հանել «հանրաքվեները» բառը:

2. ՀՀ Սահմանադրությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ 208.1-րդ հոդվածով.

**«Հոդված 208.1. Հանրաքվեի հանձնաժողովները և դրանց կազմավորման կարգը**

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>2</sup> Տե՛ս Code of Good Practice on Referendums (Adopted by the Council for Democratic Elections at its 19<sup>th</sup> meeting (Venice, 16 December 2006) and the Venice Commission at its 70<sup>th</sup> plenary session (Venice, 16-17 March 2007, CDL-AD (2007)008, Strasbourg, 19 March 2007), p. 10 (Հասանելի աղբյուրը՝ տե՛ս վերևում):

1. Հանրաքվեի հանձնաժողովներն են հանրաքվեի կենտրոնական, ընտրատարածքային և տեղամասային հանձնաժողովները:

2. Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը բաղկացած է 7 անդամից: Կենտրոնական հանձնաժողովի անդամներից մեկին նշանակում է Հանրապետության նախագահը, իսկ մյուս անդամներին՝ Ազգային ժողովը: Հանրաքվեի հանձնաժողովների կազմավորման մանրամասները սահմանվում են օրենքով:»:

3. «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը բաղկացած է 7 անդամից: Կենտրոնական հանձնաժողովի անդամներից մեկին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի առաջարկած բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող առնվազն երկու թեկնածուներից: Կենտրոնական հանձնաժողովի մյուս անդամները նշանակվում են Ազգային ժողովում պատգամավորական տեղեր ստացած կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից՝ յուրաքանչյուր կուսակցությունից (կուսակցությունների դաշինքից) մեկ լիազոր ներկայացուցիչ նշանակվելու սկզբունքով: Եթե Ազգային ժողովում պատգամավորական տեղեր ստացած կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) թիվը գերազանցում է վեցը, ապա հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի կազմավորմանը մասնակցում են ամենաշատ պատգամավորական տեղեր ստացած առաջին վեց կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները)՝ յուրաքանչյուրից մեկ լիազոր ներկայացուցիչ նշանակվելու սկզբունքով: Իսկ եթե Ազգային ժողովում պատգամավորական տեղեր ստացած կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) թիվը պակաս է վեցից, ապա դրանցից յուրաքանչյուրի կողմից մեկ լիազոր ներկայացուցիչ նշանակվելուց հետո թափուր տեղերը լրացվում են Ազգային ժողովում ամենաշատ պատգամավորական տեղեր ստացած կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից՝ ըստ հերթականության, յուրաքանչյուրից մեկ լիազոր ներկայացուցիչ նշանակվելու սկզբունքով՝ մինչև բոլոր տեղերի լրացումը: Կենտրոնական հանձնաժողովի անդամները նշանակվում են վեց տարի ժամկետով:»:

Առաջարկվում է հանձնաժողովների կազմավորման վերոհիշյալ կարգն օրենսդրորեն ամրագրել նաև հանրաքվեի ընտրատարածքային և տեղամասային հանձնաժողովների առնչությամբ՝ պայմանով, որ դրանց բոլոր անդամները նշանակվում են ԱԺ կողմից<sup>1</sup>:

Հանրաքվեի արդյունավետ կազմակերպման և անցկացման համատեքստում ուշադրության են արժանի նաև հանրաքվեի անցկացումը բացառող հանգամանքները: Վերջիններս կարևորվում են հատկապես այն դեպքում, երբ ապահովում են հանրաքվեի մասնակիցների ազատ, հստակ, քաղաքական անհարկի ազդեցություններից զերծ կամքի արտահայտումը: Եվ հակառակը՝ եթե այդ հանգամանքները սահմանվում են որպես ինքնանպատակ, ապա անմիջական ժողովրդաիշխանությամբ:

<sup>1</sup> Մեր կողմից արված օրենսդրական առաջարկության նպատակը ոչ թե ՀՀ-ում հանրաքվեի առանձին հանձնաժողովների ստեղծումն է, այլ դրանց անկախության ապահովումը: Ասվածը ենթադրում է, որ համանման կարգով ձևավորված ընտրական հանձնաժողովները կարող են հանդես գալ որպես հանրաքվեի հանձնաժողովներ: Քանի որ սույն հետազոտության առարկան հանրաքվեն է, ուստի մեր առաջարկներն արվել են բացառապես այդ ինստիտուտի առնչությամբ:

յան քննարկվող ինստիտուտը զրկվում է իր առաքելությունից, ժողովրդափշխանությունը դառնում է պետական իշխանության ածանցյալ:

Այս կապակցությամբ արդիական է իր կարևորությամբ այն հարցը, թե որքանով է նպատակահարմար հանրաքվեի և ընտրությունների համաժամանակյա անցկացումը:

Քննարկվող խնդրի վերաբերությամբ «Ռուսաստանի Ղաշնության հանրաքվեի մասին» ՌԴ դաշնային սահմանադրական օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը և 14-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում են, որ ՌԴ ամբողջ տարածքում միաժամանակ անցկացվող ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում ՌԴ քաղաքացիները չեն կարող հանդես գալ ՌԴ հանրաքվե անցկացնելու նախաձեռնությամբ<sup>1</sup>: Անդրադառնալով հանրաքվեի և ընտրությունների համաժամանակյա անցկացմանը՝ ՌԴ սահմանադրական դատարանը 2003 թ. հունիսի 11-ի թիվ 10 որոշման մեջ նշում է, որ հանրաքվե և ընտրություններն ունեն սեփական նպատակները, ուստի դաշնային օրենսդիրը սահմանում է ինչպես ընտրությունների, այնպես էլ հանրաքվեի անցկացման ժամկետները: Քանի որ ընտրություններն ու հանրաքվե միաժամանակ անցկացնելն օբյեկտիվորեն կարող է խոչընդոտել քաղաքացիների կամքի լիարժեք արտահայտումը և հանգեցնել անմիջական ժողովրդափշխանության այս կամ այն ձևի արդյունավետության նվազման, դաշնային օրենսդիրն իրավունք ունի ամրագրել կարգավորում, որի դեպքում հանրաքվեի նախապատրաստումը և անցկացումը չեն համընկնի ընտրությունների նախապատրաստման և անցկացման հետ<sup>2</sup>:

Հայաստանում հանրաքվեների և ընտրությունների միաժամանակյա անցկացման փորձը ցույց է տալիս, որ այս դեպքում անմիջական ժողովրդափշխանության քննարկվող ինստիտուտների կիրառման արդյունավետությունը էապես նվազում է: Այդ մասին է վկայում 1995 թ. հուլիսի 5-ին և 2003 թ. մայիսի 25-ին ՀՀ-ում ԱԺ ընտրություններին զուգահեռ սահմանադրական հանրաքվեների անցկացումը<sup>3</sup>: Հանրաքվեների և ընտրությունների անցկացումը կարող է համընկնել՝ հաշվի առնելով հանրաքվեով հարցի լուծման հրատապությունը: Բայց քանի որ ընտրությունների անցկացման ժամկետները, որպես կանոն, նախապես հայտնի են, ուստի հնարավոր է խուսափել նշված իրավիճակից: Ասվածը, սակայն, հայտնի պատճառներով չի վերաբերում նոր, նոր հերթական, արտահերթ ընտրություններին, ընտրության երկրորդ փուլին և վերաքվեարկությանը: Ուստի հանրաքվեների և ընտրությունների

<sup>1</sup> St'u Федеральный конституционный закон РФ от 28 июня 2004 года N 5-ФКЗ "О референдуме Российской Федерации" (С изменениями и дополнениями от 6 апреля 2015 г., հասանելի աղբյուրը՝ <http://base.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc&base=LAW&n=177645&fld=134&dst=1000000001,0&rnd=0.6037065583459571>):

<sup>2</sup> St'u Постановление Конституционного Суда РФ от 11 июня 2003 г. N 10-П "По делу о проверке конституционности Федерального конституционного закона "О внесении изменения и дополнения в Федеральный конституционный закон "О референдуме Российской Федерации" (Հասանելի աղբյուրը՝ [http://cikrf.ru/law/decree\\_of\\_court/pes\\_10-p.html](http://cikrf.ru/law/decree_of_court/pes_10-p.html)):

<sup>3</sup> St'u Resolution 1458 (2005) on "Constitutional reform process in Armenia" (Adopted by the Parliamentary Assembly of Council of Europe on 23 June 2005 (22<sup>nd</sup> Sitting), հասանելի աղբյուրը՝ <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17359&lang=en>): Հասանելի աղբյուրը նաև՝ <http://www.tert.am/am/news/2015/10/21/4referendum/1822297>; <http://www.tert.am/am/news/2015/10/22/yes-or-no/1823358>:

միաժամանակյա անցկացման արգելքը կարող է արդյունավետ լինել, եթե խոսքը վերաբերում է հերթական ընտրություններին:

Հաշվի առնելով քննարկվող խնդրի լուծման կարևորությունը՝ նպատակահարմար է՝

1. ՀՀ Սահմանադրության 208-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1-ին մասով. «1. Հանրաքվե չի կարող անցկացվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ, ինչպես նաև՝ Ազգային ժողովի հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում»:

2. «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Հանրաքվե չի կարող անցկացվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ, ինչպես նաև՝ Ազգային ժողովի հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում»:

3. «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Տեղական հանրաքվե չի կարող անցկացվել տվյալ համայնքի տարածքում արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ, ինչպես նաև՝ Ազգային ժողովի, տվյալ համայնքի ավագանու կամ ընտրողների կողմից անմիջականորեն ընտրվող համայնքի ղեկավարի հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում»:

Հանրաքվեի կազմակերպման և անցկացման համար, որպես նորմատիվ երաշխիք, կարևոր է հանրաքվեի վերաբերյալ օրենսդրության կայունությունը: Այս կապակցությամբ «Հանրաքվեների անցկացման ուղեցույց»-ի 2-րդ բաժնի 2-րդ մասի «b» կետը սահմանում է, որ հանրաքվեի վերաբերյալ օրենսդրությունը նպատակահարմար է փոփոխությունների ենթարկել հանրաքվեի անցկացումից ոչ պակաս, քան մեկ տարի առաջ<sup>1</sup>: Բերված նորմը նշված կանոնից բացառություն է նախատեսում խորհրդարանի կողմից իր իրավասության սահմաններում ընդունվող օրենքների կապակցությամբ, որի համաձայն՝ հանրաքվեի վերաբերյալ օրենսդրության կայունության ապահովման անհրաժեշտությունը չի կարող պատրվակ հանդիսանալ անմիջական ժողովրդավարության եվրոպական պատմական փորձի չափանիշներին հակասող դրույթը պահպանելու կամ միջազգային կազմակերպությունների հանձնարարականների կատարումը խոչընդոտելու համար:

Բացի այդ, քանի որ հանրաքվեի անցկացման հստակ ժամկետները շատ հազվադեպ են հայտնի լինում դրա անցկացումից մեկ տարի (կամ մեկ տարուց ավելի) առաջ, ուստի նպատակահարմար է բացառել ոչ թե հանրաքվեի վերաբերյալ օրենսդրության փոփոխության հնարավորությունը դրա անցկացմանը նախորդող տարվա ընթացքում, այլ օրենսդրական փոփոխությունների կիրառումը դրանց ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում, եթե կան կեղծարարության կասկածներ<sup>2</sup>:

Ընդհանուր գծերով համաձայնելով Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշմանը՝ կարծում ենք, որ խորհրդարանի կողմից հանրաքվեի վերաբերյալ օրենսդրության փոփոխությունները կարող են պարունակել քաղաքական վտանգներ՝ իրավական

<sup>1</sup> St'e Code of Good Practice on Referendums (Adopted by the Council for Democratic Elections at its 19<sup>th</sup> meeting (Venice, 16 December 2006) and the Venice Commission at its 70<sup>th</sup> plenary session (Venice, 16-17 March 2007, CDL-AD (2007)008, Strasbourg, 19 March 2007), p. 9 (Հասանելի աղբյուրը՝ տե՛ս վերևում):

<sup>2</sup> St'e նույն տեղում, էջ 18:

նպատակահարմարությունը փոխարինելով քաղաքական նպատակահարմարությամբ:

Նշված վտանգները կանխելու համար անհրաժեշտ է՝

1. ՀՀ Սահմանադրության 208-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով. «2. Ազգային ժողովի կողմից հանրաքվեի վերաբերյալ օրենսդրության փոփոխություններից հետո՝ մեկ տարվա ընթացքում, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնությամբ հանրաքվե անցկացվել չի կարող, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենսդրական փոփոխություններն ուղղված են հանրաքվեի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն»:

2. «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ մասով. «1.1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից հանրաքվեի վերաբերյալ օրենսդրության փոփոխություններից հետո՝ մեկ տարվա ընթացքում, պետական մարմինների նախաձեռնությամբ հանրաքվե անցկացվել չի կարող, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենսդրական փոփոխություններն ուղղված են հանրաքվեի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն»:

3. «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-րդ մասով. «2.1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից տեղական հանրաքվեի վերաբերյալ օրենսդրության փոփոխություններից հետո՝ մեկ տարվա ընթացքում, համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու նախաձեռնությամբ տեղական հանրաքվե անցկացվել չի կարող, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենսդրական փոփոխություններն ուղղված են տեղական հանրաքվեի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն»:

## АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ОРГАНИЗАЦИИ И ПРОВЕДЕНИЯ РЕФЕРЕНДУМА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

**Руслан Марандян**

*Аспирант Образовательного комплекса полиции РА*

Научная статья посвящена обсуждению некоторых проблем, связанных с повышением эффективности организации и проведения референдума в Республике Армения. Анализу подверглись международные и внутригосударственные правовые регулирования некоторых вопросов процесса референдума, связанных с проверкой подлинности подписей, в случае петиционного референдума, с порядком формирования комиссий референдума, обстоятельствами, исключающими проведение референдума, со стабильностью референдумного законодательства. Для решения вышеуказанной задачи в научной статье сделаны соответствующие законодательные предложения.

## ACTUAL PROBLEMS OF ORGANIZATION AND CONDUCTION OF REFERENDUM IN THE REPUBLIC OF ARMENIA

Ruslan Marandyan

*PhD student at Police Educational Complex of RA*

---

Scientific article is devoted to discussion of some problems related to increase of effectiveness of organization and conduction of referendum in the Republic of Armenia. International and domestic legal regulations of some issues, related to verification of validity of signatures in case of petitionary referendum, order of formation of commissions of referendum, circumstances, excluding the conduction of referendum, stability of referendum legislation have been analysed. For solving abovementioned issue appropriate legislative proposals have been made.

**Բանալի բառեր`** *հանրաքվեի կազմակերպում, ստորագրությունների վավերականություն, հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով, բացարձակ հավասարություն, հանրաքվեի և ընտրությունների միաժամանակյա անցկացում, օրենսդրության կայունություն:*

**Ключевые слова:** *организация референдума, подлинность подписей, центральная комиссия референдума, абсолютное равенство, одновременное проведение референдума и выборов, стабильность законодательства.*

**Key words:** *organization of referendum, validity of signatures, central commission of referendum, absolute equality, simultaneous conduction of referendum and elections, stability of legislation.*

**ՊԱՏԵՐԱԶՄ ՎԱՐԵԼՈՒ ԱՐԳԵԼՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԵՎ  
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ  
ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

**Արիա Իսկոյան**

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի պրոֆեսոր,  
Էկոլոգիական իրավունքի գիտատեսուցական կենտրոնի ղեկավար,  
իրավաբանական գիտությունների թեկնածու*

**Լիլիթ Երեմյան**

*ՀՈՀ-ի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի  
միջազգային իրավունքի և եվրոպական իրավունքի ամբիոնի վարիչ,  
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Շրջակա միջավայրի պաշտպանության հիմնախնդիրները որպես միջազգային-իրավական կարգավորումների օբյեկտ սկսեցին հանդես գալ դեռևս XX դարի սկզբին: Շրջակա միջավայրի միջազգային-իրավական պաշտպանությանը նվիրված հարցերի առանձին քննարկումներին հետևեց 1913 թ. Բեռնում կայացած կոնֆերանսը, որի օրակարգային հարցերից մեկն ամրագրում էր շրջակա միջավայրի համապարփակ պաշտպանության և պահպանման անհրաժեշտությունը<sup>1</sup>: Միջազգային էկոլոգիական իրավունքի զարգացման հարցում, թերևս, կարևորագույն իրադարձությունները տեղի ունեցան միայն XX դարի վերջին: Այսպես, 1972 թ. հիմնադրվեց ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիրը\*,<sup>2</sup> իսկ դրան հաջորդեցին ՄԱԿ-ի ստոկհոլմյան կոնֆերանսն ու արդյունքում՝ 1972թ. Ստոկհոլմի հռչակագրի ընդունումը: Ստոկհոլմի հռչակագրում ամրագրվեցին շրջակա միջավայրի պահպանությանն ու դրա որակի բարձրացմանն ուղղված թվով 26 սկզբունքներ<sup>3</sup>: Նշված սկզբունքներն ունեն ընդհանուր բնույթ և հատուկ կարգավորան առարկա չեն դարձնում շրջակա միջավայրի պաշտպանության հարցը պատերազմի ժամանակ: Միևնույն ժամանակ հռչակագրով նախատեսվում էր, որ «[մ]արդն ու իրեն շրջապատող միջավայրը պետք է ազատ լինեն միջուկային զենքի և զանգվածային ոչնչացման այլ զինատեսակների կիրառման հետևանքներից»<sup>4</sup>, դրանով իսկ շեշտադրելով որոշ տեսակի զենքերի կիրառման արդյունքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությու-

\* ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիրը (ՄԱԿ-ՇՄԾ) ՄԱԿ-ի մասնագիտացված կառույց է, որի գլխավոր նպատակն է շրջակա միջավայրի պաշտպանությանը և պահպանմանն ուղղված ծրագրերի համակարգումը:

<sup>1</sup> Elena Iftime, "Green Diplomacy-A New Type Of International Cooperation (II)", Ecoforum (Volume 3, Issue 2 (5), 2014), p. 3.

<sup>2</sup> Տե՛ս <http://www.unep.org/about/>:

<sup>3</sup> Շրջակա միջավայրի և դրա զարգացման հիմնախնդիրներին նվիրված ՄԱԿ-ի համաժողովում ընդունված սկզբունքների հռչակագիր, Ստոկհոլմ (Ստոկհոլմի հռչակագիր), 1972 թ.:

<sup>4</sup> Տե՛ս Ստոկհոլմի հռչակագիր, 1972 թ., 26-րդ սկզբունք:



յան անխուսափելիությունն ու միջազգային հանրության կողմից դրա կանխարգելման անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռազմական գործողությունները հաճախ ավերիչ և անդառնալի ազդեցություն են ունենում շրջակա միջավայրի վրա՝ միջազգային հանրային իրավունքի տվյալ ոլորտի բնականոն զարգացման արդյունքում պետությունները միաժամանակ ձեռնամուխ են լինում մշակել մասնավորապես *զինված հակամարտությունների ժամանակ* շրջակա միջավայրի պաշտպանության միջազգային-իրավական կարգավորումներ: Ընդ որում, հարկ է նշել, որ զինված հակամարտությունների ընթացքում շրջակա միջավայրին կարող է ուղակիորեն և դիտավորյալ վնաս պատճառվել, կամ պատճառված վնասը կարող է լինել իրավաչափ թիրախների վրա հարձակումներ իրականացնելու անուղղակի հետևանք:

Միջազգային մակարդակում պետություններն սկսեցին առավել արդյունավետ կարգավորել շրջակա միջավայրի պաշտպանությունը զինված հակամարտությունների կործանիչ հետևանքներից, հատկապես՝ Վիետնամի պատերազմից հետո, երբ աշխարհն ականատես եղավ ԱՄՆ-ի կողմից Հարավային Վիետնամում այնպիսի զինատեսակների օգտագործմանը, որոնք հսկայական և, ըստ էության, անդառնալի վնաս հասցրին շրջակա միջավայրին<sup>1</sup>: Միջազգային հանրության կողմից մշակվեցին պատերազմների հետևանքներից շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված հիմնական կարգավորումները, որոնք ամրագրվեցին Ժնևի 1949թ. կոնվենցիաների, 1977 թ. առաջին լրացուցիչ արձանագրությունում (այսուհետ՝ I լրացուցիչ արձանագրություն)<sup>2</sup> և Շրջակա միջավայրի վրա ներգործության միջոցների ռազմական կամ ցանկացած այլ թշնամական օգտագործման արգելման մասին կոնվենցիայում (այսուհետ՝ Էն-մոդ կոնվենցիա)<sup>3</sup>: Նշված երկու փաստաթղթերը թեև մշակվել են նույն ժամանակահատվածում, այնուամենայնիվ ունեն կարգավորման տարբեր առարկաներ:

Այսպես, Էն-մոդ կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կոնվենցիայի անդամ պետությունները պարտավորվում են գերծ մնալ որպես որևէ այլ անդամ պետության ոչնչացման կամ դրան վնասներ կամ ավերածություններ պատճառելու գործիք շրջակա միջավայրի վրա ներգործության այնպիսի միջոցների ռազմական կամ ցանկացած այլ թշնամական օգտագործումից, որը կունենա լայնածավալ, երկարատև կամ լուրջ հետևանքներ: Ընդ որում, Էն-մոդ կոնվենցիայի դրույթները գործում են ինչպես զինված հակամարտությունների, այնպես էլ խաղաղ պայմաններում:

I լրացուցիչ արձանագրության 35-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված է պատերազմ վարելու այնպիսի մեթոդների կամ միջոցների կիրառման արգելք, որոնք նպատակ ունեն պատճառելու, կամ կարելի է ողջամտորեն ենթադրել, որ լայնածավալ, տևական և լուրջ վնաս կհասցնեն շրջակա միջավայրին:

<sup>1</sup> Վիետնամի տարածքում ԱՄՆ-ի գործողությունների առավել մանրամասն վերլուծության համար տե՛ս Arthur H. Westing, "Environmental Consequences of the Second Indochina War: A Case Study" (Ambio, Vol. 4, No. 5/6, War and Environment: A Special Issue 1975) 216-222:

<sup>2</sup> I լրացուցիչ արձանագրություն (1977 թ.), 35-րդ հոդվածի 3-րդ մաս և 55-րդ հոդվածի 1-ին մաս (վավերացրել է 173 պետություն, ստորագրել է 3 պետություն):

<sup>3</sup> Շրջակա միջավայրի վրա ներգործության միջոցների ռազմական կամ ցանկացած այլ թշնամական գործողության արգելման մասին կոնվենցիա, ՄԱԿ ԳԱ 1977 թ. առաջարկված 1976 թ. դեկտեմբերի 10-ին, ընդունված թիվ 31/72 ԳԱ որոշմամբ (Կոնվենցիան ունի 76 անդամ պետություն, ստորագրել է 16 պետություն):

Նշված կարգավորումների բառացի մեկնաբանությունից կարելի է եզրակացնել, որ *Էն-մոդ կոնվենցիայով* անդամ պետություններին արգելվում է բնությունն օգտագործել *որպես զենք՝ ընդդեմ կոնվենցիայի այլ անդամ պետությունների*, եթե այն կունենա լայնածավալ, երկարատև կամ լուրջ հետևանքներ շրջակա միջավայրի համար, իսկ *I լրացուցիչ արձանագրությամբ* դրա անդամ պետություններին արգելվում է կիրառել *պատերազմ վարելու այնպիսի միջոցներ և մեթոդներ*, որոնք *կարող են* պատճառել լայնածավալ, տևական և լուրջ վնաս *ցանկացած պետության* շրջակա միջավայրին<sup>1</sup>:

Այսպիսով, Էն-մոդ կոնվենցիայով նախատեսված արգելքն արտացոլված չէ I լրացուցիչ արձանագրությունում և պարտադիր կիրարկելի է միայն կոնվենցիայի անդամ պետությունների համար, քանի որ չկան բավարար ապացույցներ դրա սովորության նորմ լինելու վերաբերյալ<sup>2</sup>: Ինչ վերաբերում է I լրացուցիչ արձանագրությամբ նախատեսված շրջակա միջավայրին լայնածավալ, տևական և լուրջ վնաս պատճառող պատերազմ վարելու միջոցները և մեթոդները միջազգային զինված հակամարտություններում կիրառելու արգելքի սովորության բնույթին, ապա գիտական գրականության մեջ տվյալ հարցի վերաբերյալ կարծիքները տարանջատվում են: Այսպես, ԿԽՄԿ համալիր և հեղինակավոր վերլուծության մեջ վերոնշյալ դրույթը դիտարկվում է որպես սովորության նորմի դրսևորում<sup>3</sup>: Սակայն նման պնդումը խնդրահարույց է: Նախ, ինչպես նշեցինք *supra*, ռազմական գործողությունների ժամանակ շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված միջազգային-իրավական կարգավորումները, աշխարհում տեղի ունեցող իրադարձություններով պայմանավորված, ձևավորվել են համեմատաբար վերջերս՝ 20-րդ դարի 70-ական թվականներին: Մինչդեռ սովորույթի ձևավորման համար, որպես կանոն, անհրաժեշտ բաղադրիչներից է տևականորեն համապատասխան պետական պրակտիկայի միօրինակ և հետևողական կրկնումը և այն որպես իրավունքի նորմ ընդունելը<sup>4</sup>: Միաժամանակ որոշ պետություններ, այդ թվում՝ միջազգային ասպարեզում ծանրակշիռ դերակատարում ունեցող պետություններ, ինչպես՝ ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, հերքում են վերոնշյալ դրույթի սովորության բնույթը<sup>5</sup>: Նշված խնդրի պարզաբանմանն անուղղակիորեն անդրադարձել է նաև ՄԱԿ-ի միջազգային դատարանը (այսուհետ՝ Դատարան) միջուկային զենքի վերաբերյալ գործով իր խորհրդատվական եզրակացությունում<sup>6</sup>: Դատարանը մասնավորապես նշում է, որ զինված հակամարտությունների ժամանակ շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված I լրացուցիչ արձանագրությամբ նախատեսված դրույթները խիստ սահմանափակում են պատերազմ վարելու միջոցների և մեթոդների առումով *այդ արձանագրության*

<sup>1</sup> Էն-մոդ կոնվենցիայի և I լրացուցիչ արձանագրության համապատասխան կարգավորումների տարբերության առավել հանգամանակից վերլուծության համար տե՛ս **Еремян Лилит**, “Принцип защиты природной среды в рамках международного гуманитарного права”, Օրինակաբանություն # 86 (2015 թ.), էջեր 41-49:

<sup>2</sup> A.P.V. Rogers, *Law on the Battlefield* (2<sup>nd</sup> edn. MUP 2004) 167:

<sup>3</sup> Henckaerts and Doswald-Beck, *Customary IHL, Volume 1: Rules* (2005 CUP) 151, rule 45:

<sup>4</sup> Սովորության նորմերի վերաբերյալ առավել մանրամասն վերլուծության համար տե՛ս **Malcolm N. Show**, *International Law* (2008 CUP, 6<sup>th</sup> edn) 1542, 76-89:

<sup>5</sup> Henckaerts and Doswald-Beck, *Customary IHL, Volume 1: Rules* (2005 CUP) 15:

<sup>6</sup> *Advisory Opinion on the Legality of the Threat or Use of Nuclear Weapons*, (ICJ 1996) para. 31:

անդամ պետությունների իրավասությունները<sup>1</sup>: Այսինքն, Ռատարանն անուղղակիորեն մատնանշում է տվյալ կարգավորման զուտ պայմանագրային բնույթ ունենալու հանգամանքը: Եթե Ռատարանը գտներ, որ տվյալ դրույթը սովորության նորմ է, ապա կամրագրեր նրա պարտադիր լինելը ոչ միայն I լրացուցիչ արձանագրության անդամ պետությունների, այլև բոլոր պետությունների համար:<sup>2</sup> Քննարկվող դրույթի սովորության բնույթի վերաբերյալ միասնական կարծիքը բացակայում է նաև միջազգային մարդասիրական ոլորտում առավել հեղինակություն վայելող մասնագետների շրջանում:<sup>3</sup> Հակասական կարծիքների և ձևավորված պետական պրակտիկայի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դեռ վաղ է խոսել զինված հակամարտությունների ժամանակ շրջակա միջավայրին լայնածավալ, տևական և լուրջ վնաս պատճառող՝ պատերազմ վարելու միջոցների և մեթոդների կիրառման արգելքի սովորության բնույթ ունենալու մասին: Սակայն հարկ է միաժամանակ փաստել, որ կարծիքների հակասականությունը վկայում է այն մասին, որ *միտում* կա վերոնշյալ կարգավորումը դիտարկել որպես միջազգային սովորության նորմ:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության համապատասխան կարգավորումներին՝ նշենք, որ մեր երկիրը վավերացրել է շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված մի շարք միջազգային պայմանագրեր,<sup>4</sup> այդ թվում նաև Էն-մոդ կոնվենցիան<sup>5</sup> և I լրացուցիչ արձանագրությունը<sup>6</sup>: Ղա նշանակում է, որ այս երկու միջազգային փաստաթղթերում արտացոլված կարգավորումները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված պարտավորություն և անվերապահորեն ենթակա են կատարման: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերն ունեն գերակա իրավական ուժ օրենքների նկատմամբ:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում միջազգային պայմանագրերի դրույթների առավել արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ձեռնարկել որոշ օրենսդրական և կիրառական միջոցառումներ: Մասնավորապես, անհրաժեշտ է համապատասխան միջազգային-իրավական կարգավորումներն արտացոլել նաև ներպետական իրավական ակտերում՝ սահմանելով դրանց իրականացման հստակ կառուցակարգերը:<sup>7</sup>

I լրացուցիչ արձանագրությունում ամրագրված միջազգային զինված հակա-

<sup>1</sup> Նույն տեղը:

<sup>2</sup> Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիա (ՄԱԿ 1969 թ.), հոդված 38: Yoram Dinstein, *The Conduct of Hostilities Under the Law of International Armed Conflict* (2010 CUP, 2<sup>nd</sup> edn.) 206:

<sup>3</sup> Marco Roscini, "Protection of Natural Environment in Time of Armed Conflict" (2008) 7: Տե՛ս նաև [http://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract\\_id=1351888](http://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=1351888):

<sup>4</sup> Իսկոյան Ա., *Քննարկական համաձայնագրեր, օրենքներ, ծրագրեր*, Երևան, 2004, էջեր 61-63:

<sup>5</sup> Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Էն-մոդ կոնվենցիան 2002 թ. մայիսի 15-ին: Տե՛ս [https://ihl-databases.icrc.org/applic/ihl/ihl.nsf/States.xsp?xp\\_viewStates=XPages\\_NORMStatesParties&xp\\_treatySelected=460](https://ihl-databases.icrc.org/applic/ihl/ihl.nsf/States.xsp?xp_viewStates=XPages_NORMStatesParties&xp_treatySelected=460)

<sup>6</sup> Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է I լրացուցիչ արձանագրությունը 1993 թ. հունիսի 7-ին: Տե՛ս [https://ihl-databases.icrc.org/applic/ihl/ihl.nsf/States.xsp?xp\\_viewStates=XPages\\_NORMStatesParties&xp\\_treatySelected=470](https://ihl-databases.icrc.org/applic/ihl/ihl.nsf/States.xsp?xp_viewStates=XPages_NORMStatesParties&xp_treatySelected=470)

<sup>7</sup> Հայաստանի Հանրապետությունում համապատասխան իմպլեմենտացիայի կառուցակարգ նախատեսված է «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով:

մարտությունների ընթացքում շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված դրույթները և էն-մոդ կոնվենցիայով նախատեսված արգելքն *ուղղակիորեն* արտացոլված չեն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում: Փոխարենը ՀՀ քրեական օրենսգրքի «Պատերազմ վարելու արգելված միջոցներ ու մեթոդներ կիրառելը» վերտառությամբ 387-րդ հոդվածի 1-ին մասով պատիժ է սահմանված ռազմական գործողություններում կամ զինված ընդհարումներում միջազգային պայմանագրով արգելված միջոցներ և մեթոդներ կիրառելու համար: Վերոնշյալ հոդվածի դիսպոզիցիայի և Հայաստանի Հանրապետության համար պարտադիր ուժ ունեցող I լրացուցիչ արձանագրության 35-րդ հոդվածի համակարգային վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված միջոցներն ու մեթոդները ներառում են նաև այնպիսիք, որոնք կարող են շրջակա միջավայրին պատճառել լայնածավալ, տևական և լուրջ վնաս:

Մեր կարծիքով, ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Պատերազմ վարելու արգելված միջոցներ ու մեթոդներ կիրառելը» վերտառությամբ հոդվածի (այսուհետ՝ Հոդված) ինչպես վերնագրում, այնպես էլ 1-ին մասի խմբագրության առումով առկա է չորս հիմնախնդիր, որոնք կփորձենք վերլուծել ստորև:

*Հոդված 387. Պատերազմ վարելու արգելված միջոցներ ու մեթոդներ կիրառելը*  
 1. Ռազմական գործողություններում կամ զինված ընդհարումներում միջազգային պայմանագրով արգելված միջոցներ և մեթոդներ կիրառելը պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը քսան տարի ժամկետով:

1. Տարամեկնաբանություններից խուսափելու համար, ինչպես նաև Հոդվածի վերնագիրը դրա բովանդակությանը համապատասխանեցնելու նպատակով գտնում ենք, որ Հոդվածի վերնագրում «Պատերազմ» բառն անհրաժեշտ է փոխարինել «միջազգային և ոչ միջազգային զինված հակամարտություն» բառերով: Թեև տեսական վերլուծությունները վկայում են, որ «պատերազմ» և «զինված հակամարտություն» (միջազգային և ոչ միջազգային բնույթի) եզրույթները պետք է դիտարկել որպես նույնական, սակայն փաստացի «պատերազմ» եզրույթը հաճախ ընկալվում է որպես *միջազգային* զինված հակամարտություն: Օրինակ, Մաքսիլլանի էլեկտրոնային բառարանում «պատերազմ» եզրույթը մեկնաբանվում է որպես «երկու կամ ավելի պետությունների միջև սովորաբար երկարաժամկետ բախումներ, որոնք ներառում են զինված ուժերի կիրառում»:<sup>1</sup> Պատերազմ հասկացությունը երբեմն մեկնաբանվում է նաև որպես «ռազմական գործողություններ պետությունների միջև, ինչպես նաև պետությունների և ազգային ազատագրական շարժումների միջև, որը զուգակցվում է նրանց միջև բոլոր խաղաղ հարաբերությունների դադարեցմամբ»:<sup>2</sup> Վերոնշյալ երկու օրինակներում էլ «պատերազմ» եզրույթի բացատրությունն ու հետևաբար նաև ընկալումն ամբողջական չէ միջազգային հումանիտար իրավունքի տեսանկյունից, քանի որ *ոչ միջազգային* զինված հակամարտությունների միջազգային-իրավական հասկացությունը դրանցում ներառված չէ: Հարկ է նշել նաև, որ «պատերազմելու մեթոդներ և միջոցներ» բառերն օգտագործվում են նաև I լրացուցիչ արձանագրություն,<sup>3</sup> որը կիրառելի է *միջազգային* զինված հակամարտություն-

<sup>1</sup> Macmillan Dictionary, at: <http://www.macmillandictionary.com/dictionary/british/war>

<sup>2</sup> Большой Юридический словарь, под ред. А.Я. Сухарева, В.Д. Зорькина, В.Е. Крунких, - М.ИИФРА – М, 1997 г. – VI, 790 с., էջ 98:

<sup>3</sup> Տես, օրինակ, I լրացուցիչ արձանագրության 35-րդ հոդվածը:

ների ժամանակ: Մինչդեռ ոչ միջազգային զինված հակամարտությունների ընթացքում կիրառվում է «Ոչ միջազգային բնույթի հակամարտությունների զոհերի պաշտպանության վերաբերյալ» ժնկի 1949 թ. կոնվենցիաներին կից 1977 թ. լրացուցիչ արձանագրությունը (II լրացուցիչ արձանագրությունը)<sup>1</sup>: Միևնույն ժամանակ գտնում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի շրջանակներում նպատակահարմար է համապատասխան միջոցների և մեթոդների վրա սահմանել արգելք, որն աներկբայորեն կիրառելի կլինի *ինչպես միջազգային, այնպես էլ ոչ միջազգային զինված հակամարտությունների ժամանակ*: Ընդ որում, Հոդվածի առաջին մասի դիսպոզիցիայի տեքստում էլ օգտագործված են «ռազմական գործողություններում կամ զինված ընդհարումներում» բառերը, ինչը, կարծես, վկայում է այն մասին, որ օրենսդրի տրամաբանությամբ ևս սահմանված արգելքը վերաբերելի է և՛ միջազգային, և՛ ոչ միջազգային հակամարտություններին: Միաժամանակ, միատեսակ տերմինաբանության կիրառումն ապահովելու նպատակով նպատակահարմար է Հոդվածի 1-ին մասում «ռազմական գործողություն կամ զինված ընդհարում» բառերը փոխարինել «միջազգային և ոչ միջազգային զինված հակամարտություններ» բառերով:

2. Հոդվածի դիսպոզիցիան անորոշ է, և հարկ է այն հստակեցնել՝ ՀՀ միջազգային պայմանագրերի համապատասխան դրույթների վերլուծության համատեքստում: Մասնավորապես, գտնում ենք, որ նպատակահարմար է ուղղակիորեն և աներկբա արգելք սահմանել, *inter alia*, այնպիսի միջոցների և մեթոդների կիրառման վրա, որոնք կարող են շրջակա միջավայրին լայնածավալ, տևական և լուրջ վնաս պատճառել: Քրեական օրենսգրքում արգելված միջոցների ու մեթոդների հստակ սահմանումը կբացառի տվյալ դրույթի տարաբնույթ մեկնաբանություններն ու դյուրին կդարձնի դրա կիրառումը դատարանի կողմից: Համեմատական իրավական վերլուծությունը վկայում է, որ մի շարք պետությունների քրեական օրենսգրքերում քրեական պատասխանատվություն է նախատեսված զինված հակամարտությունների ժամանակ շրջակա միջավայրի նկատմամբ հստակ սահմանված որոշակի լրջության և բնույթի վնաս պատճառող միջոցների ու մեթոդների կիրառման համար<sup>2</sup>: Նմանատիպ մոտեցում է որդեգրված նաև, օրինակ, Միջազգային քրեական դատարանի կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն)<sup>3</sup> 8-րդ հոդվածի 2-րդ մասում: Այսպես, Կանոնադրության «Ռազմական հանցագործությունները» վերտառությամբ 8-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով որպես ռազմական հանցագործություն է սահմանված դիտավորյալ այնպիսի հարձակում իրագործելը, որն, ինչպես հայտնի է,

<sup>1</sup> Ոչ միջազգային զինված հակամարտությունների ընթացքում կիրառվում է II լրացուցիչ արձանագրությունը: Այստեղ կարևոր է նշել, որ I լրացուցիչ արձանագրության բազմաթիվ կարգավորումներ ընդունված են որպես սովորության նորմեր և համարվում են կիրառելի ինչպես միջազգային, այնպես էլ ոչ միջազգային զինված հակամարտությունների ժամանակ (Տե՛ս ընդհանուր առմամբ՝ Henckaerts and Doswald-Beck, Customary IHL, Volume 1: Rules (2005 CUP) 628): Միևնույն ժամանակ, ինչպես մեր շարադրանքում նշեցինք, I լրացուցիչ արձանագրությամբ սահմանված շրջակա միջավայրի պաշտպանության սկզբունքը մենք չենք դիտարկում որպես սովորության նորմ:

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ, Իսպանիայի քրեական օրենսգիրք, Պաշտոնական տեղեկագիր 281 (24.11.1995, հոդված 610, Խորվաթիայի քրեական օրենսգիրք, Պաշտոնական տեղեկագրեր 105/2004, 84/2005 և 71/2006, 158-րդ հոդվածի 2-րդ մաս, Շվեյցարիայի քրեական օրենսգիրք (21.12.1937՝ 01.01.2015 թ. փոփոխություններով), հոդված 264 g.1.a: Տես <http://www.legislationline.org/documents/section/criminal-codes>:

<sup>3</sup> Ինչպես նշված է հոդվածի շարադրանքում, *supra* I լրացուցիչ արձանագրության և ԷՆ-մոդ կոնվենցիայի կարգավորման առարկաները միանգամայն տարբեր են:

կպատճառի լայնածավալ, տևական և լուրջ վնաս շրջակա միջավայրին, ինչն ակնհայտորեն անհամաչափ կլինի ակնկալվող ուղղակի և կոնկրետ ռազմական օգուտի համեմատ<sup>1</sup>:

3. Ռազմական գործողություններում կամ զինված ընդհարումներում միջազգային պայմանագրով արգելված միջոցներ ու մեթոդներ կիրառելու համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված է պատիժ՝ առավելագույնը քսան տարի ժամկետով ազատազրկման ձևով: ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ազատազրկման նվազագույն ժամկետը երեք ամիսն է: Այսինքն, ստացվում է, որ պատերազմի արգելված միջոցներ ու մեթոդներ կիրառելու համար դատարանը կարող է նշանակել պատիժ՝ 3 ամսից մինչև 20 տարի ժամկետով ազատազրկման ձևով: Ակնհայտ է, որ նման դիսկրեցիան անհամաչափ մեծ է: Բացի այդ, կարծում ենք, որ Հոդվածով նախատեսված արարքի համար 3 ամիս ժամկետով ազատազրկումն անհամաչափ մեղմ պատիժ է: Այսպիսով, փաստենք, որ հարկ է վերանայել Հոդվածով սահմանված սանկցիան՝ նախատեսելով ազատազրկման ժամկետի առավել բարձր նվազագույն շեմ, ինչպես նաև նվազեցնելով պատիժ նշանակելու մասով դատարանի դիսկրեցիան:

4. Հոդվածը չի վերաբերում Էն-մոդ կոնվենցիայով նախատեսված միջազգային և ոչ միջազգային զինված հակամարտությունների ժամանակ, ինչպես նաև խաղաղ պայմաններում շրջակա միջավայրը որպես զենք օգտագործելու արգելքին: Էն-մոդ կոնվենցիայով նախատեսված արգելքն արտացոլված չէ նաև ՀՀ քրեական օրենսգրքի այլ հոդվածներում: Կարծում ենք, որ Էն-մոդ կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության միջազգային իրավական պարտավորությունների առավել արդյունավետ իրականացման համար նպատակահարմար կլինի ՀՀ քրեական օրենսգրքով սահմանել պատասխանատվություն պետության ոչնչացման կամ դրան վնասներ կամ ավերածություններ պատճառելու նպատակով շրջակա միջավայրի վրա ներգործության այնպիսի միջոցների ռազմական կամ ցանկացած այլ թշնամական օգտագործման համար, որոնց կիրառումը կարող է ունենալ լայնածավալ, տևական կամ լուրջ հետևանքներ շրջակա միջավայրի համար:

Հանրահայտ ամերիկյան հրապարակախոս Բարրի Կոմոնթերի՝ հասարակության և բնության փոխգործակցության արդյունքում ձևավորված առաջին էկոլոգիական օրենքի համաձայն՝ «ամեն ինչ փոխկապակցված է ամեն ինչի հետ»: Այլ կերպ ասած, շրջակա միջավայրին հասցրած վնասն անխուսափելիորեն անդրադառնում է նաև մարդկանց կենսագործունեության տարբեր ոլորտներին և, մասնավորապես, մարդկանց կյանքի որակին և առողջությանը<sup>2</sup>: Հատկապես կարևորում ենք պատերազմների ժամանակ շրջակա միջավայրի պաշտպանությունն ու տվյալ ոլորտում հիմնախնդիրների վերլուծությունն ու իրավական կարգավորումների կատարելագործումը, ինչին էլ միտված է սույն ուսումնասիրությունը:

Աշխարհի տարբեր տարածաշրջաններում զինված հակամարտություններ տեղի են ունեցել բոլոր ժամանակներում: Անհերքելի է, որ հենց որոշակի տեսակի զենքերի կիրառման արդյունքում է շրջակա միջավայրին հասցվում երբեմն անդառնալի

<sup>1</sup> Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտ (ՄԱԿ 1998 թ.), տես՝ <https://www.icc-cpi.int/resource-library/Documents/RS-Eng.pdf>:

<sup>2</sup> **Իսկոյան Ա.Բ.**, Հայաստանի Հանրապետության էկոլոգիական օրենսդրությունը, Երևան, «Արեգ», 1994 թ., էջ 13՝ հղում կատարելով՝ *Морально-этические нормы: война, окружающая среда*, под ред. Уэстинга, перевод с англ., отв. ред. И. Фролов, М., изд "Мир", 1989; стр. 89:

վնաս, ընդ որում՝ այն հաճախ չի ճանաչում աշխարհագրական սահմաններ. որևէ երկրի շրջակա միջավայրին հասցված վնասի բացասական հետևանքները ժամանակի ընթացքում կարող են բացասաբար անդրադառնալ նաև այլ երկրների շրջակա միջավայրի և, վերջին հաշվով, նաև մարդկանց կյանքի որակի վրա: Այսպիսով, հույժ կարևոր է, որ պետությունները գիտակցեն իրենց պատասխանատվությունը շրջակա միջավայրի՝ որպես մարդկանց գոյության հիմնական միջոցի պահպանության և պաշտպանության համար ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական պայմաններում:

Որպես ամփոփում հավելենք, որ սույն ուսումնասիրության մեջ մենք քննության առարկա դարձրինք, մասնավորապես, զինված հակամարտություններ վարելու արգելված միջոցների ու մեթոդների կիրառման միջազգային իրավական-կարգավորումների և ՀՀ-ում դրանց արդյունավետ կիրառման հայեցակետով, սակայն շրջակա միջավայրի պաշտպանությանը վերաբերող առանձնահատուկ խնդրահարույց հարցերը չեն սահմանափակվում միայն իրականացված վերլուծության շրջանակով, այլ ներառում են Էկոցիդի միջազգային-իրավական և ներպետական կարգավորումների վերլուծությունը, գլոբալ տաքացման և զինված հակամարտությունների հարաբերակցությունը, էկոլոգիական փոխստականների հիմնախնդիրները և այլն, որոնցից յուրաքանչյուրը, թերևս, առանձին վերլուծության առարկա կարող է հանդիսանալ:

## ПРОБЛЕМНЫЕ АСПЕКТЫ УГОЛОВНО-ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ РА ОТНОСИТЕЛЬНО ПРИМЕНЕНИЯ ЗАПРЕЩЕННЫХ СРЕДСТВ И МЕТОДОВ ВЕДЕНИЯ ВОЙНЫ В КОНТЕКСТЕ МЕЖДУНАРОДНОГО ЭКОЛОГИЧЕСКОГО ПРАВА

**Аида Искоян**

*Профессор кафедры гражданского процесса ЕГУ,*

*Руководитель Научно-образовательного центра Экологического права ЕГУ,*

*кандидат юридических наук*

**Лилит Еремян**

*Зав. кафедрой международного и европейского*

*права Института права и политики РАУ, кандидат юридических наук*

В рамках данного исследования проведен анализ статьи Уголовного кодекса РА “Применение запрещенных средств и методов ведения войны” в контексте международно-правового регулирования защиты окружающей природной среды, а также выявлены пробелы действующего регулирования. На основе проведенного анализа авторами предлагаются возможные пути совершенствования соответствующих положений УК РА.

## PROBLEMATIC ASPECTS OF ROA CRIMINAL LEGAL REGULATION ON THE USE OF PROHIBITED MEANS AND METHODS OF WARFARE IN THE CONTEXT OF INTERNATIONAL ENVIRONMENTAL LAW

**Aida Iskoyan**

*Professor at the YSU Chair of Civil Procedure,  
Head of the Scientific-Educational Centre on Ecological Law at YSU,  
Candidat of Legal Sciences*

---

**Lilit Yeremyan**

*Head of the Chair of International Law and European  
Law of the Institute of Law and Politics of RAU,  
Candidat of Legal Sciences*

---

The current article tends to analyse the Article of RoA Criminal Code “On the Use of prohibited means and methods of warfare” in the context of international-legal protection of the natural environment, as well as to reveal the omissions in the existing regulations. On the basis of the analysis the Authors suggest possible ways for enhancement of the of the current regulations of the RoA Criminal Code.

**Բանալի բառեր.** *շրջակա միջավայրի միջազգային-իրավական պաշտպանություն, զինված հակամարտություններ, պատերազմի արգելված միջոցներ ու մեթոդներ, քրեաիրավական կարգավորում:*

**Ключевые слова:** *международно-правовая защита окружающей природной среды, вооруженные конфликты, запрещенные средства и методы ведения войны, уголовно-правовое регулирование.*

**Key words:** *international-legal protection of natural environment, armed conflicts, prohibited means and methods of warfare, criminal-legal regulations.*



## ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՁԵՐՔԱԿԱԼՄԱՆ ԵՎ ԲԵՐՄԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՈՒՄ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

### Արման Թաթոյան

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ,  
ՀՀ մարդու իրավունքների պաշտպան,  
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Մարդու անձնական ազատության իրավունքը կյանքի և ազատության բնական իրավունքներից ածանցված, պետության կողմից ճանաչված, նրա ֆիզիկական ազատությունն արտահայտող հնարավորությունն է<sup>1</sup>: ՀՀ սահմանադրության 27-րդ հոդվածն ամրագրում է յուրաքանչյուր անձի՝ անձնական ազատության իրավունքը՝ որպես անձի հիմնական սահմանադրական իրավունք: Ավելին, սահմանադրական այդ դրույթով հստակ սահմանվում են այն իրավական երաշխիքները, որոնք կոչված են ապահովելու ազատությունից զրկվելու դեպքում անձի նվազագույն իրավունքների ամբողջական իրացումը:

Անձի անձնական ազատության իրավունքն իր ամրագրումը և բովանդակային բացահայտումն է ստացել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում: Այսպես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդվածով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք կյանքի, ազատության և սեփական անձի անձեռնմխելիության իրավունք ունի:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր մարդ ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարող ենթարկվել քմահաճ ձերբակալման կամ կալանքի տակ պահվելու: Ոչ ոք չպետք է զրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգին համապատասխան, որոնք սահմանված են օրենքով:

Անձի անձնական ազատության իրավունքն իր բովանդակային բացահայտումը և երաշխավորումն է ստացել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայում (այսուհետ՝ Կոնվենցիա): Այսպես, Կոնվենցիայի 5-րդ հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան կոնվենցիոն հոդվածում նշված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասը վկայակոչում է անձի ազատության մեջ

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրության մեկնաբանությունները, Երևան, 2010, էջ 187: <http://www.osce.org/hy/yerevan/74940?download=true>

գտնվելու կանխավարկածը<sup>1</sup>, համաձայն որի՝ ազատությունից զրկելը չպետք է պայմանավորված լինի կանայականությամբ: Ավելին, անձին ազատությունից զրկել կարելի է միայն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում:

Պարզելու համար՝ արդյոք անձի ձերբակալումը կամ կալանավորումը կարող է Կոնվենցիայի իմաստով որակվել «ազատությունից զրկել», Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախևառաջ ուսումնասիրում է ազատությունից զրկելու բնույթը, ազատությունից զրկելու օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը: Օբյեկտիվ կողմը ներառում է ազատությունից զրկման վայրը և պահման ժամանակը, սուբյեկտիվ կողմը՝ անձի համաձայնությունը<sup>2</sup>:

Եվրոպական դատարանի իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ ազատությունից զրկելու ամենատարածված դեպքերից է, երբ իրավապահ մարմինը, ուժի գործադրմամբ կամ առանց դրա, անձին արգելում է լքել իր գտնվելու վայրը կամ պահանջում է իր հետ գնալ մեկ այլ վայր, կամ անձը ստիպված է հետևել ոստիկանի կամքին: «Ազատությունից զրկել» են համարվում նաև անձին փողոցում մի քանի ժամով կանգնեցնելը և հեռանալն արգելելը<sup>3</sup> կամ, օրինակ, ոստիկանության բաժնից դուրս գալն արգելելը, նույնիսկ եթե անձն այնտեղ է գնացել իր կամքով՝ առանց իրավապահ մարմինների կողմից ուժի գործադրման<sup>4</sup>: Եվրոպական դատարանը Շիմովոլոսն ընդդեմ Ռուսաստանի (Shimovolos v. Russia) գործով կայացրած վճռում «ազատությունից զրկել» է որակել նույնիսկ դիմումատուին ոստիկանության բաժին տեղափոխելը և այնտեղ շուրջ 45 րոպե պահելը<sup>5</sup>:

Ուշագրավ է այն փաստը, որ Եվրոպական դատարանը Դե Ուալդը, Ումսը և Վերսիպյան ընդդեմ Բելգիայի (De Wilde, Ooms and Versyp v. Belgium) գործով կայացրած վճռում նշել է, որ ազատությունից զրկված լինելու փաստի գիտակցումն այս հարցում որոշիչ չէ: Որոշիչ է միայն այն հանգամանքը, որ անձն այլևս չի կարող լքել իր գտնվելու վայրը<sup>6</sup>: Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ «գտնվելու վայրը» չի վերաբերում միայն խցին. դա կարող է լինել ցանկացած վայր, այդ թվում նաև տրանսպորտային միջոց<sup>7</sup>:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածը կիրառելի է նաև այն դեպքերում, երբ օրինակ՝ անձը ազատությունից զրկվել է հասարակական կարգը խախտելու համար, սակայն նրա արարքը կամ դրսևորած վարքագիծը քրեորեն պատժելի չէ<sup>8</sup>:

Մեր երկրում անձի անձնական ազատության իրավունքի սահմանադրական

<sup>1</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի կիրառության ձեռնարկ, Եվրոպայի խորհուրդ, 2002, էջ 8: [http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05\(2004\).pdf](http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05(2004).pdf), էջ 7:

<sup>2</sup> Տե՛ս Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Կոնվենցիայի 5-րդ հոդվածի ուղեցույցը, էջեր 5-7:

[http://www.echr.coe.int/Documents/Guide\\_Art\\_5\\_ENG.pdf](http://www.echr.coe.int/Documents/Guide_Art_5_ENG.pdf),

<sup>3</sup> Gillan & Quinton v. UK, 12 հունվարի 2010 թ., գանգատ թիվ 4158/05:

<sup>4</sup> Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի կիրառության ձեռնարկ, էջ 17-18:

<sup>5</sup> Shimovolos v. Russia 21 հունիսի 2011թ., գանգատ թիվ 30194/09:

<sup>6</sup> De Wilde, Ooms and Versyp ընդդեմ Բելգիայի, 18 նոյեմբերի 1970թ., գանգատներ թիվ 2832/66, 2835/66, 2899/66:

<sup>7</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի կիրառության ձեռնարկ, էջ 18:

<sup>8</sup> «The Participants in the Trial: With Particular Reference to Criminal Proceedings», հատոր 273, էջ 30:

հիմքերն ամրագրված են ՀՀ սահմանադրության 27-րդ հոդվածում, որն ամրագրում է. *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով...»:*

Անձի անձնական ազատության իրավունքի՝ իբրև Սահմանադրությամբ հռչակված հիմնական իրավունքի ապահովմանն ուղղված Սահմանադրության 27-րդ հոդվածի իրավական բովանդակությունը պետք է բացահայտվի՝ որպես ելակետ ընդունելով միջազգային իրավական փաստաթղթերի, մասնավորապես՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթները և դրա մեկնաբանությունները Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի շրջանակներում: Ասվածն առավել հիմնավորվում է այն բանի հաշվառմամբ, որ Սահմանադրության 27-րդ հոդվածի դրույթները ոչ միայն համահունչ են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթներին, այլև, ըստ էության, գրեթե նույնությամբ կրկնում են դրանք:

Այս առումով ելակետային է 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության կարգավորումներով որդեգրված այն սկզբունքը, որով անձի հիմնական իրավունքները և ազատություններն իրենց սահմանադրական ամրագրումը և բովանդակային բացահայտումը պիտի ստանան՝ հիմք ընդունելով մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային իրավաբանությունը և իրավական զարգացումները: Այս հայեցակարգային մոտեցումն իր առարկայացումն է ստացել նաև Սահմանադրության 27-րդ հոդվածի կարգավորումներում՝ առաջին հերթին «ազատությունից զրկման» գաղափարի՝ միջազգային իրավական մոտեցումներին համահունչ բովանդակային ընդգրկման և համապատասխանաբար իրավական երաշխիքների ապահովման տեսանկյունից:

Սահմանադրությամբ երաշխավորված անձի հիմնական իրավունքներին և ազատություններին վերաբերող դրույթների՝ միջազգային իրավունքի հանրաձայն սկզբունքներին ու նորմերին համահունչ այդպիսի մեկնաբանության պահանջն ուղղակիորեն բխում է հենց սահմանադրական կարգավորումներից: Այսպես, Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները»:

Սահմանադրության վերոնշյալ դրույթից կարելի է եզրակացնել, որ նախ անձի իրավունքների և ազատությունների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման ու դրանց գործնական իրացման երաշխիքների ապահովման հիմքում պետք է ընկած լինեն միջազգային իրավական մոտեցումները:

Բացի այդ, վերը նշված սահմանադրական դրույթի ուժով անթույլատրելի է անձի հիմնարար իրավունքների և ազատությունների՝ միջազգային իրավական պահանջներին անհամաչափ և անհամատեղելի սահմանափակումը, այդ թվում՝ բավարար իրավական երաշխիքներ չտրամադրելով:

Ավելին, Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունք-

ների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրության մեկ այլ՝ իրավական որոշակիության սկզբունքն ամրագրող 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Անձի հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության ելակետային այս սահմանադրաիրավական մոտեցումների համակարգային դիտարկումը հիմք է տալիս պնդելու, որ անձի իրավունքները սահմանափակող ընթացակարգերի կիրառման հիմքերի, իրավունքի սահմանափակման տեսանկյունից դրանց բովանդակության և համարժեք իրավական երաշխիքների ամրագրումը պետք է ապահովվի օրենքով հստակ և որոշակիության բավարար աստիճան ունեցող իրավակարգավորումներով:

Այնուհետև, Կոնվենցիայի 5-րդ հոդվածը հռչակում է անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի առնվազն հետևյալ իրավունքները՝

- իրեն հասկանալի լեզվով անհապաղ ազատությունից զրկվելու պատճառներին, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին տեղեկացվելու իրավունքը,

- իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու իրավունքը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:

Այսպիսով, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի տառից, դրա երաշխիքային բովանդակությունը բացահայտող Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներից, ինչպես նաև Սահմանադրության 27-րդ հոդվածի կարգավորումներից կարելի է եզրակացնել, որ անձի անձնական ազատության իրավունքին ցանկացած միջամտություն, անկախ դրա իրականացման՝ օրենքով նախատեսված հիմքերից և ընթացակարգերից, պետք է ենթադրի իրավունքի սահմանափակման բնույթին ու աստիճանին համարժեք իրավական երաշխիքների տրամադրում:

Կոնվենցիոն դրույթների այդպիսի մեկնաբանության պայմաններում ստացվում է, որ անձին ազատությունից զրկելը՝ անկախ այն բանից, թե դա իրականացվել է, ասենք, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի կամ քրեական դատավարության շրջանակներում, ձերբակալման կամ բերման ենթարկելու ինստիտուտների շրջանակներում, պետք է ապահովվի անձին որոշակի նվազագույն իրավունքներ տրամադրելով և միասնական երաշխիքներ ամրագրելով: Հետևաբար, ազատության իրավունքի սահմանափակման յուրաքանչյուր դեպքում անձը պետք է հնարավորություն ունենա իրացնել իր՝ որպես ազատությունից զրկված անձի՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածով հռչակված իրավունքները՝ ամրագրված բոլոր երաշխիքների լիարժեք պահպանմամբ:

Այս առումով հարկ է նկատել, որ Սահմանադրական դատարանն իր 2009 թվականի սեպտեմբերի 12-ի ՍԴՈ-827 որոշման մեջ, անդրադառնալով անձի անձնական ազատության սահմանադրաիրավական երաշխիքների և ազատությունից զրկվելու օրենսդրական ընթացակարգերի հարաբերակցության հարցին, նշել է, որ <<

Սահմանադրության 16 հոդվածի 1-ին մասում<sup>1</sup> ամրագրելով անձին ազատությունից զրկելու դեպքերը՝ սահմանադիրը միևնույն ժամանակ դրանցում արտացոլված նպատակներով և հիմքերով անձին ազատությունից զրկելու ձևերի ընտրությունը վերապահել է օրենսդրի հայեցողությանը՝ որևէ կերպ չկանխորոշելով, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կամ կոնկրետ նպատակին հասնելու համար ինչ դատավարական ընթացակարգային միջոցառումներ կարող են կիրառվել:

Դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը որպես ելակետ ընդունելով՝ կարող ենք միանշանակ պնդել, որ օրենսդիրը, ազատությունից զրկելու կոնկրետ ընթացակարգի սահմանման, դրա նպատակների և հիմքերի որոշակիցման հարցում հայեցողություն ունենալով հանդերձ, պարտավոր է նախատեսել այնպիսի երաշխիքային նշանակության օրենսդրական կանոնակարգումներ, որոնք կբովանդակեն և կերաշխավորեն ազատությունից զրկված անձի սահմանադրական իրավունքները:

Իրավունքների սահմանափակման կամայականությունների դեմ իրավական երաշխիքների համարժեքությունը պետք է գնահատվի՝ հիմք ընդունելով իրավունքի սահմանափակման բովանդակությունը: Այլ կերպ ասած՝ իրավունքի բովանդակային ընդգրկման շրջանակների սահմանափակումն է, որ պետք է կանխորոշի համապատասխան իրավական երաշխիքների տրամադրման անհրաժեշտությունը:

Ասվածը նախևառաջ բխում է Եվրոպական դատարանի իրավաբանության հիմքում ընկած այն կարևորագույն սկզբունքից, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիան ուղղված է ոչ թե տեսական կամ պատրանքային իրավունքների, այլ գործնականում և արդյունավետ իրականացվող իրավունքների երաշխավորմանը: Այս տրամաբանությամբ Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ անձի իրավունքների սահմանափակման իրավաչափությունը գնահատելիս վերջինս կաշկանդված չէ ներպետական ֆորմալ ընթացակարգերով և իրավունքի գործնական երաշխավորումը գնահատում է՝ հիմք ընդունելով այդ իրավունքի իրացման կամ դրա սահմանափակման դեպքում համարժեք իրավական երաշխիքների բովանդակային ապահովումը:

Ավելին, միջազգային իրավական այս սկզբունքային մոտեցումները՝ կապված անձի իրավունքների նվազագույն ծավալի ապահովման և դրանց՝ ազատությունից փաստացի զրկվելու պահից անհապաղ իրացման հետ, կոչված են ոչ միայն ապահովելու անձի անձնական ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափությունը, այլև անձի ֆիզիկական անձեռնմխելիությունը:

Անձին ազատությունից զրկելու իրավական կառուցակարգերի և երաշխիքների ամրագրման պահանջն ուղղված է նաև Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով երաշխավորված՝ վատ վերաբերմունքի չենթարկվելու բացարձակ իրավունքի ապահովմանը: Այսպես, Եվրոպայի խորհրդի խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ) չափանիշներում ամրագրված են ոստիկանության կողմից ձերբակալված անձանց երեք իրավունքները. փաստաբանի և բժշկի մատչելիության իրավունքները և ձերբակալության մասին ազգականին կամ իր ընտրությամբ երրորդ անձին տեղեկացնելու իրավունքը:

<sup>1</sup> Խոսքը վերաբերում է 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության՝ անձի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքն ամրագրող 16-րդ հոդվածին:

Այսպես, փաստաբանի մատչելիության իրավունքի հետ կապված՝ ԽԿԿ-ն ընդգծել է, որ այդ իրավունքը պետք է ապահովվի ազատությունից զրկված բոլոր անձանց, այդ թվում՝ վարչական՝ ազատությունից զրկելու պահից (և ոչ թե արձանագրությունը կազմելիս)<sup>1</sup>:

ԽԿԿ-ն բազմիցս նշել է, որ ազատությունից զրկմանն անմիջապես հաջորդող ժամանակատվածում սպառնալիքի և ֆիզիկական բռնության ենթարկվելու ռիսկն ամենամեծն է: Հետևաբար ոստիկանության կողմից ձերբակալված անձանց համար փաստաբանի մատչելիության հնարավորությունը հենց այդ ժամանակահատվածում վատ վերաբերմունքի դեմ հիմնարար երաշխիք է:

ԽԿԿ-ն նաև ընդգծել է, որ փաստաբանի մատչելիության իրավունք պետք է տրամադրվի ոչ միայն հանցագործություն կատարելու մեջ կասկածվողներին, այլև ցանկացած անձի, ով ունի ոստիկանություն ներկայանալու և այնտեղ գտնվելու իրավական պարտականություն (օրինակ՝ «վկաները»):

ԽԿԿ չափանիշներում հատուկ կարևորվում են նաև ոստիկանությունում ձերբակալված անձանց՝ բժշկի մատչելիության, ինչպես նաև իրեն ազատությունից զրկելու մասին տեղեկացնելու իրավունքները:

Ավելին, ԽԿԿ-ն ազատությունից զրկված անձի նկատմամբ վատ վերաբերմունքի երաշխիքների շարքում հատկապես կարևորել է, որ անձին կալանավորելու (ձերբակալելու) ժամկետը հաշվարկվի այն պահից սկսած, երբ անձը պարտավոր է հետևել ոստիկանության աշխատակցին: Այդ ժամանակը պետք է ամրագրվի կալանավորման (ձերբակալման) արձանագրության մեջ:

Վատ վերաբերմունքի չենթարկվելու արգելքն իր ամրագրումն է ստացել նաև ՀՀ սահմանադրության 26-րդ հոդվածում, համաձայն որի.

*«1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:*

*2. Մարմնական պատիժներն արգելվում են:*

*3. Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք»:*

Կոնվենցիայի 3-րդ և 5-րդ հոդվածների, ինչպես նաև դրանց իրավական երաշխիքներն արտացոլող սահմանադրաիրավական դրույթների կարգավորումները նախանշում են ազատությունից զրկված անձի այն նվազագույն իրավունքների համալիրը, որի գործնական իրացումն անհրաժեշտ նախապայման է անձին ազատությունից զրկելու ընթացակարգերի իրավաչափության ապահովման տեսանկյունից:

Ընդ որում, ներպետական օրենսդրությամբ սահմանված ցանկացած ընթացակարգի շրջանակներում ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք, միջազգային պահանջների ձևակերպմամբ, պետք է ունենա առնվազն հետևյալ իրավունքները՝

1. անհապաղ տեղեկացվել իրեն ազատությունից զրկելու պատճառների մասին,

2. իրեն ազատությունից զրկելու վերաբերյալ անհապաղ տեղեկացնել իր ընտրած անձին,

3. փաստաբանի մատչելիության իրավունքը,

4. բժշկական զննության ենթարկվելու իրավունքը,

5. իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու և ազատ ար-

<sup>1</sup> Տե՛ս ԽԿԿ 2001 թվականի գեկույցը Վրաստանի վերաբերյալ, կետ 41:

ծավկելու իրավունքը, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:

Բավարար որոշակիություն ունեցող օրենսդրական հիմքերի ամրագրման և դրանով պայմանավորված՝ իրավաչափ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման, ինչպես նաև սահմանադրական կարգավորումների հրամայականը ենթադրում են անձի ազատության իրավունքի ոչ իրավաչափ միջամտության դեմ իրավական կառուցակարգերի և երաշխիքների ամրագրում ոլորտը կարգավորող իրավական ակտերում: Խոսքը հավասարապես վերաբերում է նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի կարգավորումներին (այսուհետ՝ ՎԻՎՕ):

ՎԻՎՕ-ն նախատեսում է անձին ազատությունից զրկելու հետևյալ իրավական կառուցակարգերը՝ **վարչական ձերբակալումը, բերման ենթարկելը և խախտողի բերումը:**

Վարչական ձերբակալման՝ որպես վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի ընթացքում անձի նկատմամբ ներգործություն ապահովելու միջոցի հետ կապված կարգավորումները նախատեսված են ՎԻՎՕ 260-րդ, 261-րդ և 262-րդ հոդվածներում: Դրանք համապատասխանաբար սահմանում են վարչական ձերբակալման մասին արձանագրությանը ներկայացվող բովանդակային պահանջները՝ անչափահասի ձերբակալման մասին նրա ծնողներին կամ նրանց փոխարինող անձանց տեղյակ պահելու պահանջը, վարչական ձերբակալում իրականացնելու իրավագոր մարմինների շրջանակը և վարչական ձերբակալման ժամկետները:

Միևնույն ժամանակ, վարչական ձերբակալման վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումներով չեն սահմանվում ազատությունից զրկված լինելու հանգամանքով պայմանավորված՝ անձի իրավունքները՝ որպես ազատության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման, ազատությունից զրկված անձի նկատմամբ վատ վերաբերմունքի դեմ իրավական երաշխիք:

Հիմք ընդունելով վերը նշված մեկնաբանությունները՝ միանշանակ կարելի է պնդել, որ առկա է ՎԻՎՕ՝ վարչական ձերբակալումը կարգավորող հոդվածները Սահմանադրությանը և Կոնվենցիայի պահանջներին համապատասխանեցնելու ակնհայտ անհրաժեշտություն այն առումով, որ խնդրո առարկա ընթացակարգերն անձի իրավունքների սահմանափակում ենթադրող բովանդակությամբ Կոնվենցիայի և Սահմանադրության կարգավորումների իմաստով համարվում են ազատությունից զրկում: Չնայած այն հանգամանքին, որ Սահմանադրությամբ և ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորություններով ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ ունի համապատասխան նվազագույն իրավունքներ, վերը նշված հոդվածների ուժով անձը, զրկվելով ազատությունից, սակայն, ձեռք չի բերում այդ իրավունքները: Մասնավորապես, ՎԻՎՕ 262-րդ հոդվածի ուժով անձը կարող է ձերբակալվել մինչև 3 ժամ տևողությամբ, որն ակնհայտ ազատությունից զրկում է համարվում, բայց միևնույն ժամանակ չունի այն նվազագույն իրավունքները, որոնք բխում են Սահմանադրության 27-րդ և Կոնվենցիայի 5-րդ հոդվածների երաշխիքային կարգավորումներից:

Անդրադառնալով «բերման ենթարկելու» ինստիտուտի վերաբերյալ կարգավորումներին՝ պետք է նկատել, որ դրանք սահմանափակվում են ՎԻՎՕ 267-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ անձին բերման ենթարկելու՝ ոստիկանության լիազորության ամրագրմամբ: Մասնավորապես, նշված հոդվածի համաձայն՝ *սույն օրենսգրքի 401 -404, 406 -4012, 53, 147 հոդվածի երկրորդ մասով, 172 հոդվածներ*

րոպ, 175 հողվածի երրորդ մասով, 182 և 185 հողվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելիս վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությունը պարտադիր է: Ոստիկանության կամ ժողովրդական դատավորի կանչով ներկայանալուց խուսափելու դեպքում այդ անձը կարող է ոստիկանության կողմից բերման ենթարկվել:

Օրենսդրական այս կարգավորումից կարելի է թերևս եզրակացնել, որ «բերման ենթարկելու» նպատակը վարչական պատասխանատվության ենթարկվող անձի՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու պարտավորության ապահովումն է: Միննույն ժամանակ, «բերման ենթարկելու» հետ կապված վերոնշյալ կարգավորումները տրված են վարչական պատասխանատվության ենթարկվող անձի՝ իբրև վարույթին մասնակցող անձի իրավունքների և պարտականությունների ամրագրման և դրանց ապահովման համատեքստում: Մինչդեռ, քննարկվող հողվածի իմաստով անձին «բերման ենթարկելը»՝ որպես անձի անձնական ազատության իրավունքը սահմանափակող միջոցառում, ենթադրում է ինստիտուցիոնալ կանոնակարգումների նախատեսում: Այլ կերպ ասած՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի բնականոն ընթացքի ապահովմանն ուղղված այս միջոցառումը՝ իբրև ինստիտուտ, ենթադրում է համակարգային կանոնակարգվածություն՝ բերման ենթարկելու ընթացակարգերի հստակեցմամբ, անձի՝ որպես վարույթի մասնակցի կարգավիճակից բխող իրավունքներից զատ, ազատությունից զրկվելու փաստով պայմանավորված համապատասխան իրավունքների երաշխավորմամբ:

Այնուհետև, ՎԻՎՕ «Խախտողի բերումը» վերտառությամբ հողվածն ամրագրում է, որ *վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու նպատակով, եթե արձանագրություն կազմելը պարտադիր է, երբ տեղում այն կազմել հնարավոր չէ, խախտողը ոստիկանության աշխատողի կողմից կարող է բերվել ոստիկանություն:*

Բացի այդ, հողվածն ամրագրում է, որ որոշակի (հողվածում ամրագրված) վարչական իրավախախտումների դեպքում անձին ոստիկանություն բերելը կարող է *իրավախախտումները կանխելու, խախտողի անձը պարզելու և իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու նպատակ հետապնդել:*

ՎԻՎՕ 259-րդ հողվածն ամրագրում է, որ *վարչական իրավախախտումները կանխելու նպատակով, եթե սպառվել են ներգործության մյուս միջոցները, անձը պարզելու, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու նպատակով, եթե տեղում այն կազմելը հնարավոր չէ, և եթե արձանագրություն կազմելը պարտադիր է, գործերի ժամանակին ու ճիշտ քննումը և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով որոշումների կատարումը ապահովելու նպատակով թույլատրվում են անձի վարչական ձերբակալում, անձնական զննում, իրերի զննում և իրերի ու փաստաթղթերի վերցնում:*

Վերոնշյալ հողվածների բովանդակությունների համեմատական ուսումնասիրությունը վկայում է, որ անձին ազատությունից զրկելու՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված կոնկրետ ինստիտուտի կիրառումը կարող է կանխորոշվել հակաիրավական արարքների շրջանակով: Այսպես, օրինակ, բերման ենթարկելը՝ որպես վարչական պատասխանատվության ենթարկվող անձի պարտավորության ապահովման միջոց, կարող է կիրառվել ՎԻՎՕ 267-րդ հողվածի երկրորդ պարբերությամբ ամրագրված վարչական իրավախախ-



տումների վերաբերյալ գործերով: Բացի այդ, օրենսգրքով որոշակիորեն տարբերակված է ազատությունից զրկելու կոնկրետ ընթացակարգով պայմանավորված՝ այդպիսի հարկադրանքի միջոց կիրառելու սուբյեկտների շրջանակը:

Մինևույն ժամանակ, անձի ազատության իրավունքի լիարժեք ապահովումը վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի շրջանակներում ենթադրում է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ խնդրո առարկա ինստիտուտների բովանդակային ինքնուրույնության ապահովում, ինչը կանխորոշվում է նախևառաջ այդ ինստիտուտների՝ օրենսդրությամբ սահմանված միմյանցից տարբերվող նպատակներով և հիմքերով:

Մինչդեռ, մեջբերված օրենսդրական դրույթների համեմատական ուսումնասիրությունը հիմք է տալիս ենթադրելու, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի շրջանակներում անձին բերելու և ձերբակալելու ընթացակարգերի կիրառման նպատակները՝ իրավախախտի անձը պարզելու, իրավախախտումը կանխելու կամ արձանագրություն կազմելու առումով, մասնակիորեն համընկնում են: Ստացվում է, որ օրենսդրական գործող ձևակերպումների պայմաններում բավարար որոշակիությամբ հստակեցված չեն իրավունքի սահմանափակման տեսանկյունից նույնաբնույթ իրավական կառուցակարգերի տարբերակիչ առանձնահատկությունները:

Արդյունքում, ՎԻՎՕ վերոնշյալ կարգավորումների համեմատական ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդել, որ նախ՝ հստակ տարանջատված չեն վարչական ձերբակալման, բերման ենթարկելու և բերելու ինստիտուտների նպատակները, կիրառման հիմքերը, ամրագրված չեն ազատությունից զրկված անձի իրավունքները, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթին մասնակցող անձանց կարգավիճակը, ում նկատմամբ կարող է կիրառվել այդպիսի միջամտություն:

Ազատությունից զրկելու ընթացակարգերի հստակ և իրավական որոշակիության պահանջներից բխող իրավակարգավորումները բացակայում են՝ թե՛ այդ ընթացակարգերի նպատակների, կիրառման հիմքերի տարանջատման, թե՛ դրանց՝ որպես անձի ազատության իրավունքի սահմանափակում ենթադրող միջոցների կիրառմամբ պայմանավորված՝ անձի որոշակի իրավունքների ապահովման տեսանկյունից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ անձին ազատությունից զրկելու՝ սահմանադրական և միջազգային իրավական մոտեցումներին համապատասխան կանոնակարգումների բացակայության խնդրի հետ կապված հարկ է նկատել, որ դեռևս 2012 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած դիմումի շրջանակներում իր մտահոգությունն էր հայտնել վարչական ձերբակալման ենթարկված անձի՝ այդ մասին այլ անձանց տեղյակ պահելու իրավունքի իրավակարգավորման և իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ: Չնայած ՀՀ սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 16-րդ հոդվածով ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի՝ այդ մասին իր կողմից ընտրված անձին անմիջականորեն և անձամբ տեղեկացնելու իրավունքի ապահովման սահմանադրական պահանջին՝ ՎԻՎՕ 260-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավակարգավորմամբ նշված իրավունքի իրացումը կրում էր միջնորդավորված բնույթ և կախվածության մեջ էր դրվում պաշտոնատար անձի հայեցողությունից:

Արդյունքում, Սահմանադրական դատարանը 2012 թվականի նոյեմբերի 23-ին

ՎԻՎՕ 260-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչեց հակասահմանադրական: Սակայն խնդրո առարկա դրույթի՝ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելուն չհաջողդեցին վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի շրջանակներում անձի անձնական ազատության իրավունքի սահմանափակման պատշաճ կառուցակարգերի, մասնավորապես՝ ազատությունից զրկված անձի իրավունքների անմիջական իրացման ապահովմանն ուղղված օրենսդրական փոփոխություններ:

Ազատությունից զրկված անձի իրավունքների ապահովման սահմանադրական պահանջի իրագործման և ազատությունից զրկման ընթացակարգի իրավաչափության ապահովման տեսանկյունից խիստ կարևոր նշանակություն է ձեռք բերում անձին ազատությունից փաստացի զրկման պահի ճիշտ հաշվարկման ապահովումը: Այս հարցի լուծումն ունի ելակետային նշանակություն, քանի որ դրա հետ են կապվում անձի կողմից իրավունքների ձեռքբերումը և պետության համապատասխան պարտականությունների առաջ գալը: Այսպես, ՎԻՎՕ 262-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ *վարչական ձերբակալման ժամկետը հաշվվում է արձանագրություն կազմելու համար խախտողին բերելու պահից:*

Սրա հետ կապված՝ հարկ ենք համարում նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ընթացքում քննարկման առարկա են դարձել բազմաթիվ դեպքեր՝ կապված վարչական ձերբակալման ենթարկված անձին օրենքով սահմանված առավելագույն ժամկետից ավել անազատության մեջ պահելու հետ:

Վարչական ձերբակալման՝ օրենքով սահմանված առավելագույն ժամկետի խախտումներով այդպիսի իրավակիրառ պրակտիկայի հիմքում ընկած է անձի՝ ձերբակալվածի կարգավիճակ ձեռք բերելու սկզբնական պահի ճիշտ հաշվարկման խնդիրը: Այլ կերպ ասած՝ վերը նշված հոդվածի իմաստով «բերելու պահից» եզրույթը ազատությունից զրկման՝ սահմանադրական պահանջների և միջազգային իրավական մոտեցումների համատեքստում պետք է ենթադրի անձի ձերբակալման գործընթացի՝ անձին փաստացի ազատությունից զրկելու փուլը: Մինչդեռ, գործնականում անձի իրավունքների խախտումները՝ կապված ձերբակալման ժամկետների հետ, վկայում են, որ խնդրո առարկա դրույթը սահմանադրական պահանջներին հակասող մեկնաբանություն և կիրառություն է ստացել: Դա պայմանավորված է նաև նրանով, որ արհեստական բաժանում է իրականացված ազատությունից զրկելու մեխանիզմի առանձին տարրերի միջև: Իրականում այդ տարրերը պետք է դիտարկվեն իբրև միասնական մեխանիզմի մասեր, որոնցից թեկուզև մեկի ընթացքում արձանագրված խախտումը կարող է հանգեցնել ողջ մեխանիզմի փլուզմանը:

Իրավակիրառ պրակտիկայի իրավաչափությունը, մեր համոզմամբ, այս հարցում կարող է ապահովվել օրենսդրական կանոնակարգումների հստակեցմամբ՝ իրավունքների լիարժեք իրացումն ապահովելով անձին փաստացի ազատությունից զրկելու պահից, կամ օրենսդրական առկա ձևակերպումների՝ սահմանադրաիրավական մոտեցումներին համահունչ բովանդակային բացահայտմամբ և իրավակիրառման համար պարտադիր նշանակություն ունեցող մեկնաբանմամբ:

Կարծում ենք, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի ընթացքում անձին ազատությունից զրկելու ընթացակարգերի հստակ կարգավորումների բացակայությունն այնքանով, որքանով ամրագրված չեն ազատությունից զրկման յուրաքանչյուր դեպքում անձի՝ Կոնվենցիայով և Սահմանադրությամբ երաշխավորված նվազագույն իրավունքները և դրան համապատասխան իրավասու

մարմնի պարտականությունները, հակասում են ՀՀ Սահմանադրության 26-րդ և 27-րդ հոդվածների պահանջներին:

Անձի՝ ազատությունից զրկվելու փաստով պայմանավորված նվազագույն իրավունքների երաշխավորման համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ նաև ՎԻՎՕ՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի շրջանակներում ազատությունից զրկվելու իրավաչափության բողոքարկման հնարավորությամբ: Այսպես, ՎԻՎՕ 266-րդ հոդվածը սահմանում է, որ վարչական ձերբակալումը, անձնական զննությունը, իրերի զննությունը և իրերն ու փաստաթղթերը վերցնելը կարող են շահագրգռված անձի կողմից զանգատարկվել վերադաս մարմնին (պաշտոնատար անձին) կամ դատախազին:

Մեջբերված օրենսդրական կարգավորումից ուղղակիորեն բխում է, որ օրենսգիրքն ամրագրում է վարչական ձերբակալման իրավաչափության վիճարկման արտադատական կարգ: Ինչ վերաբերում է ազատությունից զրկման այլ ընթացակարգերի՝ բերման ենթարկելու և իրավախախտի բերման իրավաչափության վիճարկման իրավունքի ապահովմանը, օրենսգրքի համապատասխան կարգավորումներն ուղղակի բացակայում են:

Մինչդեռ, Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասն ուղղակիորեն ամրագրում է, որ անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:

Սահմանադրության 27-րդ հոդվածի կարգավորման տառին համահունչ՝ ազատությունից զրկման փաստով պայմանավորված անձի միասնական իրավունքների ապահովման գաղափարի պատշաճ օրենսդրական արտացոլման հրամայականը ենթադրում է ազատությունից զրկման բոլոր ընթացակարգերի, մասնավորապես՝ խնդրո առարկա վարչական ձերբակալման, ինչպես նաև բերման ենթարկելու և իրավախախտի բերման դեպքերում անձի իրավունքների նվազագույն ծավալի, այդ թվում՝ իրեն ազատությունից զրկելու իրավաչափության՝ դատական կարգով վիճարկման իրավունքի ապահովում: Ընդ որում, սահմանադրական այս իրավունքի ամրագրումն ինքնանպատակ չէ: Դրա հիմնարար նշանակությունը անձի իրավական հնարավորությունն է ազատ արձակվելու՝ իրեն ազատությունից զրկելու ոչ իրավաչափության վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա:

Ասվածը հիմք է տալիս միանշանակ եզրակացնելու, որ ՎԻՎՕ 266-րդ հոդվածի կարգավորումները, ինչպես նաև բերման ենթարկելու և իրավախախտի բերման հետ կապված կարգավորումները՝ բողոքարկման համապատասխան կառուցակարգեր չնախատեսելու առումով, ուղղակիորեն չեն բավարարում Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու ընթացակարգերի՝ սահմանադրական պահանջներին համապատասխանության առումով խնդրահարույց լինելու վերաբերյալ վերը նկարագրված եզրահանգումները հիմնվում են ոչ միայն դրանց տեսական վերլուծության ու մեկնաբանության, այլև Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության շրջանակներում վեր հանված այդպիսի բազմաթիվ դեպքերի գործնական քննության և թույլ տրված խախտումների վերհանման արդյունքների վրա:

Այս առումով, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից արձանագրված

խնդրահարույց դեպքերն ապացույցն են այն բանի, որ անձի ազատության իրավունքի երաշխավորմանն ուղղված կոնվենցիոն և սահմանադրական դրույթները վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի շրջանակներում լիարժեք արտացոլող՝ հստակ ու որոշակի օրենսդրական կարգավորումների բացակայության պատճառով ձևավորվել է կայուն ոչ իրավաչափ պրակտիկա:

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ընթացքում քննության առարկա են դարձել բազմաթիվ դեպքեր՝ կապված անձին ազատությունից զրկելու հիմքերը չներկայացնելու, վերջինիս իրավունքներն ու պարտականությունները չպարզաբանելու, այդ թվում՝ այլ անձին իր գտնվելու վայրի մասին տեղեկացնելու, փաստաբանի մուտքը ոստիկանության բաժին չթույլատրելու հետ: Օրինակ՝ փաստաբանի մուտքը չի թույլատրվում ոստիկանության բաժին, կամ չի ապահովվում իր նախընտրած անձին տեղեկացնելու իրավունքն այն ոչ իրավաչափ պատճառաբանությամբ, թե անձն ընդամենը բերման է ենթարկվել և երբ ձերբակալվի, նրան այդ հնարավորությունը կտրվի: Ընդ որում, Սահմանադրության 27-րդ հոդվածը, ազատությունից զրկված անձի այդ իրավունքի իրականացման հետաձգման հնարավորություն նախատեսելով հանդերձ, ամրագրում է դրա իրավաչափության պայմաններ՝ հետաձգումը միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով: Սահմանադրական դրույթից փաստորեն բխում է, որ այդ իրավունքի հետաձգման իրավաչափությունը պայմանավորվում է հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակի առկայությամբ, այսինքն՝ քրեական վարույթի շրջանակներում:

Բազմաթիվ են դեպքերը, երբ չնայած ազատությունից զրկված անձին ազատությունից զրկելու պատճառների մասին անհապաղ տեղեկացնելու սահմանադրական ուղիղ պահանջին, ընդհանրապես որևէ հիմք չի պարզաբանվում: Փոխարենը, օրինակ, ընդամենը նշվում է, որ ոստիկանության լրատվական ծառայությունը տարածել է հայտարարություն, և գործողությունների օրինականությունն էլ դրանով է պատճառաբանվում<sup>1</sup>: Նույն կերպ, տարածված պրակտիկա է, երբ ազատությունից զրկելու պահին պատճառները պարզաբանելու փոխարեն նշվում է, որ դա կարվի ոստիկանության բաժնում կամ բաժին տանելու ճանապարհին: Ընդ որում, առանձին բողոքներ նույնիսկ վկայում են, որ բաժնում գտնվելու ընթացքում էլ չեն պարզաբանվում, այլ նշվում է, թե դա կարվի ձերբակալման պահին:

Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները, ինչպես նաև իրականացվող մոնիթորինգների արդյունքները վկայում են, որ խնդրո առարկա ընթացակարգերի հստակ կարգավորումների բացակայությունը հանգեցրել է իրավակիրառման պրակտիկայի ոչ իրավաչափությանը նաև այն առումով, որ գործնականում անձին ազատությունից փաստացի զրկման հստակ ընթացակարգ գոյություն չունի, որի շրջանակներում կապահովվեին ներգործության այդ միջոցի կիրառման իրավաչափության բոլոր երաշխիքները: Ասվածն առավել առարկայական դարձնելու համար բավարար է հիշատակել, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանի՝ ազատությունից զրկման վայրեր կատարած այցերի ընթացքում իրավասու մարմինների պարզաբանումները՝ կապված ազատությունից զրկելու փաստով պայմանավորված անձի իրավունքների ապահովման հետ: Մասնավորապես, ազատությունից զրկելու պատճառների, իր ընտրած անձին իր գտնվելու տեղի մա-

<sup>1</sup> <http://www.aravot.am/2016/06/25/708191/>

սին անհապաղ չտեղեկացնելու կամ առհասարակ առանց որոշակի պատճառի անձի նկատմամբ այդպիսի ներգործություն կիրառելու պրակտիկան ոստիկանության ծառայողների կողմից պատճառաբանվում է նրանով, որ փաստացի արգելանքի վերցված կամ ոստիկանական շենք բերված անձը դեռևս ձերբակալվածի և, հետևաբար, ազատությունից զրկվածի կարգավիճակ չունի, ուստի դեռևս կիրառելի չեն նույնիսկ ՎԻՎՕ՝ ձերբակալման հետ կապված առկա կարգավորումները:

Փաստորեն, օրենսդրական անկատար կարգավորումներից բխող այդպիսի իրավակիրառման պրակտիկայի արդյունքում անձը, փաստացի հայտնվելով անազատության մեջ, չի ապահովվում իր իրավունքի սահմանափակումից բխող երաշխիքներով: Դրանից բացի, ազատությունից զրկելը կապվում է միայն ձերբակալման հետ, որպիսի գործընթացը՝ որպես այդպիսի իրավունքներ երաշխավորող ընթացակարգ, ֆորմալ առումով սկսվում է ոստիկանական շենք բերելուց հետո անձի ձերբակալման գործընթացի «նախաձեռնմամբ»՝ ձերբակալման արձանագրություն կազմելով:

Ընդ որում, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ խնդրո առարկա ընթացակարգերի իրավաչափության ապահովման տեսանկյունից անհրաժեշտ են հստակ կարգավորումներ նաև անձին ազատությունից զրկման փաստի առիթով արձանագրություն կազմելու, ազատությունից զրկված անձին այն հանձնելու, արձանագրության բովանդակությանը ներկայացվող պահանջների հետ կապված: Մինչդեռ պրակտիկան վկայում է, որ տարածում ունեն դեպքեր, երբ քաղաքացին բողոքում նշում է, օրինակ, բռնության գործադրման մասին, սակայն ոստիկանության կազմած արձանագրությունը չի պարունակում նշում այդ մասին, ինչի հիմքում ընկած է հենց օրենսդրական թերի կարգավորվածությունը:

Միջազգային չափանիշների և սահմանադրական կարգավորումների տեսանկյունից անթույլատրելի այս պրակտիկան մեծացնում է բռնությունների գործադրման վտանգը ազատությունից զրկված անձանց նկատմամբ, ինչն իր հերթին հանգեցնում է վատ վերաբերմունքի չենթարկվելու սահմանադրական իրավունքի խախտումների: Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներն են հենց վկայում այն մասին, որ խնդրո առարկա իրավակարգավորումների սահմանադրականության հարցի քննարկումը կարևորվում է նաև խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու սահմանադրական բացարձակ արգելքի և ազատությունից զրկված անձանց նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի իրավունքի ապահովման տեսանկյունից:

Ակնհայտ է, որ ազատությունից զրկման ընթացակարգերի նման արհեստական տարանջատման և ընթացակարգերի ձևական կողմով պայմանավորված՝ համարժեք իրավական երաշխիքների չտրամադրման պրակտիկան ուղղակիորեն հակասում է անձի իրավունքների ապահովման սահմանադրական սկզբունքներին:

Այսպիսով, խնդրո առարկա կարգավորումների և դրանց իրավակիրառման պրակտիկայի վերաբերյալ կատարված վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ ՎԻՎՕ քննարկվող ինստիտուտների իրավակարգավորումների սահմանադրականության հարցն ինչպես դրանց՝ Սահմանադրությանը հակասող կարգավորվածության, այնպես էլ բովանդակային ընդգրկման ծավալների, այսինքն՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների իրացումն ապահովող անհրաժեշտ իրավական լուծումների բացակայության մեջ է:

Այս առումով հարկ է նկատել, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 05.02.2010 թվականի ՍԴՈ-864 և 14.09.2010 թվականի ՍԴՈ-914 որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ Սահմանադրական դատարանի կողմից օրենքի բացի սահմանադրականության հարցի քննության իրավական հնարավորության առնչությամբ: Սահմանադրական դատարանի ՍԴՈ-864 որոշմամբ սահմանվել է, որ «Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, **եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որ խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք**»:

Սահմանադրական դատարանի ՍԴՈ-914 որոշմամբ սահմանվել է, որ «Օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, **կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը**: Հակառակ պարագայում իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը»:

Սահմանադրական դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով խնդրո առարկա իրավակարգավորումների սահմանադրականության հարցին՝ միանշանակ կարելի է պնդել, որ ՎԻՎՕ՝ ազատությունից զրկելու ընթացակարգերի գործող բավարար որոշակիություն և համապարփակություն չունեցող կանոնակարգումները, իսկ որոշ դեպքերում՝ այդպիսի կարգավորումների բացակայությունը չեն ապահովում Սահմանադրության 26-րդ և 27-րդ հոդվածների՝ որպես անմիջականորեն գործող հիմնական իրավունքների իրացման հնարավորություն՝ հանգեցնելով այդ իրավունքները խախտող իրավակիրառ պրակտիկայի ձևավորման:

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու ընթացակարգերի կարգավորումների սահմանադրականության հարցի շրջանակներում հարկ ենք համարում անդրադառնալ նաև խնդրո առարկա իրավակարգավորումների հետ համակարգային առումով փոխկապակցված օրենսդրական այլ ակտերի դրույթներին:

Նախ, վարչական ձեռքարկման և բերման ենթարկելու ինստիտուտների՝ օրենսդրական և իրավակիրառման ոլորտներում առկա խնդիրների վերհանումն ու ներկայացումը հիմք են տալիս եզրահանգելու, որ այդ ընթացակարգերի հստակ կարգավորումները պետք է տրվեն հենց ՎԻՎՕ-ի՝ որպես վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի իրականացման կարգը սահմանող օրենքի շրջանակներում: Եվ այս տեսանկյունից «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի կարգավորումները՝ մասնավորապես վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում անձի իրավունքների ու ազատությունների սահմանափակման հետ կապված ոստիկանության լիազորությունների շրջանակների, դրանց իրավաչափության իրավական երաշխիքների ամրագրման առումով, պետք է բխեցվեն

ՎԻՎՕ՝ անձի իրավունքների սահմանափակմամբ ուղեկցվող ընթացակարգերի կարգավորումներից՝ ապահովելով դրանցով ամրագրված բոլոր երաշխիքները:

Մինչդեռ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ մարդու խնդրանքով իր իրավունքների ու պարտականությունների ծանուցումը կատարվում է գրավոր: Ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Այնինչ, Սահմանադրության 27-րդ հոդվածի տառից, ինչպես նաև 75-րդ և 79-րդ հոդվածների՝ սույն վերլուծության մեջ բովանդակային բացահայտում ստացած ելակետային սահմանադրաիրավական մոտեցումներից բխում է, որ անձի անձնական ազատության իրավունքը սահմանափակող ընթացակարգերի բովանդակությունը՝ նախևառաջ անձի իրավունքների ամրագրման և դրանց ապահովման առումով, պետք է բացահայտվի օրենքի մակարդակում:

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու՝ օրենքով ամրագրված հստակ կառուցակարգերի և ընթացակարգերի բացակայության պայմաններում ոստիկանության կողմից ազատության իրավունքի սահմանափակմամբ պայմանավորված՝ անձի իրավունքների ցանկն ու դրանց ծանուցման կարգն իրենց ամրագրումն են ստացել ենթաօրենսդրական ակտով՝ ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի «Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին» թիվ 818-Ն որոշմամբ:

Միևնույն ժամանակ, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, գործնականում չեն ապահովվում անգամ Կառավարության վերը նշված որոշման պահանջները, որպիսի հանգամանքը, մեր համոզմամբ, պայմանավորված է հենց սահմանադրաիրավական երաշխիքներին համահունչ օրենքով տրված իրավակարգավորումների բացակայությամբ:

Այնուհետև, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի նույն հոդվածի 6-րդ մասն ամրագրում է, որ ոստիկանությունը պարտավոր է ձերբակալված անձանց իրական հնարավորություն ընձեռել օգտվելու իրավաբանական օգնություն ստանալու իրավունքից, ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում, տեղյակ պահել նրանց հարազատներին, իսկ նրանց բացակայության դեպքում՝ աշխատանքի կամ ուսման վայրի վարչակազմին՝ նրանց գտնվելու վայրի մասին:

Այս առումով, անձի անձնական ազատությունը երաշխավորող սահմանադրաիրավական մոտեցումների տեսանկյունից վերոնշյալ օրենսդրական կարգավորումն այնքանով, որքանով ամրագրում է ոստիկանության պարտականությունն ապահովելու անձի՝ իր գտնվելու տեղի մասին տեղեկացնելու իրավունքը ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում, ուղղակիորեն չի ապահովում Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Այսպիսով, իրականացված վերլուծության արդյունքները հիմք են տալիս պնդելու, որ ազատությունից զրկելու մեխանիզմի գործադրման սկզբնական պահ պետք է համարել անձին փաստացի արգելանքի վերցնելը՝ անկախ նրա նկատմամբ կիրառվող ներգործության միջոցի ֆորմալ անվանումից կամ անձի կարգավիճակից: Ըստ այդմ էլ, անձի համար պետք է առաջանան հետևյալ իրավունքները՝

1. անհապաղ տեղեկացվել ազատությունից զրկվելու պատճառների մասին,

2. իրեն ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը,

3. փաստաբանի իրավունքը,

4. բժշկական զննության ենթարկվելու իրավունքը, այդ թվում՝ իր նախընտրած բժշկի կողմից,

5. իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու և դատարանի կողմից ազատ արձակվելու իրավունքը, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:

Իրավախախտում կատարած լինելու հիմքով անձին ազատությունից զրկելու ընթացակարգի շրջանակներում վերը նշված համընդհանուր իրավունքներից բացի պետք է ապահովվի նաև լռություն պահպանելու անձի իրավունքը:

## ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ ПРАВ ЧЕЛОВЕКА ПРИ АДМИНИСТРАТИВНОМ АРЕСТЕ И ЗАДЕРЖАНИИ В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННОЙ КОНЦЕПЦИИ ЛИШЕНИЯ СВОБОДЫ

**Арман Татоян**

*Защитник прав человека Республики Армения,*

*Судья ad hoc в Европейском суде по правам человека,*

*Доцент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ,*

*кандидат юридических наук*

Статья посвящена комплексному исследованию ряда проблем правовых регулирований процедур административного ареста и задержания. В частности, автором был проведен всесторонний анализ международно-правовых стандартов по защите права на личную свободу. В пределах проведенного исследования автором также были анализированы конституционные основы права на личную свободу, раскрыв правовое содержание конституционной концепции лишения свободы.

В свете международных подходов и конституционно-правовых гарантий были рассмотрены не только законодательные регулирования данных институтов, но и проблемы их правоприменения, тем самым предвещая как научно-теоретическое, так и практическое значение данного исследования. В результате проведенного анализа автором были выявлены основные факторы законодательного и практического характера, препятствующие обеспечению необходимых процессуальных гарантий при лишении свободы лица в рамках производства административного правонарушения. Тем самым, на основе результатов исследования были выдвинуты научно обоснованные предложения по устранению данных проблем и по реализации конституционного права каждого на личную свободу.



## ISSUES ON THE PROTECTION OF HUMAN RIGHTS DURING ADMINISTRATIVE ARREST AND APPREHENSION IN THE CONTEXT OF THE CONSTITUTIONAL CONCEPT OF DEPRIVATION OF LIBERTY

**Arman Tatoyan**

*Human Rights Defender of the Republic of Armenia,  
Ad Hoc Judge at European Court of Human Rights,  
Docent at the YSU Chair of Criminal Procedure and Criminalistics,  
Candidat of Legal Sciences*

---

Within the scope of this article a number of issues concerning the legislative regulations of the procedures of administrative arrest and apprehension have been discussed. Particularly, the comprehensive study on the international standards for the protection of the right to personal liberty has been done. Within this research, the author has analyzed constitutional foundations of the right to personal liberty, revealing the legal content of the constitutional concept of deprivation of liberty as well.

In the light of the international and constitutional principles, the legislative regulations of these institutions as well as the practical aspects have been discussed, thus predetermining both theoretical and practical importance of this analysis. As a result, the author has raised the main problems of providing the procedural guarantees for the persons deprived of liberty within the procedure of administrative offences. Further, the author has drawn evidence-based conclusions of solving those problems and realizing the constitutional right to personal liberty.

**Բանալի բառեր** - վարչական ծերբակալում, բերման ենթարկել, ազատությունից զրկում, անձնական ազատության իրավունք, իրավախախտի բերում, ազատությունից զրկված անձ, իրավունքների ապահովում, ընթացակարգային երաշխիքներ:

**Ключевые слова:** административный арест, задержание, лишение свободы, право на личную свободу, привод правонарушителя, лишенное свободы лицо, обеспечение прав, процессуальные гарантии.

**Key words:** administrative arrest, apprehension, deprivation of liberty, right to personal liberty, brought of the offender, person deprived of liberty, protection of rights, procedural guarantees.

## ՄԵՂԱՊՐԱՆՔԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

### Քևորգ Բաղդասարյան

*Երևան քաղաքի դատախազի տեղակալ,  
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Մեղադրանքից հրաժարվելու լիազորությունը մեղադրանքի պաշտպանության դատախազական գործառույթի կարևորագույն բաղադրիչներից մեկն է: Այն բխում է քրեական դատավարությունում դատախազի գործառույթների տրամաբանությունից և հավաստում, որ մեղադրողը կաշկանդված չէ անձին մեղադրանք առաջադրված լինելու կամ այն իր կողմից հաստատված լինելու հանգամանքով և պարտավոր է յուրաքանչյուր դեպքում համարժեք գնահատական տալ մեղադրանքը բացառող հանգամանքներին: Գործի դատական քննության փուլում քրեաիրավական վեճի նոր որակները և այն լուծող դատական մարմնի գոյությունը մեղադրողին չեն ազատում քննության լրիվությունը, բազմակողմանիությունն ու օբյեկտիվությունն ապահովելու պարտականությունից և վերջինիս չեն հանգեցնում վեճին միակողմանիորեն մասնակցող սուբյեկտի: Մեղադրողը պարտավոր է քրեական հետապնդումը բացառող հանգամանք հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում չչարունակել մեղադրանքի պաշտպանությունը:

Մեղադրանքից հրաժարվելու ինստիտուտը բազմաշերտ է և ներառում է մի շարք տեսական ու գործնական հարցեր, որոնք բավարար գիտական ուշադրության պայմաններում նույնիսկ մինչ օրս սպառված չեն: Անկախ այն բանից, որ մեղադրանքից հրաժարվելու դատախազի լիազորության հետ կապված թերևս կարևորագույն՝ դրա հետագա գոյության հարցը բացասական լուծում է ստացել մշակման և փորձագիտական գնահատման ընթացակարգերն սպառած քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում, այդուհանդերձ այդ լիազորության իրականացման հիմնախնդիրներն արդիական են, քանի դեռ քննարկվող ինստիտուտը իրավակիրառումից բացառված չէ:

Մեղադրանքից հրաժարվելու ինստիտուտի ամենակարևոր հարցերից մեկը վերաբերում է դրա արդյունքում կայացվող դատավարական ակտի տեսակին: Տեսական աղբյուրների ուսումնասիրությունը վկայում է, որ քննարկվող ինստիտուտի բազմաթիվ արժեքավոր հետազոտությունները, որպես կանոն, շրջանցում են այդ խնդիրը<sup>1</sup>: Մեղադրանքից հրաժարվելու դատավարական հետևանքների տեսանկյունից գիտական առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում դրա արդյունքում տուժողի իրավունքների երաշխավորման հարցը: Թեև սույն հետազոտության առարկան այդ հիմնախնդրի պես հայեցակարգային չէ, բայց գործնական մեծ նշանակություն ունի և առանձնանում է իր խնդրահարույց բնույթով, ինչը պայմանավորված է առկա իրավակարգավորման անհատակություններով:

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ՝ **В. М. Савицкий**, Процессуальные последствия отказа прокурора от обвинения. //Правоведение, 1/1972, **Ю. Щербаков**, Отказ прокурора от обвинения: последствия для потерпевшего //Законность, 2/2002.

«Վ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում ինչպես արդարացման դատավճիռ, այնպես էլ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելու հնարավորություն: Չի կարելի չնշել, որ ինքնին ոչ այնքան ուշագրավ այս հարցի արդիականացումը պայմանավորված էր այդ հնարավորությունը նախատեսող դատավարական իրավունքի նորմերի դատական մեկնաբանություններով, որոնք, հարցը մասամբ հստակեցնելով հանդերձ, առաջ բերեցին պարզաբանման ենթակա նոր հարցեր, որոնք էլ կդառնան սույն քննարկման առարկան:

«Վ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *մեղադրողը, դատարանում հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, պարտավոր է հայտարարել ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին: Ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին մեղադրողի հայտարարությունը դատարանի համար քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք է:*

«Վ քրեական դատավարության օրենսգրքի 306-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ *դատախազը պարտավոր է հրաժարվել մեղադրանքից, եթե իր համոզմամբ այն չի հաստատվել դատական քննության ընթացքում:*

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *մեղադրանքից դատախազի հրաժարվելու դեպքում դատարանը կարճում է քրեական գործով վարույթը և դադարեցնում քրեական հետապնդումը, իսկ եթե դատախազը հրաժարվում է առանձին մեղադրյալի մասով՝ դադարեցնում է քրեական հետապնդումն այդ մեղադրյալի նկատմամբ:*

«Վ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանը մեղադրանքի այդ մասով կայացնում է արդարացնող դատավճիռ:*

Խնդրի վերաբերյալ **առաջին**՝ դատական վարույթներում բարձրացված մոտեցումը, որն իրավացի է համարում մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանի կողմից քրեական գործի վարույթը կարճելը, հիմնվում է հետևյալ փոխկապակցված փաստարկների վրա.

*Մրցակցության սկզբունք:* Մրցակցային քրեադատավարական կառուցակարգը ենթադրում է մեղադրանքի, պաշտպանության և գործի լուծման գործառույթների տարանջատում և դրանց որոշակի փոխապայմանավորվածություն: Դատախազը, ըստ էության քննելու համար քրեական գործն ուղարկելով դատարան, նախաձեռնում է դատական վարույթ և քրեաիրավական վեճ՝ դրանում պաշտպանելով առաջադրված մեղադրանքի հիմնավորվածության վերաբերյալ դատավարական դիրքորոշումը: Մեղադրանքի պաշտպանությունը մրցակցային կառուցակարգի շարժիչ ուժն է, որը պայմանավորում է պաշտպանության և գործի լուծման գործառույթների իրացման անհրաժեշտությունը, իսկ մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում քրեաիրավական վեճը դառնում է առարկայազուրկ և ըստ էության դադարում է գոյություն ունենալ: Դատարանում մեղադրանքի բացակայությունը վերացնում է ինչպես դրանից պաշտպանվելու, այնպես էլ քրեաիրավական վեճը լու-

ծելու անհրաժեշտությունը: Հետևաբար, մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու պահից գործի դատական քննությունը շարունակվել չի կարող:

*Ղատական քննության փուլային կառուցվածք:* Ղատական քննության փուլը բաղկացած է միմյանց հետ տրամաբանորեն փոխկապակցված և միմյանց շարունակող ենթափուլերից, որոնցից յուրաքանչյուրը պայմաններ է ստեղծում հաջորդին անցնելու համար: Դրանց փոխադարձ կապով պայմանավորված՝ դատարանը չի կարող անցնել յուրաքանչյուր հաջորդ ենթափուլին՝ առանց սպառելու նախորդը: Վճռահատության ենթափուլին ևս դատարանը հասնում է, եթե անցել է մյուս ենթափուլերը, այն է՝ ունկնդրել է դատական վիճաբանություններն ու ամբաստանյալի վերջին խոսքը: Ուստի դատավճիռ կայացնելը դատական քննության տրամաբանական ավարտն է այն դեպքում, երբ դատական վարույթը շարունակվում է օրինաչափ ընթացքով: Դատական քննությունը կարող է և չհասնել դատավճռի կայացմամբ ավարտին, եթե դրա ընթացքում ի հայտ գան այն խոչընդոտող, բացառող հանգամանքներ: Այս դեպքում դատական քննությունն ավարտվում է գործն ըստ էության լուծող այլ դատական ակտ կայացնելով՝ քրեական գործի վարույթը կարճելով կամ քրեական հետապնդումը կոնկրետ մեղադրյալի նկատմամբ դադարեցնելով:

Քննարկվող մոտեցումը նշված երկու փաստարկների համադրությամբ պնդում է, որ այնքանով, որքանով մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելուց հետո դատական քննությունը մրցակցության սկզբունքի ուժով չի կարող շարունակվել, ուստի մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանը չի կարող հասնել վճռահատության փուլ և կայացնել արդարացման դատավճիռ: Այս մոտեցումը վերոնշյալ փաստարկներին համապատասխան է բացատրում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումը և փաստում, որ մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու արդյունքում արդարացման դատավճիռ կարող է կայացվել միայն այն դեպքում, երբ մեղադրանքից հրաժարումը մասնակի է, այսինքն՝ մեղադրողը հրաժարվել է ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի մի մասից: Այդ դեպքում քննությունը մեղադրանքի մնացած մասով շարունակվում է, և դատարանը, օրինաչափորեն հասնելով վճռահատության փուլ, գնահատական է տալիս նաև նույն ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի այն մասին, որից մեղադրողը հրաժարվել է: Դրա օգտին է վկայում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի «*ղատարանը մեղադրանքի այդ մասով կայացնում է արդարացնող դատավճիռ*» ձևակերպումը:

Այս մոտեցումը պաշտպանվում է նաև առանձին տեսաբանների կողմից, ովքեր, նշվածից բացի, դրա օգտին բերում են նոր փաստարկներ: Օրինակ, Ա.Ա. Միխայլովը նշում է, որ «դատավճռի, այդ թվում՝ արդարացման դատավճռի կայացման մասին խոսք կարող է լինել այն դեպքում, երբ դատարանն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմամբ և լուծում գործը: Իսկ դատախազի կողմից մեղադրանքից հրաժարվելու հանգամանքով պայմանավորված որոշում կայացնելիս դատարանը չի կարող դատավճռում արտահայտել իր անհամաձայնությունը մեղադրողի փաստարկներին, եթե դրանց հետ համաձայն չէ»<sup>1</sup>:

<sup>1</sup> А. А. Михайлов, Изменение прокурором обвинения и отказ прокурора от обвинения в суде первой инстанции. Автореф. Дисс. ... канд юрид наук. Томск, 2008, էջ 26:

Վ. Կորզարը ևս, քննարկելով մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու այն դեպքը, երբ դատարանը հրաժարման հետ համաձայն չէ, ճիշտ է համարում ոչ թե արդարացման դատավճիռ, այլ քրեական գործի վարույթը կարճելու որոշում կայացնելը՝ հետագա դատաքննությունը բացառող դատավարական արգելքի առկայության պատճառով<sup>1</sup>:

Դրան հարող հիմնավորում է ներկայացնում Ա. Ա. Շիշկինը՝ նշելով, որ «դատախազի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանի անկախության սկզբունքը կխախտվի, քանի որ մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելը ուղղակի կպարտադրի դատարանին կայացնել արդարացման դատավճիռ՝ առանց դատարանի դիրքորոշումը հաշվի առնելու»<sup>2</sup>:

Իսկ Ն.Ա. Ժումականովան թեև իր հետազոտության մեջ քննարկվող խնդրին առանձին չի անդրադառնում, սակայն դրանց արդյունքում ներկայացվող մի շարք առաջարկություններ կապում է մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու որոշման հետ<sup>3</sup>:

**Երկրորդ** մոտեցումը, որն արտահայտված է *Կարեն Ստեփանյանի և Մկրտիչ Հովհաննիսյանի* վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ, հիմնվում է *քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հայտարարելու և մեղադրանքից հրաժարվելու* մեղադրողի լիազորությունների տարանջատման վրա:

Համաձայն այդ մոտեցման՝ դատախազը հայտարարում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին՝ հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող «ոչ արդարացնող» հիմքեր (օրինակ՝ անցել են վաղեմության ժամկետները, ընդունվել է համաներման ակտ և այլն) և շարունակելով պնդել հանցագործության առկայությունն ու ամբաստանյալի կողմից այն կատարելու հանգամանքը: Դատախազի այդպիսի հայտարարությունն ինքնին քրեական գործի վարույթն անվերապահորեն բացառող հանգամանք չէ, և դատարանի կողմից պետք է քննության առնվի միջնորդությունների քննարկման կարգով, այն է՝ դատարանը պետք է պարզի դատախազի կողմից նշված քրեական հետապնդումը բացառող հանգամանքն իրական լինելու և այդ հիմքով գործի վարույթն ավարտելուն խոչընդոտող դատավարական արգելքների բացակայության փաստը (մեղադրյալի առարկություն, հատուցման ենթակա վնասի կապակցությամբ վեճի առկայություն և այլն) և ինչի արդյունքում որոշում կայացնի քրեական հետապնդումը դադարեցնելու մասին կամ մերժի դատախազի միջնորդությունը: Մեղադրողը **մեղադրանքից հրաժարվում է**՝ դատարանում հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող «արդարացնող» («ռեաբիլիտացիոն») հիմքեր: Մեղադրանքից հրաժարվելու վերաբերյալ դատախազի կամահայտնությունը հավասարազոր է մեղադրանքի (մեղավորության մասին վեճի) բացակայության, որպիսի պայմաններում

<sup>1</sup> Տե՛ս **В. Кобзарь.**, Отказ прокурора от обвинения. //Законность, 4/2001, <https://www.lawmix.ru/comm/6254>

<sup>2</sup> **А. А. Шишкин**, К вопросу о соответствии полномочий прокурора в отказе от обвинения конституционному принципу презумпции невиновности.//Законность и правопорядок в современном обществе, 6/2011. էջ 228:

<sup>3</sup> Տե՛ս **Н. А. Жумаканова.** Отказ прокурора от обвинения. Вопросы теории и практики. Автореф. Дисс. ... канд юрид наук. Екатеринбург, 2014.

քրեական դատավարությունը չի կարող շարունակվել, և դատարանը պարտավոր է ավարտել գործի վարույթն արդարացման հիմքով: Այս վերլուծությամբ վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատախազի՝ վերը նշված երկու լիազորությունները նույնացնելու լեզվաբանական և քրեադատավարական հիմքեր չկան:

Մեղադրանքից հրաժարվելու դատավարական հետևանքների հարցը բարձրագույն դատական ատյանը քննարկում է արդարացման դատավճռի նշանակության և դատական քննության փուլային առանձնահատկությունների համատեքստում և փաստում նաև տեսության մեջ ընդունելի այն հանգամանքը, որ միայն արդարացման դատավճիռը կարող է ամբողջապես ռեաբիլիտացնել ամբաստանյալին հասարակության աչքերում<sup>1</sup>: Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը՝ թեկուզև արդարացնող հիմքով, հասարակության մեջ կարող է նույնացվել անձի մեղքն «ապացուցված չլինելու» հետ, մինչդեռ դատական նիստում կայացված արդարացման դատավճիռը դատարանի հետևությունն է ամբաստանյալի անմեղության և ներկայացված մեղադրանքի հիմնագուրկ լինելու վերաբերյալ:

Այնուհետև, կարևորելով արդարացման հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու դատարանի իրավասությունը, վճռաբեկ դատարանը նշում է, որ արդարացման հիմքով քրեական հետապնդման դադարեցումն արդեն իսկ սկսված դատաքննության պայմաններում, երբ հանցագործության փաստական հանգամանքները պարզելու նպատակով ուսումնասիրվում են ապացույցներ, արդարացված չէ և կարող է հանգեցնել ամբաստանյալի դատավարական երաշխիքների չեզոքացման՝ ի համեմատ այն իրավիճակի, երբ նրա նկատմամբ կայացվեր արդարացման դատավճիռ (դատավճռի նախադատելիություն և այլն): Ընդ որում՝ դատական քննության փուլային առանձնահատկությունները մեղադրանքից հրաժարման դատավարական հետևանքների տեսանկյունից արժևորվում են նաև մասնագիտական գրականության մեջ: Մասնավորապես, Ա. Ռ. Բելկինը ընդունելի չի համարում մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում քրեական գործի վարույթը կարճելը՝ նշելով, որ «այն դեպքում, երբ մեղադրողը մեղադրանքից հրաժարվում է դատական քննության փուլի վերջում, դատարանը դատախազի դիրքորոշման հետ իր համաձայնությունը պետք է ձևակերպի ոչ թե որոշման, այլ արդարացման դատավճռի ձևով՝ վերջինիս նկարագրական պատճառաբանական մասում շարադրելով դրա հիմքերը»<sup>2</sup>:

Հիշյալ հիմնավորումներով վճռաբեկ դատարանը սահմանում է, որ

ա) այն դեպքում, երբ դատախազը մեղադրանքից հրաժարվում է նախքան դատաքննությունն սկսելը, դատարանը պետք է կայացնի քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում: Վճռաբեկ դատարանի վերոգրյալ դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատավճիռը՝ որպես դատավարական գործունեության արդյունք, չի կարող կայացվել դատական նիստի նախապատրաստական փուլում:

<sup>1</sup> Տե՛ս **А. М. Мухин**, Последствия отказа прокурора от обвинения. //Вестник Челябинского государственного университета. 31/2008 էջ 137-140., **А. В. Абрамов**, Процессуальные гарантии, оправдательного приговора и их реализация //Уголовный процесс, 6/2005, էջ 17:

<sup>2</sup> Տե՛ս **А. Р. Белкин**, Независимость суда и отказ прокурора от обвинения, //Сборник материалов конференции “Конституционно-правовые проблемы уголовного права и процесса”. СПб- 2009 <http://www.iaaj.net/node/189>

բ) այն դեպքում, երբ դատախազը մեղադրանքից հրաժարվում է դատաքննությունն սկսելուց հետո, դատարանը պետք է կայացնի արդարացման դատավճիռ, քանի որ դրա կայացումը հնարավոր է բացառապես քրեական գործն ըստ էության քննելու արդյունքում, իսկ գործող քրեադատավարական կարգավորումների պայմաններում դատարանում քրեական գործի ըստ էության քննությունն սկսվում է դատաքննության փուլով<sup>1</sup>:

ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները մեր համոզմամբ որոշակի միտում ունեն չեզոքացնելու վերը քննարկված երկու հակադիր մոտեցումների հիմքում էլ նկատված այն մտահոգությունը, որ մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանի կայացրած դատական ակտը որպես այդպիսին չի բխում դատարանի համոզմունքից, այսինքն՝ դատարանն արդարացման դատավճիռ կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում է կայացնում ոչ թե սեփական համոզմունքի, այլ մեղադրանքից դատախազի հրաժարման հիման վրա: Այսպես, քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հայտարարությունը համարելով վարույթն անվերապահորեն չբացառող հանգամանք և սահմանելով վարույթը բացառող հանգամանքի իրական լինելը դատարանի կողմից պարզելու անհրաժեշտությունը, ըստ էության ուրվագծվում է «մեղավորության ճանաչում» ենթադրող վարույթը բացառող հանգամանքի ինքնուրույն դատական գնահատման անհրաժեշտությունը: Կամ՝ մեղադրանքից արդարացնող հիմքով հրաժարման դեպքում անձի անմեղությունը հատկապես արդարադատական ակտով արձանագրելու հնարավորությունը վճռաբեկ դատարանը կապում է դատաքննության, ապացույցների հետազոտման, այսինքն՝ արդարադատության բովանդակությունը կազմող դատական գործունեության հետ:

Այս մոտեցումը, մեր համոզմամբ, դատարանի անկախության և ինքնուրույնության դատավարական մեխանիզմներ սահմանելու, դատարանում մեղադրանքը արդարացնող և ոչ արդարացնող հիմքերով տնօրինելու դատախազի դատավարական հնարավորությունը սահմանափակելու նպատակ է հետապնդում և որոշակիորեն ձգտում է դեպի քրեական վարույթը բացառող հանգամանքների առկայության մասին մեղադրողի նախաձեռնության կապակցությամբ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում սահմանված, ի պաշտոնե (ex officio) քննության սկզբունքից բխող իրավակարգավորումները: Անկախ այդ կապակցությամբ դրական վերաբերունքից՝ չի կարելի չնկատել, որ առաջադրված մոտեցումն անհամապատասխանություններ ունի մեղադրանքից հրաժարվելու ինստիտուտի հիմքում ընկած հայեցակարգի և դրա կոնկրետ իրավակարգավորումների հետ:

Ինքնուրույնության և մեծ ծավալի պատճառով չքննարկելով հանդերձ քրեական հետապնդման և մեղադրանքի պաշտպանության գործառնությունների հարաբերակցության խնդիրը՝ նախ պետք է փաստել, որ գործող քրեադատավարական օրենքում մեղադրանքից հրաժարվելու և քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու կամ այդ մասին հայտարարելու լիազորությունները և դրանց իրականացման հիմքերը հետևողականորեն առանձնացված չեն: Բավարար է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասը քրեական հե-

<sup>1</sup> Տե՛ս Կարեն Ստեփանյանի և Սկրտիչ Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՏՂ2/0030/01/13 որոշումը:

տապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հայտարարելու պարտավորություն է սահմանում քրեական վարույթը բացառող բոլոր հանգամանքներն ի հայտ գալու դեպքում՝ անկախ դրանց արդարացնող կամ ոչ արդարացնող լինելուց: Դրանց նույնացման անհնարինության մասին չի վկայում նաև այդ հասկացություններին՝ մասնագիտական եզրութաբանության տեսանկյունից դիտարկումը<sup>1</sup>:

Անդրադառնալով արդարացնող հիմքերով մեղադրանքից հրաժարվելու դատավարական հետևանքներին՝ ի սկզբանե պետք է ընդունել արդարացման դատավճռի սոցիալական նշանակության վրա այդ առումով կատարվող շեշտադրումը: Այն հանգամանքը, որ արդարացման դատավճիռն է լավագույնս ապահովում անձի անմեղության հաստատումից բխող դրական հետևանքները, կասկածից վեր է: Արդարացման դատավճիռը, իրապես, առանց դատավարական խոչընդոտների զարգացած ու հանգուցալուծմանը հասած քրեաիրավական վեճը լուծող փաստաթղթի ընկալում ունի: Այն ընդունվում է որպես զուտ արդարադատական ակտ, դատական գործունեության արդյունք, որում մեղադրանքի կողմի ներկայացրած ապացույցների հենց դատական գնահատմամբ է մեղադրանքը ճանաչվել անհիմն, իսկ մեղադրյալը՝ անմեղ: Այլ կերպ ասած՝ արդարացման դատավճիռը հասարակության կողմից ընկալվում է որպես պետության և քաղաքացու միջև քրեաիրավական վեճում պետության պարտությունն արձանագրող դատավարական անփոխարինելի փաստաթուղթ:

Միևնույն ժամանակ, դատական քննության նախապատրաստական մասում և դատաքննության ընթացքում մեղադրանքից հրաժարվելու դատավարական հետևանքների տարբերակումն այս համատեքստում ընդունելի չէ: Խնդիրն այն է, որ այդպիսի տարբերակմամբ հետապնդած նպատակը, այն է՝ ապահովել, որ արդարացման դատավճիռը կայացվի գործի ըստ էության քննության արդյունքում, ամենևին իրագործելի չէ: Բանն այն է, որ դատաքննության ենթափուլում մեղադրանքից հրաժարվելու ոչ բոլոր դեպքերում կարելի է խոսել ապացույցների հետազոտված կամ գործն ըստ էության քննված լինելու մասին: Այս առումով անհնար է չնկատել նաև, որ դատաքննությունն սկսելուց հետո մեղադրանքից հրաժարվելու դեպքում արդարացման դատավճիռ կայացնելու այն պատճառաբանությունը, որ «դրա կայացումը հնարավոր է բացառապես քրեական գործն ըստ էության քննելու **արդյունքում**, իսկ (...) քրեական գործի ըստ էության քննությունն **սկսվում է** դատաքննության փուլով», ակնհայտ ներքին հակասություն ունի: Այս հիմնավորումը չի պատասխանում այն հարցին, թե դատաքննությունն սկսվելուց անմիջապես հետո մեղադրանքից հրաժարվելու արդյունքում կայացվող արդարացման դատավճիռն ինչպես կարող է համարվել գործի ըստ էության քննության արդյունք, երբ գործի ըստ էության քննությունը դեռ ընդամենը սկսվել է: Բնականաբար, մեղադրողի կողմից մեղադրական եզրակացության եզրափակիչ մասը հրապարակելուց և այդ կերպ գործի ըստ էության քննության սկիզբն ազդարարելուց անմիջապես հետո մեղադրանքից հրաժարվելու պարագայում գործն ըստ էության քննված լինելու մասին

<sup>1</sup> ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 19-րդ կետում տրված սահմանումն առ այն, որ *քրեական հետապնդման դադարեցումը* քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի որոշումն է առաջադրված մեղադրանքը վերացնելու կամ մեղադրանքից հրաժարվելու մասին, առնվազն վկայում է, որ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվել, այն դադարեցնել և մեղադրանքից հրաժարվել հասկացությունները զուտ եզրութաբանական տեսանկյունից ևս չեն տարբերակվել:



խոսք լինել չի կարող: Արդարացման դատավճիռը գործի ըստ էության քննության արդյունքում կայացված չի կարող համարվել նույնիսկ այն դեպքում, երբ մեղադրողը մեղադրանքից հրաժարվել է մեղադրանքի հիմքում դրված առանձին ապացույցներ հետազոտվելուց հետո: Ուստի, մեղադրական եզրակացության եզրափակիչ մասը հրապարակվելուց առաջ և հետո մեղադրանքից հրաժարվելու դատավարական հետևանքների տարբերակումն անհասկանալի անհավասարության մեջ է դնում ամբաստանյալներին՝ ելնելով դատավճիռ կայացնելու հնարավորության հետ բովանդակային որևէ կապ չունեցող դատավարական գործողությունը կատարված լինելու կամ չլինելու հանգամանքից: Ընդ որում՝ նման անհավասարությունն առաջանում է այն դեպքում, երբ քննարկվող դատական պրակտիկան հատուկ շեշտադրում ունի ամբաստանյալի դատավարական երաշխիքների չեզոքացումը բացառելու ուղղությամբ:

Հիմնախնդրին անդրադարձի շրջանակներում բարձրագույն դատական ատյանը մեղադրանքից մասնակի հրաժարման իրավիճակը չի քննարկել, իսկ դատաքննության փուլում մեղադրանքից հրաժարվելու դեպքում արդարացման դատավճիռ կայացնելու ընդհանուր կանոնն այդ իրավիճակում խնդրահարույց է: Բանն այն է, որ մեղադրանքից մասնակի հրաժարվելուց հետո հրաժարված մասով անմիջապես արդարացման դատավճիռ կայացնելու դեպքում ի վերջո գործով կայացվում է երկու գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ դատավճիռ, որի հնարավորությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումներից չի բխում:

Հետևաբար, նկատի ունենալով մեղադրանքից հրաժարվելու ինստիտուտի պատկանելությունը մրցակցային քրեական վարույթին, ուստի և ի պաշտոնե քննության կառուցակարգում դրա համաչափ իրավակարգավորման անհնարինությունը, ավելի ընդունելի ենք համարում այն մոտեցումը, որի համաձայն՝ դատարանը մեղադրողի կողմից արդարացնող հիմքով մեղադրանքից հրաժարվելու դեպքում արդարացման դատավճիռ է կայացնում, եթե հրաժարման արդյունքները քննարկում է վճռահատության փուլում, այսինքն՝ երբ մեղադրողը մեղադրանքից հրաժարվել է դատական վիճաբանությունների փուլում, կամ տեղի է ունեցել մեղադրանքից մասնակի հրաժարում, սակայն մեղադրանքի մնացած մասով քննությունը շարունակվել և մտել է վճռահատության փուլ: Այս մոտեցումը հնարավորինս հաշվի է առնում նաև դատական քննության փուլային զարգացման առանձնահատկությունները, արդարացման դատավճիռի՝ որպես զուտ արդարադատական ակտի իրավական բնույթն ու սոցիալական նշանակությունը:

Ինչ վերաբերում է մեղադրանքից ոչ արդարացնող հիմքով հրաժարվելուն կամ այսպես կոչված քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելուն, ապա այս առումով խնդրահարույց է ոչ թե դրա արդյունքում կայացվող դատավարական ակտի տեսակը, այլ քննարկվող լիազորության իրականացման կառուցակարգն ու դրա հետևանքները՝ հաջորդող դատավարական գործողությունների տեսանկյունից:

Կարծում ենք, որ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների դատական գնահատման անհրաժեշտությունն ընդունելի է, եթե դրանք պատկանում են ոչ արդարացնող հիմքերին, քանի որ նման հիմքերով քրեական հետապնդումը բացառող դատավարական փաստաթղթով անձի մեղավորությունն ամեն դեպքում որոշակիորեն «փաստվում» է: Իսկ դատական վարույթում բացառապես դատախազի կող-

մից քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու պատճառով անձի մեղավորությունը դատական ակտով արձանագրելը ընդունելի չէ: Դատական քննության փուլում ոչ արդարացնող, անձի մեղավորությունը փաստող հիմքով քրեական վարույթը բացառելու մեղադրողի անվերապահ հնարավորությունը դատարանի կարգավիճակին հարիր չէ: Հետևաբար, մեղադրողի կամահայտնությունը չպետք է բացարձակ հիմք հանդիսանա դատարանի կողմից անձի նկատմամբ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցնելու համար:

Այսինքն ոչ արդարացնող հիմքերով քրեական հետապնդումը բացառելու մասին մեղադրողի դիրքորոշման կապակցությամբ ի պաշտոնե քննության սկզբունքի կիրառումն ընդունելի է: Այս փաստարկը, սակայն, վճռաբեկ դատարանի վերը քննարկված դիրքորոշմամբ հստակ արտահայտված չէ, այլ ընդամենը ենթադրվում է: Եվ բացի այդ, հակառակ իրավիճակը բացառելու համար բարձրագույն դատական ատյանի սահմանած դատավարական եղանակը խնդրահարույց է:

Նախ, սահմանելով, որ վարույթը բացառող ոչ արդարացնող հիմքի առկայության մասին իր դիրքորոշումը դատախազն արտահայտում է քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հայտարարելու լիազորության իրականացմամբ, որը վարույթն անվերապահորեն բացառող հանգամանք չէ, և դատարանն այն պետք է որպես միջնորդություն բավարարի կամ մերժի, վճռաբեկ դատարանը չի սահմանել այն մերժվելուց հետո դատախազի կողմից քրեական հետապնդում իրականացնելուն վերադառնալու իրավական հիմքը կամ մեխանիզմը: Քրեական դատավարության օրենսգիրքը չի սահմանում քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելուց հետո որևէ պատճառով մեղադրանքի պաշտպանությանը վերադառնալու հնարավորություն: Ընդ որում՝ դրանից ևս ակնհայտ է, որ մեղադրանքից հրաժարվելու և քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու լիազորությունների տարանջատումն ու վերջինիս ոչ անվերապահ բնույթն ամենևին օրենսդրի կամքը չեն: Օրենսդիրը չի նախատեսել քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելուց հետո հրաժարման հիմքերի դատական գնահատում և դատախազի դիրքորոշման հետ դատարանի անհամաձայնության դեպքում այդ դիրքորոշման փոփոխում և վերադարձ մեղադրանքի պաշտպանությանը: Ոչինչ չի փոխվում նաև այն դեպքում, եթե կարծենք, թե քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելն ու այդ մասին հայտարարելը նույնը չեն, թեև վերջինիս՝ որպես քննարկվող ինստիտուտի շրջանակներում դատավարական ինքնուրույն լիազորության գոյությունը մեզ համար ընդունելի չէ:

Կրկնելով, որ այդուհանդերձ ոչ արդարացնող, անձի մեղավորություն ենթադրող հիմքերով քրեական հետապնդումը բացառող հանգամանքները պետք է ենթարկվեն դատական գնահատման և հաստատվեն հատկապես դատարանի կողմից դատական գործունեության արդյունքում, կարծում ենք, որ դրանց առկայության մասին դատախազի դիրքորոշումը պետք է ոչ միայն քննարկվի, այլև ներկայացվի որպես միջնորդություն: Քրեական հետապնդումը բացառող ոչ արդարացնող հիմքի առկայության մասին սեփական դիրքորոշումը մեղադրողը պետք է արտահայտի ոչ թե մեղադրանքից կամ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու կամ այդ մասին հայտարարելու, այլ միջնորդություն ներկայացնելու դատավարական եղանակով: Այսինքն՝ քրեական հետապնդումը բացառող ոչ արդարացնող հանգամանքներ հայտնաբերելու դեպքում դատախազը պետք է ոչ թե հայտարարի քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին, այլ դատարանին

միջնորդություն ներկայացնի քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Հակառակ դեպքում, միջնորդության կարգով քննարկման ենթակա դատախազի դիրքորոշումը տեղավորելով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու շրջադարձ էնթադորող լիազորության մեջ, վճռաբեկ դատարանի վերը քննարկված դիրքորոշումը հակադրություն է ստեղծել այդ լիազորության հայեցակարգի հետ՝ այդպես էլ չկարգավորված թողնելով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելուց հետո մեղադրանքի պաշտպանությունը շարունակելու դատավարական հնարավորությունը:

Հետևաբար, վճռաբեկ դատարանը, իրավացիորեն հիմք ընդունելով ոչ արդարացնող հիմքերով քրեական հետապնդումը դադարեցնելիս դատարանի իրավական վիճակից բխող կարգավորումներ սահմանելու անհրաժեշտությունը, իրավունքի զարգացումը պետք է ապահովեր ոչ թե մեղադրանքից հրաժարվելու և քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու լիազորությունների արհեստական տարանջատման ճանապարհով, այլ վերը նշված հիմնավորումներով մեղադրանքից հրաժարվելու, նույն է թե՛ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու դատախազի լիազորությունը պետք է սահմանափակեր քրեական հետապնդումը բացառող արդարացնող հիմքերի շրջանակով՝ սահմանելով, որ քրեական հետապնդումը բացառող ոչ արդարացնող հիմքեր հայտնաբերելու դեպքում դատախազը պետք է քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական գործի վարույթը կարճելու միջնորդություն ներկայացնի դատարան: Այսպիսի մոտեցումը զերծ կմնար դատավարական հիմնական գործառնությունների հարաբերակցության դեռևս տեսական լուծում չստացած խնդիրները շոշափելուց, կապահովեր քննարկված իրավիճակների՝ մեղադրանքից հրաժարվելու ինստիտուտի հայեցակարգին, վարույթը բացառող հանգամանքների երկու խմբերի բնույթին և քրեական դատավարությունում մեղադրողի և դատարանի կարգավիճակին համապատասխան լուծում:

Այսպիսով, ՀՀ բարձրագույն դատական ատյանը, հետևանքների տեսանկյունից իրավացիորեն տարանջատելով քրեական հետապնդումը բացառող արդարացնող և ոչ արդարացնող հանգամանքները, իրավունքի զարգացումը չի տեղավորել դրանց հայեցակարգային հիմքերի սահմաններում: Վարույթը բացառող արդարացնող հիմքերով մեղադրանքից հրաժարվելու դատավարական հետևանքները սահմանելիս դատարանն անտեսել է մեղադրանքից հրաժարվելու դատավարական ինստիտուտի հայեցակարգային պատկանելությունը բացարձակ մրցակցային քրեական դատավարությանը՝ այդ ինստիտուտի մեջ փորձելով ներմուծել ի պաշտոնե քննության սկզբունքին հարող կարգավորումներ:

Վարույթը բացառող ոչ արդարացնող հիմքերի առկայության մասին մեղադրողի դիրքորոշման իրացման դատավարական եղանակն ու հետևանքները սահմանելիս, հակառակը, ի պաշտոնե քննության սկզբունքի տարրերի ներմուծման ավելի մեծ հնարավորությունների պայմաններում դատարանն այդ դիրքորոշման իրացման համար սահմանել է մեղադրանքից հրաժարվելու ինստիտուտին բնորոշ դատավարական եղանակ, բայց ի պաշտոնե քննության սկզբունքին բնորոշ լուծում՝ լուծում չտալով երկու հայեցակարգերի հակադրությունից ի հայտ եկող խնդիրներին:

Սույն վերլուծության շրջանակներում առաջարկված լուծումները, մեր համոզմամբ, հնարավորինս հաշվի են առնում ինչպես առկա իրավակարգավորումների հայեցակարգային առանձնահատկությունները, այնպես էլ դրանց շրջանակներում քննարկվող ինստիտուտի իրավական զարգացման անհրաժեշտությունը:

## ПРОБЛЕМЫ ПРОЦЕССУАЛЬНЫХ ПОСЛЕДСТВИЙ ОТКАЗА ОТ ОБВИНЕНИЯ

**Геворг Багдасарян**

*Заместитель прокурора города Еревана,  
кандидат юридических наук*

---

Статья посвящена основополагающим проблемам типа процессуального акта, выносимого в результате отказа обвинителя от обвинения. В рамках исследования автор выделяет два противоречащих друг-другу подхода в данном вопросе, предлагая собственный, соответствующий как процессуальной концепции института отказа от обвинения, так и современным направлениям развития процессуального права подход. Автор обосновывает, что оправдательный приговор выносится в случае отказа обвинителем от обвинения на этапе судебных прений либо когда имел место частичный отказ от обвинения и в остальной части обвинения судебный процесс был продолжен и достиг окончательного этапа – вынесения приговора. Утверждая, что нет оснований для отграничения полномочий отказа от обвинения и отказа от осуществления уголовного преследования, автор полагает, что данным полномочием обвинитель вправе воспользоваться исключительно при обнаружении реабилитационных основ, исключающих уголовное преследование, в то время как при наличии нереабилитационных основ прекращения производства по уголовному делу обвинитель вправе обратиться с таким ходатайством к суду.

## THE PROBLEMS OF PROCEDURAL CONSEQUENCES OF ELIMINATING THE CHARGE

**Gevorg Bagdasaryan**

*Deputy Prosecutor of the city of Yerevan,  
Candidate of Legal Sciences*

---

The article is devoted to the issue of the type of a procedural act taken as a result of eliminating the charge. The author singles out the study within two opposite approaches to the problem, analyze the reasons for them and suggests his own solution that goes in accordance with current trends of the concept of judicial procedural law and the development of the concept of eliminating the charge. The author argues, that the court delivers a verdict of acquittal, if the prosecutor refused to charge the stage of judicial disputes or partial waiver of the charge occurred, but the investigation continued and entered a final stage. Arguing, that there is no reason to distinguish between eliminating the charges and suspending criminal prosecution, the author considers that these powers the prosecutor must exercise only in case of

detection of justifying grounds which preclude criminal prosecution, and in case of not justified found the prosecutor may present a motion to dismiss the criminal case to court.

**Բանալի բառեր** – մեղադրանքից հրաժարվելը, քրեական հետապնդումից հրաժարվելը, արդարացնող վճիռ, քրեական գործով վարույթը կարճել, մրցակցություն, պաշտոնական հետազոտում:

**Ключевые слова:** отказ от обвинения, отказ от осуществления уголовного преследования, оправдательный приговор, прекращение производства по уголовному делу, состязательность, исследование по должности.

**Key words:** eliminating the charge, rejection of criminal prosecution, acquittal, the termination of the criminal proceedings, adversarial process, ex-officio process.

## ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ԵՎ ՆԱԽԱԳԾԻ

### Արսեն Մարտիրոսյան

*Երևան քաղաքի դատախազի տեղակալ,  
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Քրեադատավարական օրենսդրության պատմության վերլուծությունը վկայում է, որ քննչական գործողությունների համակարգը ժամանակի ընթացքում ենթարկվել է փոփոխությունների: Մասնավորապես, առանձին քննչական գործողություններ, որոնք նախկին ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսված չէին, գործող քրեադատավարական օրենսգրքում ստացել են օրենսդրական ամրագրում: Ինչպես նշում է Վ. Ա. Սեմենցովը, քրեադատավարական օրենսդրությունը մշտապես լրացվում է նոր ճանաչողական տարրերով, ինչը արտացոլում է պետության՝ տարբեր ժամանակահատվածներում հանցավորության դեմ տարվող պայքարի պահանջմունքներով<sup>1</sup>:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ նաև՝ ՀՀ քր. դատ. օր.) չի սահմանում ինչպես քննչական գործողությունների հասկացությունը, այնպես էլ այդ գործողությունների սպառիչ ցանկը: Այս առումով օրենսդիրը սահմանափակվել է միայն ՀՀ քր. դատ. օր.-ի համապատասխան գլուխում այս կամ այն քննչական գործողության իրավական կարգավորմամբ, որոնց ուսումնասիրությունից հետևում է, որ օրենսդիրը, ըստ էության, նախատեսել է հետևյալ քննչական գործողությունները.

- ✓ Հարցաքննություն և առերեսում (205-2016 հոդվածներ),
- ✓ Ջննում, արտաչիրմում<sup>2</sup> և քննում (217-220 հոդվածներ),
- ✓ Ճանաչման ներկայացնելը (221-224 հոդվածներ),
- ✓ Խուզարկություն և առգրավում (225-231 հոդվածներ),
- ✓ Գույքի վրա կալանք դնելը (232-238 հոդվածներ),
- ✓ Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելը, հեռախոսային խոսակցությունները լսելը (239-241 հոդվածներ),
- ✓ Քննչական փորձարարությունը (242 հոդված),
- ✓ Փորձաքննություն նշանակելը և կատարելը (243-252 հոդվածներ),

<sup>1</sup> Տե՛ս *Семенцов В.А.* Следственные действия в досудебном производстве (общие положения теории и практики): Монография. – Екатеринбург: УрГЮА, 2006. с. 27.

<sup>2</sup> Նշված գործողության իրավական բնույթի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ միասնական մոտեցում չկա. մասնավորապես՝ հեղինակների մի մասի կարծիքով՝ արտաչիրմումը ընդամենը տեխնիկական նախադրյալ է դիակի գննության, այն ճանաչման ներկայացնելու, փորձաքննություն նշանակելու և կատարելու համար: Ավելի մանրամասն տե՛ս *С. А. Шейфер* Следственные действия. Основания, процессуальный порядок и доказательственное значение. Изд. «Самарский университет», 2004, с. 66., *Кузнецов А.Н.* Следственные и иные процессуальные действия как способы собирания доказательств в уголовном процессе. Дисс. ... канд. юрид. наук. Воронеж, 2005. с. 78.

✓ Հետազոտման համար նմուշներ ստանալը (253-256 հոդվածներ):

Գործող քրեադատավարական օրենսգրքի համեմատությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը (այսուհետ նաև՝ Նախագիծ) այլ մոտեցում է ցուցաբերել քննչական գործողությունների համակարգի նկատմամբ: Մասնավորապես, Նախագիծ՝ «Ապացուցողական գործողություններ» վերտառությամբ բաժնում իրենց ամրագրումն են ստացել *քննչական գործողությունները* (գլուխ 30), *գաղտնի քննչական գործողությունները* (գլուխ 32) և *փորձաքննությունը* (գլուխ 33):

Նախագծի 215-րդ հոդվածում թվարկված են հետևյալ քննչական գործողությունները՝

- ✓ հարցաքննությունը,
- ✓ առերեսումը,
- ✓ ցուցմունքը տեղում ստուգելը,
- ✓ զննումը,
- ✓ քննումը,
- ✓ փորձարարությունը,
- ✓ ճանաչումը,
- ✓ տեղեկատվության պահանջը,
- ✓ առարկաներ կամ փաստաթղթեր վերցնելը,
- ✓ խուզարկությունը,
- ✓ առգրավումը,
- ✓ արտաշիրմումը:

Նախագծի 284-րդ հոդվածի համաձայն՝ գաղտնի քննչական գործողություններն են՝

- ✓ ներքին դիտումը,
- ✓ արտաքին դիտումը,
- ✓ նամակագրության և այլ ոչ թվային հաղորդումների վերահսկումը,
- ✓ թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկումը,
- ✓ ֆինանսական գործարքների վերահսկումը,
- ✓ կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը:

Քննչական գործողությունների համակարգի վերաբերյալ Նախագծի և գործող օրենսգրքի համեմատական վերլուծությունը վկայում է, որ Նախագծում, ի տարբերություն ՀՀ քր. դատ. օր.-ի, որպես քննչական գործողություններ նախատեսված չեն *գույքի վրա կալանք դնելը*, *փորձաքննություն նշանակելը* և *կատարելը*, *հետազոտման համար նմուշներ ստանալը*, իսկ նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելը, հեռախոսային խոսակցությունները լսելը նախատեսված են որպես գաղտնի քննչական գործողություններ: Դրան հակառակ՝ Նախագծում քննչական գործողությունների համակարգը լրացվել է այնպիսի նոր քննչական գործողություններով, ինչպիսիք են՝ *ցուցմունքը տեղում ստուգելը*, *տեղեկատվություն պահանջելը*, *առարկաներ կամ փաստաթղթեր վերցնելը*:

Սույն հոդվածի շրջանակներում քննարկման առարկա կդարձնենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և Նախագծում տեղ գտած քննչական գործողությունների համակարգին վերաբերող կարգավորումները՝ նշելով, մեր կարծիքով, դրանց դրական և բացասական կողմերը:

Քննչական գործողությունների համակարգի ճշգրիտ որոշումը ինչպես տեսա-

կան, այնպես էլ գործնական առումներով ունի կարևոր նշանակություն, քանի որ այն անմիջականորեն կապված է ապացույցների հավաքման և ստուգման հետ, որոնց արդյունքներով էլ վերջին հաշվով որոշվում է յուրաքանչյուր քրեական գործի ընթացքը<sup>1</sup>:

Քննչական գործողությունների համակարգի վերաբերյալ միասնական մոտեցում չկա նաև տեսական գրականության մեջ: Գիտական բանավեճերը հիմնականում վերաբերում են այնպիսի գործողություններին, ինչպիսիք են՝ կասկածյալի ձերբակալումը, արտաշիրմումը, գույքի վրա կալանք դնելը, հետազոտման համար նմուշներ ստանալը և փորձաքննություն նշանակելը ու կատարելը:

Ինչպես վերը նշվեց, ՀՀ քրեական քրեական դատավարության օրենսգրքում գույքի վրա կալանք դնելը նախատեսված է որպես ինքնուրույն քննչական գործողություն: ՀՀ քր. դատ. օր.-ի 232-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքի վրա կալանք դնելը կիրառվում է քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, բռնագանձումը և դատական ծախսերն ապահովելու համար: Նույն օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքի վրա կալանք դնելը քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ գործով հավաքված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը, մեղադրյալը կամ այն անձը, որի մոտ գտնվում է գույքը, կարող են թաքցնել, փչացնել կամ սպառել բռնագրավման ենթակա գույքը:

Քրեական դատավարության օրենսգրքի նախագծում գույքի վրա կալանք դնելը (գույքի արգելադրումը) դիտվում է որպես հարկադրանքի միջոց, որի իրավական կարգավորմանը նվիրված են Նախագծի 131-135-րդ հոդվածները: Նախագծի 131-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքի արգելադրումը կիրառվում է ենթադրյալ հանցագործությամբ պատճառված հնարավոր վնասի կամ վարութային հնարավոր ծախսերի հատուցումը, ինչպես նաև գույքի հնարավոր բռնագրավումը կամ բռնագանձումը ապահովելու համար:

Նշված գործողության բնույթի վերաբերյալ միասնական մոտեցում չկա նաև մասնագիտական գրականության մեջ: Այս տեսանկյունից գրականության մեջ տեղ գտած մոտեցումները կարելի է բաժանել երեք խմբի.

- 1) գույքի վրա կալանք դնելը քննչական գործողություն է,
- 2) գույքի վրա կալանք դնելը դատավարական հարկադրանքի միջոց է,
- 3) գույքի վրա կալանք դնելը և՛ քննչական գործողություն է, և՛ դատավարական հարկադրանքի միջոց:

Ինչպես նշվեց, հեղինակների առաջին խումբը կարծում է, որ գույքի վրա կալանք դնելը քննչական գործողություն է, քանի որ այդ գործողության կատարման արդյունքում կազմվող արձանագրությունում հաճախ ամրագրվում են քրեական գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներ, մասնավորապես՝ կոնկրետ անձի ունեցած նյութական արժեքները: Բացի այդ, գույքի վրա կալանք դնելու ընթացակարգը բնութագրական է քննչական գործողությանը<sup>2</sup>:

<sup>1</sup> Ст'я Досудебное производство в уголовном процессе: *Б. Я. Гаврилов* и др. – М.: ЮНИТИ-ДАНА, 2015, с. 120:

<sup>2</sup> Ст'я *Чувилев А. А.* Следственные действия по уголовно-процессуальному законодательству СССР и некоторых зарубежных социалистических стран: Лекция / А. А. Чувилев; Акад. МВД СССР. – М.: 1989, с. 3.



Ի.Ե. Բիխովսկին գտնում է, որ գույքի վրա կալանք դնելը ինքնուրույն քննչական գործողություն է, քանի որ դրա իրականացման արդյունքում երբեմն հայտնաբերվում է արժեքավոր գույք<sup>1</sup>:

Ժամանակակից գրականության մեջ ներկայացված տեսակետները պաշտպանում է Ա.Պ. Ռիժակովը<sup>2</sup>:

Դատավարագետների երկրորդ խմբի կարծիքով՝ գույքի վրա կալանք դնելը դատավարական հարկադրանքի միջոց է, քանի որ այն անմիջականորեն ուղղված է ապացույցների հավաքմանը և ստուգմանը (չունի ճանաչողական բնույթ)<sup>3</sup>: Բացի այդ, Ի.Բ. Տուտինինը նշում է, որ քննչական գործողությունները և դատավարական հարկադրանքի միջոցները միմյանցից տարբերվում են իրենց նպատակով, հիմքերով, պայմաններով, կիրառման և իրականացման կարգով: Գույքի վրա կալանք դնելը դատավարական հարկադրանքի միջոց է, որի նպատակը տարբերվում է քննչական գործողության նպատակներից<sup>4</sup>:

Եվ վերջապես, երրորդ խումբ գիտնականների կարծիքով՝ գույքի վրա կալանք դնելը և՛ քննչական գործողություն է, և՛ դատավարական հարկադրանքի միջոց: Այսպես, Վ.Բ. Իսկանդիրովը գտնում է, որ գույքի վրա կալանք դնելը ունի երկակի բնույթ. մի կողմից այն դատավարական հարկադրանքի միջոց է, մյուս կողմից՝ քննչական գործողություն, որն ուղղված է փաստական տվյալների հավաքմանը և հետազոտմանը՝ նպատակ ունենալով քրեական գործով ձեռք բերել ապացույցներ: Հեղինակի կարծիքով՝ նշված հարկադրանքի միջոցը անմիջականորեն ուղղված է գույք հայտնաբերելուն, քանի որ գործող քրեադատավարական օրենսգիրքը չի նախատեսում հարկադրական որոնողական գործողության կատարում<sup>5</sup>:

Գույքի վրա կալանք դնելու դատավարական գործողության իրավական բնույթին թիվ ԵԿԴ/0185/11/11 գործով անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը: Հիշյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանը, մասնավորապես, նշել է. «(...) **կանխարգելիչ բնույթ կրող քրեադատավարական հարկադրանքի այս միջոցը** կոչված է սեփականության (կամ այլ գույքային) իրավունքների սահմանափակման միջոցով ապահովելու քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, դատական ծախսերը»:

Մեջբերված որոշման բովանդակությունից հետևում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը, ըստ էության, արձանագրել է, որ գույքի վրա կալանք դնելը դատավարական հարկադրանքի միջոց է:

Կարծում ենք, որ գույքի վրա կալանք դնելը չունի ճանաչողական նպատակ, այն ապահովում է միայն գույքի անօտարելիությունը, ինչով էլ պայմանավորված

<sup>1</sup> Տե՛ս *Быховский И. Е.* Процессуальные и тактические вопросы системы следственных действий : автореф. дис. ... д-ра юрид. наук. М., 1976. с. 7.

<sup>2</sup> Տե՛ս *Рыжаков А. П.* Следственные действия и иные способы собирания доказательств. М. 1997. с. 45.

<sup>3</sup> *Шейфер С.А.* Следственные действия - правомерны ли новые трактовки? "Lex Russica", N 10, октябрь 2015 г., с. 119., Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս, ԵՊՀ հրատ., Եր., 2003, էջ 165:

<sup>4</sup> Տե՛ս *Тутинин И. Б.* Наложение ареста на имущество как мера уголовно-процессуального принуждения. Дисс канд. юрид. наук., М., 2005, с. 25-26.

<sup>5</sup> Տե՛ս *Искандиров В. Б.* Наложение ареста на имущество в уголовном процессе: автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Челябинск, 2012, с. 14-15.

Նախագիծը նշված գործողությունն արդարացիորեն դիտել է որպես դատավարական հարկադրանքի միջոց:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում փորձաքննություն նշանակելը և կատարելը ևս նախատեսված չեն քննչական գործողությունների համակարգում: Անդրադառնալով Նախագծի կարգավորումներին՝ Վ.Ենգիբարյանը և Ա. Չախոյանը նշում են. «Նախագիծը կարևորելով փորձաքննության ինստիտուտը, դրա նշանակումը արդարացիորեն չի համարում որպես քննչական գործողություն, ինչպես նախատեսված է ՀՀ քր. դատ. օր.-ով, այլ՝ որպես քրեական դատավարության առանձին ինստիտուտ»<sup>1</sup>:

Նախագիծը հիշյալ գործողությունը դիտում է որպես ապացուցողական գործողություն և առանձին կարգավորում է այդ գործողության նշանակման և կատարման հետ կապված հարաբերությունները (գլուխ 33):

Փորձաքննության իրավական բնույթի վարաբերյալ տարատեսակ մոտեցումներ են տեղ գտել նաև մասնագիտական գրականության մեջ: Այսպես, հեղինակների մի խումբը գտնում է, որ փորձաքննությունը քննչական գործողություն է, քանի որ քննիչը և այլ անձինք, դա նշանակելով և կատարելով, ղեկավարում են քննչական գործողության իրականացումը<sup>2</sup>:

Հեղինակների մյուս խումբը գտնում է, որ փորձաքննությունը հատուկ, ինքնուրույն իրականացվող ճանաչողական գործունեություն է և տարբերվում է քննչական գործողությունից նրանով, որ գիտելիքը «դուրս է գալիս» ոչ թե քննիչից, այլ փորձագետից<sup>3</sup>:

Ս.Բ. Ռասինսկու կարծիքով՝ փորձաքննությունը չի կարող համարվել քննչական գործողություն հետևյալ երեք պատճառներով.

1) քննչական գործողությունը կատարում է քննիչը, իսկ փորձաքննությունը՝ քրեադատավարական գործունեության հատուկ սուբյեկտը՝ փորձագետը,

2) փորձաքննությունը քննչական գործողությունից տարանջատվում է նրանով, որ այն միշտ պայմանավորված է հատուկ գիտելիքների կիրառմամբ, առանց որոնց օգտագործման հնարավոր չէ ապահովել քրեական գործի համար նշանակություն ունեցող այս կամ այն հանգամանքի պարզումը,

3) փորձաքննության արդյունքները արտացոլվում են ոչ թե արձանագրությունում, այլ հատուկ դատավարական փաստաթղթում՝ փորձագետի եզրակացության մեջ<sup>4</sup>:

Այս տեսանկյունից, ինչպես իրավացիորեն նշում է Ս.Ա. Շայֆերը, փորձագետի գործունեությունը չի ընդգրկում փորձաքննության նշանակման և իրականացման բոլոր ասպեկտները, այլ կարող է սահմանափակվել միայն հետազոտություններ ի-

<sup>1</sup> *Ենգիբարյան Վ., Չախոյան Ա.* Դատական փորձաքննությունների հիմնադրույթներն ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի // Պետություն և իրավունք, թիվ 1 (59), 2013թ., էջ 91:

<sup>2</sup> Досудебное производство в уголовном процессе: *Б.Я. Гаврилов* и др. – М.: ЮНИТИ-ДАНА, 2015, с. 123-124, *Орлов Ю. К.* Производство экспертизы в уголовном процессе. М.: ВЮЗИ, 1982, с. 3.

<sup>3</sup> St'u *Эйсман А. А.* Структура и логические свойства норм, регулирующих собирание доказательств на предварительном следствии // Вопросы борьбы с преступностью. М., 1976, № 25, с. 112.

<sup>4</sup> St'u *Росинский С. Б.* Уголовный процесс. учебник. М.: Эксмо, 2009, с. 415-416.

րականացնելով: Քննիչին զրկելով ապացույց հավաքելու հնարավորությունից՝ օրենքը արգելում է փորձագետին ինքնուրույն հավաքել նյութեր փորձագիտական հետազոտման համար: Հետևաբար, փորձագետի գործունեությունը ամբողջությամբ ինքնուրույն չի հանդիսանում: Դա արտահայտվում է նրանում, որ քննիչը՝

- իր որոշմամբ նշանակելով փորձաքննություն՝ որոշում է փորձաքննության առարկան և հետազոտության ծրագիրը (ներկայացնում է հետազոտման օբյեկտները և ձևակերպում է հարցերը),

- ապահովում է օբյեկտիվությունը և փորձագետի ձեռնհասությունը (քննարկում է փորձագետին հայտնված բացարկի միջնորդությունը, փորձագետին պարզաբանում է նրա իրավունքներն ու պարտականությունները),

- ապահովում է փորձագիտական հետազոտության ուղղությունները, փորձագետին տրամադրում է հետազոտման օբյեկտներ,

- իրականացնում է հսկողություն հետազոտությունների օբյեկտիվության, լրիվության և գիտականության նկատմամբ,

- միջնորդության դեպքում փորձագետին է տրամադրում լրացուցիչ տեղեկություն,

- ապահովում է փորձաքննության հետ կապված դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Նշվածը թույլ է տալիս որոշելու փորձաքննության ճանաչողական համալիրի կառուցվածքը. քննիչը իրականացնում է գործողությունների համալիր, որոնք կապված են փորձաքննության նշանակման և իրականացման հետ, իսկ փորձագետն էլ իր հերթին իրականացնում է հետազոտական գործունեություն, համակարգում է հետազոտման արդյունքները, որոնք ներկայացնում է իր եզրակացությունում<sup>1</sup>:

Ամբողջությամբ համակարծիք լինելով հեղինակի դատողություններին, մենք ևս գտնում ենք, որ փորձաքննություն նշանակելը և կատարելը համարվում են ինքնուրույն քննչական գործողություն:

Եվ վերջապես, Նախագիծը, ի տարբերություն գործող օրենսգրքի, հետազոտման համար նմուշներ ստանալը (փորձաքննության համար նմուշներ ստանալը) դիտում է որպես փորձաքննության բաղկացուցիչ մաս:

Հետազոտման համար նմուշներ ստանալու՝ որպես քննչական գործողության վերաբերյալ միասնական մոտեցում չկա նաև մասնագիտական գրականության մեջ: Այսպես, հեղինակների մի մասը գտնում է, որ հետազոտման համար նմուշ ստանալը ապահովում է միայն փորձաքննության արդյունավետ իրականացումը<sup>2</sup>, մյուսները, պաշտպանելով օրենսդրի մոտեցումը, կարծում են, որ, բացի ապահովող բնույթից, հետազոտման համար նմուշներ ստանալը ունի նաև քննչական գործողության

<sup>1</sup> Տե՛ս *Шейфер С. А.* Следственные действия - правомерны ли новые трактовки? "Lex Russica", N 10, октябрь 2015 г., с. 117.

<sup>2</sup> Տե՛ս *Копьева А. Н.* Неотложность следственных действий /А. Н. Копьева// Криминалистические проблемы пространственно-временных факторов в методике расследования преступлений. – Иркутск: Изд-во Иркут. ун-та, 1983. – С. 128., *Файгер А.* Действия по уголовному преследованию : монография / А. Файгер; /Бэлц. гос. ун-т им. А. Руссо. – Молдова, Бэлць: [б. и.], 2006. – 188-189 с., *Григорьев Н.В., Победкин А.П., Чшин Б.Н.* Справочник следователя, М., 2008, с. 166-167.

հատկանիշներ<sup>1</sup>: Այսպես, Ա.Ն. Կուզնեցովի կարծիքով՝ հետազոտման համար նմուշ ստանալը քննչական գործողություն չէ, քանի որ ուղղված չէ ապացույցի հավաքմանը: Նմուշները, որոնք ստացվում են այդ գործողության կատարման ընթացքում, ինքնին չունեն ապացուցողական նշանակություն: Դրանք միայն անհրաժեշտ նյութեր են փորձագիտական հետազոտություններ կատարելու համար: Այլ կերպ՝ հետազոտման համար նմուշներ ստանալը անհրաժեշտ պայման է փորձաքննության նշանակման և կատարման համար<sup>2</sup>:

Կարծում ենք, որ հետազոտման համար նմուշներ ստանալը ինքնուրույն քննչական գործողություն է՝ հետևյալ պատճառաբանությամբ.

*Առաջին*՝ մոտեցումը առ այն, որ հետազոտման համար նմուշներ ստանալը ամենից առաջ նախադրյալ է փորձաքննության իրականացման համար, դեռևս չի վկայում այն մասին, որ այդ գործողությունը ինքնուրույն քննչական գործողություն չէ: Քրեական դատավարությունում նույնպես հայտնի են այլ քննչական գործողություններ, որոնք անխզելիորեն կապված են այլ քննչական գործողությունների հետ: Օրինակ՝ առերեսում իրականացվում է միայն նախկինում իրականացված հարցաքննության արդյունքներով, և այն հանդիսանում է հարցաքննության տարատեսակ:

*Երկրորդ*՝ քննչական գործողությունների առաջին իսկ հիմնական չափանիշը դրանց որոնողական-ձանաչողական բնույթն է, այսինքն՝ քննչական գործողություններ կարող են համարվել միայն նրանք, որոնց կատարման արդյունքում քրեական գործով ստացվում են նոր ապացույցներ: Վերլուծելով հետազոտման համար նմուշ ստանալու գործողության էությունը՝ պետք է փաստել, որ այն ինքնուրույն քննչական գործողություն է, քանի որ դրա իրականացման արդյունքում ստացվում են ապացույցներ: Այսպես, քննիչը, որոշում կայացնելով մեղադրյալից ձեռագրի նմուշ ստանալու մասին, պարզում է, որ մեղադրյալը գրագետ չէ և ընդհանրապես գրել չգիտի, ինչով պայմանավորված՝ ձեռագիր չունի: Նշված դեպքում հետազոտման համար նմուշ ստանալու մասին արձանագրությունը ունի վառ արտահայտված ինքնուրույն ապացուցողական նշանակություն, և փորձաքննության իրականացման անհրաժեշտությունը չկա: Ներկայացված օրինակից ակներև է, որ ապացույցը ձեռք բերվեց հետազոտման համար նմուշ ստանալու ընթացքում:

Ինչպես վերը նշվեց, Նախագծում քննչական գործողությունների համակարգը համարվել է ևս երեք քննչական գործողություններով, դրանք են՝ ցուցմունքը տե-

<sup>1</sup> Ст'я *Безлепкин Б. Т.* Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации (постатейный). – М., 2002. – с. 263; *Безлепкин Б.Т.* Уголовный процесс России. – М., 2004. – с. 281–282; Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации /отв. ред. *Д.Н. Козак, Е.Б. Мизулина.* – М., 2002. – с. 410–411; Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации /под общ. ред. *В.В. Мозякова.* – М., 2002. – с. 456; *Кальницкий В.В.* Следственные действия. – Омск, 2003. – С. 52; *Вандышев В.В.* Уголовный процесс, 2004. – с. 437; Уголовный процесс России /науч. ред. *В.Т. Томин.* – М., 2003. – с. 388; Уголовный процесс /отв. ред. *А.В. Грищенко.* – М., 2004. – с. 231; Уголовный процесс /под ред. *А.И. Долговой.* – М., 2002. – с. 205; *Рыжаков А.П.* Уголовный процесс. – М., 2003. – с. 429.

<sup>2</sup> Ст'я *Кузнецов А. Н.* Следственные и иные процессуальные действия как способы собирания доказательств в уголовном процессе. Дисс. ... канд. юрид. наук. Воронеж, 2005. с. 76-77.

ղում ստուգելը, տեղեկատվություն պահանջելը, առարկաներ կամ փաստաթղթեր վերցնելը:

Նախագծի 232-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցուցմունքը տեղում ստուգելը նախապես հարցաքննված ձերբակալված անձի, մեղադրյալի, տուժողի կամ վկայի կողմից իր ցուցմունքի պարզաբանումն է այն վայրում, որտեղ տեղի ունեցած իրադարձությունները նկարագրված են եղել այդ ցուցմունքում:

Թեև ՀՀ քր. դատ. օր.-ում ցուցմունքը տեղում ստուգելը նախատեսված չէ որպես ինքնուրույն քննչական գործողություն, սակայն քննչական պրակտիկայում այն լայն կիրառություն ունի քննչական փորձարարության կամ զննության ձևով: Նախագծում նշված քննչական գործողության ամրագրմամբ փաստորեն այն լեգիտիմացվում է:

Միաժամանակ հարկ է նշել, որ ցուցմունքը տեղում ստուգելու քննչական գործողության հիմնավորվածության վերաբերյալ տեսական գնարականության մեջ առկա են հակասական մոտեցումներ: Մասնավորապես՝ որոշ գիտնականներ նշում են այդ գործողության օգտակար և անփոխարինելի բնույթի<sup>1</sup>, իսկ մյուսները՝ դրա վնասակարության և չհիմնավորվածության մասին<sup>2</sup>: Այսպես, Վ. Ն. Ջաժինսկու կարծիքով՝ ցուցմունքը տեղում ստուգելը կրկնակի հարցաքննության, զննության, քննչական փորձարարության, անշարժ օբյեկտը ճանաչման ներկայացնելու քննչական գործողությունների միախառնում է<sup>3</sup>:

Թեև ցուցմունքները տեղում ստուգելը ունի համալիր բնույթ և բովանդակում է նաև այլ քննչական գործողությունների տարրեր, սակայն դա ամենևին չի նշանակում, որ այն ինքնուրույն քննչական գործողություն չէ:

Ցուցմունքը տեղում ստուգելը ամենից առաջ ընդհանրությունների ունի քննչական փորձարարության հետ: Վ.Ի. Բելոուսովը և Ա.Ի. Նատուրան նշում են, որ ցուցմունքը տեղում ստուգելը կարող է մասամբ համընկնել քննչական փորձարարության հետ, եթե դրա բովանդակությունը ունի ցուցադրման, ստուգման և այլ բնույթ: Միաժամանակ, ցուցմունքը տեղում ստուգելը չունի միայն մաքուր փորձարարական բնույթ: Ընդհանուր առմամբ նշված հեղինակները եզրահանգում են, որ ցուցմունքը տեղում ստուգելը չի կարելի դիտել միայն որպես քննչական փորձարարության մաս, այլ այն հանդես է գալիս նաև որպես քննչական փորձարարության տարատեսակ<sup>4</sup>:

Ցուցմունքը տեղում ստուգելու գործողությունը քննչական փորձարարությունից տարբերվում է մի շարք հատկանիշներով: Մասնավորապես՝ քննչական փորձարարություն կարող է իրականացվել ինչպես հանցագործության կատարման վայրում, այնպես էլ ցանկացած այլ տեղ: Մինչդեռ, ցուցմունքը տեղում ստուգելը անմիջականորեն պետք է իրականացվի հանցագործության կատարման վայրում: Քննչական փորձարարություն պետք է կատարվի այն պայմաններում և հանգամանքներում, ինչպես կատարվել է դեպքը, այնինչ ցուցմունքը տեղում ստուգելը կարող է իրակա-

<sup>1</sup> Տե՛ս *Центров Е.Е.* О сути следственного действия «проверка показаний на месте»//Законность. М., 2013, № 10 с. 50-55.

<sup>2</sup> Տե՛ս *Зажичкий В. И.* Нужно ли следственное действие с «участием» куклы?// Российская юстиция. 2012, № 9. с. 31-34.

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup> Տե՛ս *Белоусов В. И., Натура А. И.* Проверка показаний на месте в ходе предварительного следствия. М.: Юрлитинформ, 2006. С. 28, 32.

նացվել ցանկացած եղանակի, օր և ժամի: Քննչական փորձարարության ժամանակ կարող են իրականացվել փորձարարական գործողություններ: Եվ ամենակարևորը՝ ցուցմունքը տեղում ստուգելը տարբերվում է քննչական փորձարարությունից իր նպատակով: Ցուցմունքը տեղում ստուգելը իրականացվում է՝ պարզելու նախկինում հարցաքննված անձի տված ցուցմունքների համապատասխանությունը (անհամապատասխանությունը) հանցագործության դեպքի իրադրությանը: Բացի այդ, ցուցմունքը տեղում ստուգելը կարող է իրականացվել գործի համար նշանակություն ունեցող առարկաներ և փաստաթղթեր հայտնաբերելու նպատակով, եթե անձը նախապես հայտնել է դրա գտնվելու վայրի մասին<sup>1</sup>:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է փաստել, որ տեղում ցուցմունքի ստուգումը և՛ իր նպատակներով, և՛ կատարման կարգով ապացույցների հավաքման եղանակ է և իր արժանի տեղը պետք է ստանա քննչական գործողությունների համակարգում:

Նախագծում նախատեսված նոր քննչական գործողություններից են նաև տեղեկատվություն պահանջելը և առարկաներ կամ փաստաթղթեր վերցնելը:

Տեղեկատվություն պահանջելը որպես ինքնուրույն քննչական գործողություն ամրագրված է Նախագծի 239-րդ հոդվածում, համաձայն որի՝ «1. Տեղեկատվության պահանջը քննիչի գրավոր դիմումն է վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկությունների տիրապետող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական անձին կամ ցանկացած այլ կազմակերպությանը:

2. Տեղեկատվության պահանջը պարտադիր է դրա հասցեատիրոջ համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հայցվող տեղեկությունը օրենքով պաշտպանվող գաղտնիք է, կամ երբ պահանջվում են առանձին փաստաթղթեր, առարկաներ կամ այլ նյութեր:

3. Հայցվող տեղեկությունը քննիչի կողմից սահմանված ժամկետում տրամադրվում է տեղեկանքի ձևով, որը որպես հավելված կցվում է տեղեկատվության պահանջի արձանագրությանը»:

Իսկ Նախագծի 240-րդ հոդվածում ամրագրված է մյուս՝ առարկաներ կամ փաստաթղթեր վերցնելը, քննչական գործողությունը, ըստ որի՝ «1. Առարկաներ կամ փաստաթղթեր վերցնելը ցանկացած անձի ներկայացրած և վարույթի համար նշանակություն ունեցող առարկաները կամ փաստաթղթերը քննիչի կողմից վարույթի նյութերին կցելն է: Քննիչը պարտավոր է վարույթի նյութերին կցել վարույթի մասնավոր մասնակիցների ներկայացրած առարկաները կամ փաստաթղթերը:

2. Առարկան կամ փաստաթուղթը վարույթի նյութերին կցելու դեպքում կազմվում է արձանագրություն, որտեղ նկարագրվում է ներկայացված առարկան կամ փաստաթուղթը և նշվում ներկայացնողի պարզաբանումն այն ձեռք բերելու հանգամանքների մասին:

3. Եթե առարկան կամ փաստաթուղթը ներկայացվում է քննչական գործողության ընթացքում, ապա սույն հոդվածի 2-րդ մասում նշված տեղեկությունները մտցվում են համապատասխան քննչական գործողության արձանագրության մեջ,

<sup>1</sup> Տե՛ս *Григорьев В. Н., Победкин А. В., Яшин В. Н.* Уголовный процесс: Учебник. – М.: Изд-во Эксмо, 2006, с. 456.

իսկ տվյալ առարկան կամ փաստաթուղթը կցվում է քննչական գործողության արձանագրությանը»:

Մեջբերված դրույթների բովանդակությունից հետևում է՝ հիշյալ քննչական գործողությունները փոխարինելու են ներկայիս քննչական պրակտիկայում տեղ գտած այլ դատավարական գործողություններին՝ քննչական հարցումներին:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, կարելի է փաստել, որ Նախագծով սահմանված քննչական գործողությունների համակարգը առավել ամբողջական է, այնտեղ ներառված չեն այնպիսի գործողություններ, որոնք չունեն ճանաչողական բնույթ: Միաժամանակ, Նախագիծը, ելնելով պրակտիկայի պահանջներից և հաշվի առնելով գիտատեխնիկական առաջընթացը, քննչական գործողությունների համակարգը համալրել է նոր ճանաչողական տարրերով, որոնք միտված են հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը և քրեական գործերով ապացուցողական զանգվածի ապահովմանը:

## СИСТЕМА СЛЕДСТВЕННЫХ ДЕЙСТВИЙ ПО ДЕЙСТВУЮЩЕМУ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОМУ ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РА И ПРОЕКТУ УПК РА

**Арсен Мартиросян**

*Заместитель прокурора города Еревана,  
Кандидат юридических наук, доцент*

Статья посвящена системе следственных действий, предусмотренных действующим УПК РА и проектом нового УПК РА. В статье автор проанализировал регулировку системы следственных действий как по действующему УПК РА, так и по проекту нового УПК РА, отметив положительные и отрицательные стороны. В рамках статьи проанализировав имеющиеся в теоретической литературе мнения, автор детальным образом представил вопрос о том, является ли наложение ареста на имущество, назначение и производство экспертизы, а также получение экспериментальных образцов следственным действием или нет. Статья также касается предусмотренных Проектом нового УПК РА и дополнивших систему следственных действий проверки показаний на месте, требования информации, взятия предметов или документов.

В результате анализа системы следственных действий по действующему уголовно-процессуальному законодательству и Проекту нового УПК РА, автор заключил, что система следственных действий, предусмотренная Проектом УПК, наиболее полная и в ней не содержатся такие действия, которые не носят информативного характера. Автор также отмечает, что предусмотренные Проектом УПК новые познавательные составляющие системы следственных действий направлены на повышение эффективности борьбы с преступностью и обеспечение доказательственной базы уголовных дел.

# THE SYSTEM OF THE INVESTIGATORY ACTIONS IN THE ACTING CRIMINAL PROCEDURE CODE OF THE REPUBLIC OF ARMENIA AND IN THE PROJECT OF NEW CRIMINAL PROCEDURE CODE OF THE REPUBLIC OF ARMENIA

**Arsen Martirosyan**

*Deputy Prosecutor of the city of Yerevan,  
Candidat of Legal Sciences, Docent*

---

The article focuses on the system of the investigatory actions in the acting Criminal Procedure Code of the Republic of Armenia and in the Project of new Criminal Procedure Code of the Republic of Armenia. The author has analyzed the system of the investigatory actions in the acting Criminal Proceeding Code and in the Project, showing positive and negative regulations. Analyzing the reviews in the theoretical literature the author in details shows whether putting arrest on the belongings, assigning and performing the examination, obtaining samples for examination are investigatory actions or not. Also there has been made an assume to such new investigatory actions as checking the testimony on place, obtaining information, taking subjects and documents, which has been provided by the Project of the Criminal Procedure Code.

By analyzing the regulations of the investigatory actions system in the acting Criminal Procedure code and the Project the author concludes that the system of the investigatory action regulated by the Project is more complete and there are no actions that do not have informative character. On a time the author shows that new investigatory actions regulated by the Project will be directed on improving the efficiency of the fight against crime and ensuring the evidential weight of the criminal cases.

**Բանալի բառեր-** *քննչական գործողություն, դատավարական հարկադրանքի միջոց, ապացուցողական գործողություն, գույքի վրա կալանք դնել, նմուշ ստանալ, ցուցմունքը տեղում ստուգել, փորձաքննություն, ապացույցի հավաքում:*

**Ключевые слова:** *следственное действие, мера процессуального принуждения, доказательственное действие, наложение ареста на имущество, получение экспериментальных образцов, проверка показания на месте, экспертиза, сбор доказательств.*

**Key words:** *investigatory action, procedural enforcement, evidence-based action, putting arrest of the belonging, obtaining samples for examination, checking the testimony on place, examination, collecting evidence.*



## ՄԱՔՍԱՅԻՆ ՏԵՍԱՋՆՆՄԱՆ և ՋՆՆՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՐԳԱԿՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

### Տիգրան Խաչիկյան

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ*

Մաքսային հսկողության իրականացումը ընտրողականության մեթոդի կիրառմամբ մաքսային մարմիններին հայեցողական իրավասություն է ընձեռում մաքսային օրենսդրությամբ սահմանված նպատակներին հասնելու համար կիրառել էությամբ համապատասխան գործիքակազմեր: Համարժեքության պահանջի խախտման դեպքում ուղղակիորեն կխաթարվի նպատակի և դրա կենսագործմանը միտված միջոցի միջև անհրաժեշտ ողջամիտ համամասնությունը: Հենց նշված գաղափարական ելակետով է պայմանավորված Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ մաքսային զննման և մաքսային տեսազննման (ներառյալ՝ շինությունների և տարածքների մաքսային տեսազննման) առանձնակի իրավակարգավորումը:

Սույն հոդվածի շրջանակներում «մաքսային տեսազննում» և «մաքսային զննում» հսկողական ձևերի միաժամանյա վերլուծությունը պայմանավորված է, առաջին հերթին, դրանց միջև առկա մի շարք օբյեկտիվ ընդհանրություններով: Մասնավորապես, հիշյալ ձևերի պարագայում նույնական է իրականացման նպատակը՝ մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման օրինականության ապահովումը: Ավելին, ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, ընդհանրություն է նաև օբյեկտը՝ ապրանքներն ու տրանսպորտային միջոցները, մաքսային մարմնի կողմից իրականացվող գործողությունների վարչաիրավական բնույթը<sup>1</sup>: Հսկողության այս երկու ձևերի փոխկապակցվածությունը դրսևորվում է նաև նրանում, որ ապրանքի արտաքին տեսողական դիտարկումը հաճախ կարող է բավարար չլինել դրա այս կամ այն հատկանիշի առկայությունը ստուգելու համար, և այս պարագայում մաքսային մարմինը կարող է ձեռնամուխ լինել մաքսային զննության իրականացմանը, որին **Եվրասիական տնտեսական համայնքի՝ պետության ղեկավարների մակարդակով միջպետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 17 որոշմամբ ընդունված «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի հավելված համարվող Մաքսային միության մաքսային օրենսգրքով**<sup>2</sup> ներկայացվում են մի շարք օրենսդրական պահանջներ:

Հարկ է նկատել, որ մաքսային տեսազննումը, որպես կանոն, նախորդում է հենց մաքսային զննմանը: Հաշվի առնելով դրանց ժամանակային հաջորդական կապը՝ առաջին հերթին քննության առարկա դարձնենք Միության օրենսգրքի մաքսային տեսազննմանը վերաբերող իրավադրույթները:

Գրականության մեջ, առհասարակ, տարբեր մոտեցումներ են արտահայտվել մաքսային տեսազննման էության և դրա խնդիրների շուրջ: Այսպես, Ն.Ա.Պոզոդինան

<sup>1</sup> Տե՛ս Комментарий к таможенному Российской Федерации / под. ред. А.Н. Козырина.- М., 2004, էջ 859:

<sup>2</sup> Ընդունվել է 27.11.2009թ. ուժի մեջ է մտել 02.01.2015թ. ՀՀՊՏ 2015.01.21/3 (1092) (այսուհետ՝ Միության օրենսգրք):

որպես շինությունների և տարածքների մաքսային տեսազննման նպատակ՝ առանձնացնում է

- մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների և տրանսպորտային միջոցների առկայության ստուգումը.

- ներմուծվող ապրանքների մեծածախ ու մանրածախ առևտրի գործունեություն իրականացնող անձանց մոտ Մաքսային օրենսգրքով սահմանված կարգի խախտմամբ մաքսային տարածք ներմուծված ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտնաբերումը<sup>1</sup>:

Մաքսային տեսազննումը մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների, իսկ բացառիկ դեպքերում նաև ֆիզիկական անձի ուղղակի կամ անուղղակի տեսողական հետազոտությունն է<sup>2</sup>: Ապրանքների մաքսային տեսազննման ներքո ընդունված է հասկանալ մաքսային մարմնի պաշտոնատար անձանց կողմից տրանսպորտային միջոցների կամ դրանց մեջ գտնվող ապրանքների արտաքին տեսքը ստուգող վարչաիրավական գործողությունները, որը չի ուղեկցվում բեռնային զետեղարանները, տարաները կամ ապրանքի փաթեթվածքները բացելով:<sup>3</sup> Ակներև է, որ հիշյալ ձևակերպումների միջև առկա է մեկ ընդհանուր բնորոշիչ. տեսազննման ճանապարհով ապրանքի մաքսային-իրավական կարգավիճակը ճշգրտվում է դրա տեսողական ընկալման ճանապարհով՝ ի տարբերություն մաքսային հսկողության մնացյալ ձևերի: Հենց սա է այն բնորոշիչը, որով այն առանձնանում է Միության օրենսգրքով սահմանված մաքսային հսկողության ձևերի համակարգում:

Այսպես, Միության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *մաքսային տեսազննումը ապրանքների, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների, ֆիզիկական անձանց ուղեբեռի, ինչպես նաև բեռնային տարողությունների, մաքսային կապարակնիքների, կնիքների և նույնականացման այլ միջոցների արտաքին տեսողական զննումն է առանց տրանսպորտային միջոցները, ապրանքների փաթեթվածքը բացելու, առանց ստուգվող օբյեկտի և դրա այլ մասերի ապամոնտաժման և այլ կերպ ամբողջականության խախտման:*

Վկայակոչված իրավադրույթի վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ մաքսային տեսազննման պարագայում զնահատման առարկա է դառնում բացառապես մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքին ներկայացվող պահանջների, ինչպես նաև դրանց նկատմամբ կիրառված մաքսային կապարակնիքների, կնիքների և նույնականացման այլ միջոցների պահպանումը: Այլ կերպ ասած՝ մաքսային մարմնի խնդիրն է այս պարագայում պարզել ապրանքի քանակական ու որակական հատկանիշները, ինչպես նաև ստուգել մաքսային հսկողության իրականացմամբ պայմանավորված՝ ապրանքի նկատմամբ կիրառված նույնականացման միջոցների պահպանվածության հարցը:

Կարելի է փաստել, որ մաքսային հսկողության ձևերի համակարգում մաքսային տեսազննմանը վերապահված է էական դեր: Այն ինքնուրույն կառուցակարգ է, որի

<sup>1</sup> Տե՛ս **Н. А. Погодина**, Таможенный досмотр товаров и транспортных средств как форма таможенного контроля, дисс. канд. юрид. наук. Саратов, 2010, էջ 88:

<sup>2</sup> Տե՛ս **Халипов С.В.** Таможенное право (Таможенное регулирование внешнеэкономической деятельности). М., 2001. էջ 90.

<sup>3</sup> Տե՛ս **Основы таможенного дела: учеб. пособие. Вып. II. Организация и технология таможенного контроля**, А.С.Круглов. М., 1995, էջ 8:

ուժով մաքսային մարմնին իրավական հնարավորություն է ընձեռնվում սոսկ ապրանքի արտաքին տեսողական դիտարկմամբ պարզել՝ անձի կողմից պահպանվել են արդյոք Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Ինչպես արդեն նշվեց, մաքսային տեսազննում հսկողական ձևի հետ օրգանապես փոխկապակցված է մաքսային զննումը, որը, թերևս, հընթացս իրականացվող մաքսային հսկողության անկյունաքարն է, որի դերը մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման օրինականության ապահովման գործում բավականին ծանրակշիռ է:

Անդրադառնալով մաքսային հսկողության այս ձևի էությանը՝ Ի.Վ. Տիմոշենկոն այն բնութագրում է որպես մաքսային մարմնի աշխատակցի կողմից ապրանքների, տրանսպորտային միջոցների, միջազգային փոստային առաքանու, ֆիզիկական անձանց ուղեբեռի փաստական ստուգում մաքսային սահմանով դրանց տեղափոխման օրինականության ապահովման, մաքսային հայտարարագրում և մաքսային մարմնին ներկայացված այլ փաստաթղթերում նշված տվյալների համապատասխանության ապահովման, մաքսային սահմանով տեղափոխվող թաքցված ապրանքների հայտնաբերման, ինչպես նաև մաքսային օրենսդրության խախտումների կանխման նպատակով<sup>1</sup>:

Մեկ այլ բնորոշման համաձայն՝ մաքսային զննումը հարկադրաբար իրականացվող որոնողական-ստուգողական պետաիշխանական բնույթի գործողություն է, որը լիազորված անձանց կողմից իրականացվում է օրենսդրությամբ սահմանված որոշակի օբյեկտների նկատմամբ առանց խախտելու դրանց կառուցվածքային ամբողջականությունը զենք կամ վարչական իրավախախտման առարկաներ հայտնաբերելու, ինչպես նաև վարչական և քրեական իրավանորմերի խախտումը կանխարգելելու նպատակով<sup>2</sup>:

Այսպես, Միության օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *մաքսային զննումը մաքսային մարմինների պաշտոնատար անձանց գործողություններն են, որոնք կապված են ապրանքների փաթեթվածքի կամ տրանսպորտային միջոցի բեռնային զետեղարանի կամ տարողությունների, կոնտեյներների և այլ վայրերի բացման հետ, որտեղ գտնվում են կամ կարող են գտնվել ապրանքները՝ դրանց վրա դրված մաքսային կապարակների կամ նույնականացման այլ միջոցների խախտմամբ, ստուգվող օբյեկտների և դրանց այլ մասերի կազմատմամբ, ապամոնտաժմամբ կամ այլ կերպ ամբողջականության խախտմամբ:*

Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն մաքսային տեսազննման, մաքսային զննման պարագայում մաքսային մարմնի գործողություններով ուղղակիորեն խախտվում է զննման ենթակա ապրանքների ամբողջականությունը: Այլ կերպ ասած՝ այս պարագայում մաքսային մարմինը չի բավարարվում սոսկ ապրանքների տեսողական արտաքին դիտարկմամբ և ապրանքին ներկայացվող քանակական և որակական բնութագրիչների առկայությունը զնահատման առարկա է դարձնում դրանց ամբողջականության խախտման միջոցով: Մաքսային զննման պարագայում ստուգվում են ապրանքները, որոնց կապակցությամբ մաքսային մարմնի պաշտո-

<sup>1</sup> Տե՛ս *Тимошенко И.В.* Таможенное регулирование внешнеэкономической деятельности. М., 2003. էջ 194.

<sup>2</sup> Տե՛ս *Мялков А.В.* Досмотр как мера административного принуждения, применяемая милицией. Дисс. ... канд. юрид. наук. Омск, 2004 էջ 9:

նատար անձի մոտ առկա է հիմնավոր կասկած մաքսային կապարակնիքների կամ նույնականացման այլ միջոցների խախտման կամ դրանց ամբողջականության խաթարման վերաբերյալ:

Հարկ է նկատել, որ, ի տարբերություն գործող մաքսային օրենսդրության, 1993թ. ՀՀ մաքսային օրենսգիրքը բավականին մանրամասն կարգավորում էր մաքսային զննության իրականացման նպատակը: Մասնավորապես, դրա 32-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների և այլ առարկաների տեղափոխման օրինականության ստուգման, հաշվառման, մաքսատուրքերով ու մաքսավճարներով հարկման նպատակով մաքսատունը կամ մաքսային կետն իրավունք ունեն կատարելու փոխադրամիջոցների, ապրանքների և այլ առարկաների զննում: Ինչպես և մաքսային հսկողության մնացած ձևերի պարագայում, այնպես էլ այս դեպքում, գտնում ենք, նպատակահարմար կլիներ, որ օրենսդրորեն սահմանվեր նաև դրա նպատակը, ինչն արդեն իսկ արվել է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի նախագծով: Այստեղ կարգավորվել են ինչպես մաքսային զննության նպատակը, այնպես էլ դրա անցկացման փաստական հիմքերը, ինչը, բնականաբար, հնարավորինս բացառում է խնդրո առարկա ոլորտում վարչական անհարկի հայեցողությունը<sup>1</sup>:

Ասվածը հիմնավորվում է նախևառաջ այն հանգամանքի հաշվառմամբ, որ, օրինակ, մաքսային տեսազննման պարագայում նպատակն ուղղակիորեն ամրագրված է նաև օրենսդրորեն: Մասնավորապես, Միության օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասն ուղղակիորեն ամրագրում է, որ *մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից ապրանքների, այդ թվում՝ միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների, միջազգային փոստային առաքանիների և ֆիզիկական անձանց ուղեբեռի մաքսային տեսազննումն իրականացվում է մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների բնույթի, ծագման, վիճակի և քանակի վերաբերյալ տեղեկությունների, ապրանքների, տրանսպորտային միջոցների և դրանց բեռնային զետեղարանների վրա մաքսային կապարակնիքների, կնիքների և նույնականացման այլ կիրառված միջոցների առկայության վերաբերյալ տեղեկությունների հաստատումը ստանալու նպատակով*:

Ընդ որում, ուշագրավ է, որ մաքսային զննման իրականացմանը որոշակի ուղեմիջային պահանջներ են առաջադրվում նաև Կոնվենցիայի շրջանակներում: Մասնավորապես, դրա 3-րդ գլխի **3.33. ստանդարտի համաձայն**՝ երբ մաքսային ծառայությունը որոշում է ընդունում, որ հայտարարագրում նշված ապրանքները ենթակա են զննման, ապա այդպիսի զննումը իրականացվում է ապրանքների հայտարարագիրը գրանցելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետներում:

Ակներև է, որ քննարկվող հսկողական կառուցակարգի դեպքում ստուգման առարկա են ապրանքները՝ իրենց քանակական և որակական հատկանիշների ողջ համալիրով, ներառյալ՝ կիրառված նույնականացման միջոցների առկայության փաստի գնահատումը: Այլ կերպ ասած՝ մեր համոզմամբ, թե մաքսային զննության, թե մաքսային տեսազննման պարագայում գնահատման առարկա են դառնում սկզբունքորեն նույն հանգամանքները, ապրանքը՝ իրեն ներկայացվող հատկանիշների համալիրով, ինչպես նաև դրա պահպանվածությանը ներկայացվող այլ պահանջների (կապարակնքում, նույնականացման միջոց և այլն) պահպանվածություն-

<sup>1</sup> Տե՛ս Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայք <http://www.eaeunion.org/>

ըը: Մինչդեռ, գտնում ենք, որ ստուգման նպատակի մասով մաքսային հսկողության նշված երկու ձևերի միջև չպետք է լիներ որևէ տարբերակում: Բանն այն է, որ Միության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է մաքսային գննության իրականացումը բացառապես այն պարագայում, երբ առկա է ստուգման ենթակա ապրանքների նկատմամբ կիրառվող նույնականացման միջոցների կամ դրանց ամբողջականության խախտում: Դրան հակառակ, մաքսային տեսազննման պարագայում կարևորվում է նաև ապրանքների բնույթի, ծագման, վիճակի և քանակի վերաբերյալ տեղեկությունների ձեռքբերման նպատակը: Փաստորեն, ստացվում է այնպես, որ այս առումով մաքսային տեսազննման և գնման միջև օրենսդրորեն դրվել է անհարկի տարբերություն, որը որևէ հիմնավորմամբ առարկայացված չէ: Ուստի, գտնում ենք, որ անհրաժեշտ է առավել համակողմանի սահմանել մաքսային գնման նպատակները՝ դրանում ուղղակիորեն ներառելով նաև այն դեպքերը, երբ գնումն իրականացվում է ապրանքի քանակական և որակական հատկանիշների, դրա բնույթի, ծագման և այլ հատկանիշների որոշման նպատակով:

Մաքսային տեսազննումից զատ, օրենսդիրը մաքսային հսկողության ձևերի համակարգում է դիտարկում նաև շինությունների և տարածքների մաքսային տեսազննումը՝ դրա իրականացման մասով սահմանելով առանձին իրավակարգավորում: Մասնավորապես, Միության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ *շինությունների և տարածքների մաքսային տեսազննումն իրականացվում է ստուգելու համար մաքսային հսկողության տակ գտնվող, այդ թվում՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքների առկայությունը ժամանակավոր պահպանման պահեստներում, մաքսային պահեստներում, անմաքս առևտրի խանութի շինություններում և այլ վայրերում, որտեղ կարող են լինել մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքներ, ինչպես նաև այն անձանց մոտ, որոնց մոտ պետք է գտնվեն ապրանքներ՝ սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերին համապատասխան:*

Վերը հիշատակված օրենսդրական բնորոշումից բխում է, որ անկախ տարբերակված ձևով դրանց օրենսդրական ամրագրումից, «մաքսային տեսազննում» և «շինությունների ու տարածքների մաքսային տեսազննում» հսկողական ձևերի միջև առկա են մի շարք ընդհանրություններ: Դրանք օրգանապես փոխկապակցված են այն իմաստով, որ դրանց էությանը բնորոշ մի շարք հատկանիշներ ուղղակիորեն համընկնում են: Մասնավորապես, հիշյալ ընդհանրությունները հանգում են հետևյալին.

- *Մաքսային օրենսդրության դրույթի պահպանվածության փաստի ստուգումը բացառապես տեսողական դիտարկման ճանապարհով.*

- *Հսկողության արդյունքների գրավոր արձանագրում.*

- *Հայտարարատուների, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձանց և նրանց ներկայացուցիչների մասնակցության հնարավորություն.*

- *Մաքսային հսկողության օբյեկտների մասնակի համընկնում:*

Հարկ է նկատել նաև, որ մաքսային հսկողության ձևերի համակարգում նշված երկու հսկողական կառուցակարգերը տարբերակված ձևով ամրագրվել են նաև Եվրոպական տնտեսական միության մաքսային օրենսգրքի նախագծում, ինչը հիմքեր է տալիս ենթադրելու, որ այս հարցում միութենական մակարդակով փոփոխություններ դեռևս չեն էլ սպասվում:

Ինչպես տեսնում ենք, մաքսային հսկողության ձևերի համակարգում մաքսային

տեսազննումն ու շինությունների և տարածքների մաքսային տեսազննումն ամրագրվել են առանձին և տարբերակված: Ի տարբերություն մաքսային տեսազննման, շինությունների և տարածքների մաքսային տեսազննման պարագայում մաքսային մարմնի կողմից գնահատման առարկա է դառնում հիմնականում մաքսային հսկողության համապատասխան տարածքներում ապրանքների առկայության փաստը, ինչպես նաև «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներին ու պայմաններին շինությունների և տարածքների համապատասխանության հետ կապված հարցերը<sup>1</sup> (*Օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մաս*): Այլ կերպ ասած՝ նշված երկու հսկողական կառուցակարգերն իրարից տարբերվում են հսկողության օբյեկտների մասով: Եթե մաքսային տեսազննումը միտված է առհասարակ ապրանքի մասին տեղեկատվության ստացմանն ու դրա վրա նույնականացման միջոցի առկայության փաստի հավաստմանը, ապա շինությունների և տարածքների մաքսային տեսազննման համատեքստում առաջին հերթին կարևորվում է հսկողության ենթակա տարածքում ապրանքների առկայության հանգամանքը:

Մեր համոզմամբ, սակայն, հսկողության օբյեկտում մասնակի տարբերության առկայությունն ինքնին դեռևս բավարար հիմք չէ շինությունների և տարածքների մաքսային տեսազննումը մաքսային հսկողության ձևերի համակարգում մաքսային տեսազննումից առանձնացնելու համար: Բանն այն է, որ գործող իրավակարգավորման շրջանակներում մաքսային տեսազննման իրավական իմաստն ու բովանդակությունն ամբողջապես ներառում են շինությունների և տարածքների մաքսային տեսազննմամբ հետապնդվող խնդիրները:

Այս առումով պատահական չէ, որ, օրինակ, «Մաքսային կարգավորման մասին» Ղրղզստանի Հանրապետության օրենքի 257-րդ հոդվածի (*ապրանքների և տրանսպորտային միջոցների տեսազննումը*) 5-6-րդ մասերով շինությունների և տարածքների մաքսային տեսազննումն ուղղակիորեն կարգավորման է ենթարկվում հենց ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային տեսազննման հսկողական ձևի շրջանակներում:<sup>2</sup>

Ընդ որում, անհրաժեշտ է արձանագրել, որ հիշյալ հարաբերությունների միասնական իրավակարգավորումն ակնհայտորեն ունի նաև լուրջ գործնական նշանակություն: Բանն այն է, որ տարբերակված օրենսդրական կանոնակարգումների բացակայության պատճառով մաքսային տեսազննման և շինությունների ու տարածքների մաքսային տեսազննման օրենսդրական կանոնակարգումները, մեր համոզմամբ, անհարկի տարբերվում են, ներառյալ դրանց ընթացքի օրինականությունն ապահովելուն միտված օրենսդրական երաշխիքների նախատեսման համատեքստում:

Այսպես, մաքսային հսկողության նշված երկու ձևերին վերաբերող իրավակարգավորումների համադրված վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ մաքսային տեսազննման պարագայում ստուգման ենթակա օբյեկտների շրջանակն անհամեմատ ավելի լայն է: Այս իմաստով ակներև է, որ դրա ընթացքում ծագող իրավահարաբերությունների բարդությամբ պայմանավորված՝ մաքսային տեսազննման իրականացումը պետք է առավել համակողմանի իրավակարգավորում ստանար: Մինչ-

<sup>1</sup> Ընդունվել է 17.12.2014թ., ուժի մեջ է մտել 02.01.2015թ., ՀՀՊՏ 2014.12.30/76 (1089).1: այսուհետ՝ Օրենք

<sup>2</sup> «Մաքսային կարգավորման մասին» Ղրղզստանի Հանրապետության օրենք, ընդունվել է 31.12.2014թ., ուժի մեջ է մտել 12.08.2015թ. [www.base.spinform.ru](http://www.base.spinform.ru)

դեռ, օրենսդրական գործող կարգավորման շրջանակներում չեն նախատեսվել այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ մաքսային տեսազննմանը ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձանց մասնակցությունը, այդ ընթացքում դիտողությունների և առարկությունների ներկայացումը և այլն: Եվ սա այն պայմաններում, երբ Միության օրենսգիրքը շինությունների և տարածքների մաքսային տեսազննման պարագայում առավել ակնառու երաշխիքներ (իրահանման գույցումի առկայություն, ընթերականների ներկայություն և այլն) է նախատեսում: Ակներև է, որ հսկողական հիշյալ ձևի կիրառման պարագայում անձանց իրավունքների խախտման հավանականությունը բավականաչափ մեծ է: Հետևապես, մեր համոզմամբ, նշված սկզբունքային հարցերը պետք է առանձին և համակողմանի կարգավորում ստանալին Միության օրենսգրքով:

Ընդ որում, ուշագրավ է, որ, ի տարբերություն մաքսային տեսազննման, մաքսային զննման պարագայում Միության օրենսգիրքն առավել մանրամասն կարգավորում է դրա ընթացակարգը: Մասնավորապես, Միության օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասն արձանագրում է, որ *մաքսային մարմնի՝ մաքսային զննում իրականացնելու համար լիազորված պաշտոնատար անձը մաքսային զննման անցկացման վայրի և ժամանակի մասին տեղեկացնում է հայտարարատուին կամ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձին, եթե այդ անձինք հայտնի են: Մաքսային զննումը սկսելու ժամանակը որոշելիս պետք է հաշվի առնվեն այդ անձանց ժամանման ողջամիտ ժամկետները:*

*Հայտարարատուն, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձինք և նրանց ներկայացուցիչներն իրավունք ունեն սեփական նախածեռնությամբ ներկա գտնվելու մաքսային զննմանը՝ բացառությամբ սույն հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքի:*

Ըստ էության, մաքսային զննման պարագայում Միության օրենսգիրքն ուղղակիորեն ամրագրում է հայտարարատուին կամ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձին մաքսային զննման անցկացման ժամանակի և վայրի մասին մաքսային մարմնին տեղեկացնելու պարտականությունը: Նշված ընթացակարգի պարտադիրությունն ամրագրված է նաև Կոնվենցիայի 3.36. ստանդարտով, որի համաձայն՝ մաքսային ծառայությունը քննության է առնում հայտարարատուի դիմումը՝ ներկա գտնվելու կամ ներկայացված լինելու ապրանքների զննության ժամանակ: Այդ դիմումները բավարարվում են, եթե առկա չեն բացառիկ հանգամանքներ: Միաժամանակ, նույն Կոնվենցիայի 3.37. ստանդարտի համաձայն՝ եթե մաքսային ծառայությունը նպատակահարմար է գտնում, ապա ապրանքների զննում իրականացնելու ժամանակ նա կարող է պահանջել հայտարարատուի կամ նրա ներկայացուցչի ներկայությունը ցանկացած օգնություն ցուցաբերելու նպատակով, որն անհրաժեշտ է զննումը դյուրացնելու համար: Մաքսային տեսազննման պարագայում Միության օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասն արձանագրում է, որ մաքսային հսկողության գոտում մաքսային տեսազննումը կարող է իրականացվել հայտարարատուի, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձանց և նրանց ներկայացուցիչների բացակայության պայմաններում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նշված անձինք ցանկություն են հայտնում ներկա գտնվել մաքսային տեսազննման ժամանակ:

Հարց է ծագում՝ ինչպես պետք է հայտարարատուն կամ նրա կողմից լիազորված անձը մասնակցի մաքսային տեսազննմանը, երբ օրենսդրորեն որևէ կերպ սահ-

մանված չէ վերջիններիս նախնական ծանուցման ընթացակարգը: Այլ կերպ ասած՝ անձի մասնակցության ապահովման համար նախևառաջ անհրաժեշտ է, որ տվյալ անձը որևէ կերպ իրագեկ լինի նշված հսկողական միջոցառման մասին: Հակառակ դեպքում, վերջինս չի կարող արտահատել իր ուղղակի և անմիջական կամաարտահայտությունը: Բնականաբար, դրանով պայմանավորված՝ հիշյալ իրավակարգավորումը սկզբունքորեն չի կարող համարժեք կենսագործվել մաքսային իրավահարաբերություններում: Ուստի, առաջարկում ենք մաքսային տեսազննման պարագայում նույնպես նախատեսել անձանց նախնական ծանուցման պարտադիր կարգ, որի առկայությամբ հնարավոր է լիարժեքորեն ապահովել նաև անձանց մասնակցության հնարավորությունը:

Բացի այդ, դիմադրությունը ճնշելու նշված ընթացակարգն իրականացնելիս էական նշանակություն է ստանում դրա օրինականության ապահովման նկատմամբ հսկողության իրականացումը: Ըստ էության, որպես դրա երաշխավորման գործիք՝ Միության օրենսգրքով նախատեսվել է այդպիսի յուրաքանչյուր դեպքի մասին դատախազին ծանուցելու պարտականությունը: Մինչդեռ, նշված ծանուցման իրականացման կարգը և ժամկետները Միության օրենսգրքով կանոնակարգված չեն, ինչը, ըստ էության, էապես նվազեցնում է նշված իրավական գործիքի արդյունավետությունը: Ակներև է, որ անարդյունավետ է այն գործիքի կիրառումը, որի գործնական նշանակությունը որևէ կերպ չի առարկայացվում:

Ընդ որում, հատկանշական է, որ Միության օրենսգրքի 116-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը հայտարարատուի կամ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձանց, նրանց ներկայացուցիչների բացակայության պայմաններում նախատեսում է մաքսային զննության իրականացման հնարավորություն այն պարագայում, երբ առկա են հետաձգում չհանդուրժող հանգամանքներ: Միաժամանակ, այս դեպքերի համար նույնպես, որպես ընդհանուր կանոն, ամրագրված է ընթերակաների պարտադիր ներկայությունը: Հետևապես, հետաձգում չհանդուրժող դեպքերում մաքսային մարմնի ջանքերը ժամանակի հաշվին ընթերականեր ներգրավելու, մեր համոզմամբ, անհարկի ծանրաբեռնում է մաքսային վարչարարությանը: Հենց այդ պատճառով առաջարկում ենք նախանշել դրույթ, որի համաձայն՝ Միության օրենսգրքի 116-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում ընթերակաների ներկայությունը չլինի պարտադիր օրենսդրական պայման: Փոխարենը, որպես նշված դեպքերում մաքսային հսկողության իրականացման օրինականության ապահովման գործիք՝ նպատակահարմար կլիներ դրա արդյունքներն ամրագրել տեսաձայնագրման կիրառմամբ:

Գործնական առումով բավական խնդրահարույց են նաև Միության օրենսգրքով շինությունների և տարածքների մաքսային տեսազննման ժամկետներին վերաբերող հարցերը: Այսպես, Միության օրենսգրքի 119-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ *շինությունների և տարածքների մաքսային տեսազննումը պետք է իրականացվի հնարավորինս նվազագույն ժամկետում, որն անհրաժեշտ է դրա իրականացման համար, և որը չի կարող շարունակվել 1 (մեկ) աշխատանքային օրից ավելի, եթե այլ բան սահմանված չէ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ:*

Խնդիրն այն է, որ առանձին դեպքերում մեկ աշխատանքային օրը ողջամտորեն բավարար չի լինում տեսազննման իրականացման համար՝ պայմանավորված մի շարք օբյեկտիվ գործոններով: Առավել ևս, ներպետական օրենսդրության շրջանակներում դեռևս առկա չէ մաքսային տեսազննման իրականացման մեթոդիկական կար-



գավորող որևէ նորմատիվ իրավական ակտ: Ուշագրավ է, որ Օրենքն այս առումով չի նախանշում որևէ բացառություն, որի պատճառով խնդիրը մնում է չկարգավորված: Բանն այն է, որ առանձին դեպքերում շինություններ և տարածքներ մաքսային մարմնի աշխատակցի մուտք գործելը խաթարվում է՝ պայմանավորված դրա մերժմամբ, ինչը, բնականաբար, պահանջում է լրացուցիչ միջոցների ներգրավում: Կամ, առանձին դեպքերում մաքսային հսկողության տարածքների ընդարձակ լինելու հիմքով հնարավոր չի լինում տեսազննման ողջ գործընթացն ավարտել մեկ աշխատանքային օրվա շրջանակներում: Ուստի, այս պարագայում, գտնում ենք՝ անհրաժեշտ կլինե՞ր Օրենքով նախատեսել իրավադրույթ, որի համաձայն՝ մաքսային տեսազննումը պետք է իրականացվի Մաքսային միության մաքսային օրենսգրքի 119-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված ժամկետներում, բացառությամբ՝

- *մաքսային տեսազննման նպատակով շինություններ և տարածքներ մուտք գործելու հնարավորության մերժման կամ ապրանքների կամավոր ներկայացումից հրաժարվելու պարագայում.*

- *երբ ապրանքների նույնականացման համար պահանջվում է շինություններում և տարածքներում այնպիսի գործողությունների իրականացում, որոնք չեն կարող ավարտվել մեկ աշխատանքային օրվա ընթացքում.*

- *երբ մաքսային տեսազննման ենթակա շինությունների և տարածքների չափերը գերազանցում են 1000 քմ<sup>2</sup>:*

Ընդ որում, պետք է նկատել, որ ներպետական օրենսդրությամբ նման բացառություններ սահմանելու հնարավորությունը նախանշված է հենց Միության օրենսգրքով: Դրան համապատասխան, նշված բացառություններն ամրագրված են նաև «Մաքսային կարգավորման մասին» ՌԴ օրենքում<sup>1</sup> և «Մաքսային կարգավորման մասին» Բելառուսի Հանրապետության օրենքում:<sup>2</sup> Ավելին, «Մաքսային գործի մասին» Ղազախստանի Հանրապետության օրենսգրքի 208-րդ հոդվածի 8-րդ մասն ամրագրում է, որ շինությունների և տարածքների մաքսային տեսազննումը պետք է իրականացվի նվազագույն ժամանակահատվածում: Մաքսային տեսազննման ընթացքը կարող է երկարացվել ոչ ավելի, քան հինգ աշխատանքային օրով:<sup>3</sup> Մինչդեռ, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 130-րդ հոդվածի 3-րդ մասը սուկ ամրագրում է, որ տարածքների և շինությունների մաքսային զննումն իրականացվում է նվազագույն բավարար ժամանակահատվածում: Դրա շրջանակներում որևէ բացառություն կամ առանձնահատուկ կարգավորում նախատեսված չէ: Ավելին, հիշյալ հոդվածում թեպետ հղում է արվում Միության օրենսգրքի 119-րդ հոդվածին (շինությունների և տարածքների մաքսային տեսազննումը), այսուհանդերձ, որպես մաքսային հսկողության ձև՝ Օրենքում այն ամրագրվել է «շինությունների և տարածքների մաքսային զննում» բառակապակցությամբ, որպիսի իրավիճակն ակնհայտորեն ենթակա է շտկման:

Այսպիսով, հսկողական յուրաքանչյուր ձև պետք է ունենա հստակորեն կանխ-

<sup>1</sup> «Մաքսային կարգավորման մասին» ՌԴ օրենք, ընդունվել է 27.11.2010, N 311-Փ3, 30.12.2015թ. խմբագրությամբ [www.consultant.ru](http://www.consultant.ru)

<sup>2</sup> «Մաքսային կարգավորման մասին» Բելառուսի Հանրապետության օրենք: Ընդունվել է 16.12.2013թ. 10.01.2014թ. խմբագրությամբ, № 129-3 [www.pravo.by](http://www.pravo.by):

<sup>3</sup> «Մաքսային գործի մասին» Ղազախստանի Հանրապետության օրենսգրք: Ընդունվել է 30.06.2010թ. № 296 IV (փոփոխություններն ու լրացումները՝ 09.04.2016 թ.) [www.online.zakon.kz](http://www.online.zakon.kz)

րոշված նպատակ և խնդիր: Հենց այս տրամաբանությունը պետք է ներդրված լինի մաքսային հսկողության ձևերի իրավական ամրագրման հիմքում: Մաքսային տեսազննման ինստիտուտի շարունակական կատարելագործումն ուղղակիորեն պայմանավորված է մաքսային հսկողության ինստիտուտի զարգացման հրամայականով: Ուստիև, գտնում ենք, որ հիշյալ հսկողական ձևը պետք է Օրենքով առավել համակողմանի կարգավորում ստանալ արդյունավետ կիրարկում ապահովելու նպատակով:

## ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ТАМОЖЕННОГО ДОСМОТРА И ОСМОТРА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Тигран Хачикян

*Аспирант кафедры гражданского процесса ЕГУ*

Статья относится к сущности и вопросам осуществления таможенного досмотра и осмотра. Статья особенна в том смысле, что предложения и выводы сделаны в разрезе «Таможенного законодательства Таможенного Союза» и Закона РА «О таможенном регулировании». Учитывая необходимость соотношения связи субъект – функция – институт, в статье вносятся предложения по совершенствованию правового регулирования вышеуказанного института.

## LEGAL ISSUES OF CUSTOMS INSPECTION IN THE REPUBLIC OF ARMENIA

Tigran Khachikyan

*Post-graduate student of the YSU Chair of Civil Procedure*

The article refers to the nature of customs inspection, as well as the issues of its fulfilment. The article is also noteworthy as the recommendations and conclusions are made in the context of the legal regulations of the Customs Code of the Customs Union and "Law about customs regulation of the RA". Taking into account the necessity of ensuring harmony of subject-function-institute, some suggestions have been made in the article concerning to the mentioned institute.

**Բանալի բառեր** – մաքսային հսկողություն, մաքսային զննում, մաքսային տեսազննում, մաքսային կարգավորում

**Ключевые слова:** таможенный надзор, таможенный досмотр, таможенный осмотр, таможенное регулирование.

**Key words:** customs control, customs inspection, customs, check, customs regulation.

## ԸՆԴՀԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱՆՏՏԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

### Անի Միքայելյան

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ*

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը<sup>1</sup>, արտացոլելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի<sup>2</sup> 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքի դրույթները, սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության (61-րդ հոդված), անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք (63-րդ հոդված):

ՀՀ դատական օրենսգրքի<sup>3</sup> 7-րդ հոդվածը սահմանում է, որ ոչ ոք չի կարող զրկվել հավասարության պայմաններում և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ **իրավասու**, անկախ և անկողմնակալ **դատարանի կողմից** ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքից:

Դատական պաշտպանության իրավունքը, ի թիվս այլնի, ենթադրում է նաև, որ իրավաբանական գործի քննությունը և լուծումը պետք է իրականացվեն օրենքով սահմանված, այլ ոչ թե կամայականորեն ընտրված դատարանի կազմի կողմից<sup>4</sup>:

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական արժեքը այն է, որ ոչ ոք չպետք է զրկվի իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով: Միայն օրենքով պետք է սահմանվեն ընդդատության փոփոխման հստակ հիմքերը՝ բացառելով անորոշությունը, սուբյեկտիվիզմը, դատական կամայականությունները գործը մի դատարանից մեկ այլ դատարան հանձնելու հարցը լուծելիս<sup>5</sup>:

Դատական պաշտպանության սահմանադրորեն ամրագրված իրավունքի խախտման են հանգեցնում այն դեպքերը, երբ գործը քննում է այն դատարանը, որը տվյալ գործը քննելու իրավասություն չունի, կամ ընդհակառակը, երբ դատարանը, որը իրավասու է տվյալ գործը քննելու, հրաժարվում է այն քննության ընդունելուց:

Քաղաքացիական գործի ճիշտ ընդդատության որոշումը ունի գործնական

<sup>1</sup> Ընդունվել է 06.12.2015թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2005.12.05/Հատուկ թողարկում, հոդ. 1118: Ուժի մեջ է մտել 22.12.2015թ.:

<sup>2</sup> «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան ընդունվել է 1950թ. նոյեմբերի 4-ին: Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2002թ. ապրիլի 26-ին:

<sup>3</sup> Ընդունվել է 21.02.2007թ., ուժի մեջ է մտել 18.05.2007թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2007.04.18/20(544), ՀՕ-135-Ն:

<sup>4</sup> Տե՛ս Определение Конституционного Суда РФ от 4 июня 1998 г. «По жалобе гражданина Генина А.И. на нарушение его конституционных прав пунктом 1 части 2 ст. 122 ГПК РСФСР» // СЗ. 1998. № 30. էջ 3799:

<sup>5</sup> Տե՛ս Постановление Конституционного Суда РФ от 16 марта 1998 г. «По делу о проверке конституционности статьи 44 УПК РСФСР и статьи 123 ГПК РСФСР в связи с жалобами ряда граждан» // СЗ. 1998. № 12. էջ 1459; а также: Определения Конституционного Суда РФ от 4 июня 1998 г., 1 апреля 1999 г., 13 апреля 2000 г.:

կարևոր նշանակություն: Սխալ դատարան հայցի ներկայացումը, ոչ ընդդատյա դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելը և քննություն իրականացնելը հանգեցնում են ընդդատության կանոնների խախտման, որը քաղաքացիական դատավարության տարբեր փուլերում կարող է ունենալ տարբեր իրավական հետևանքներ, ընդհուպ դատական ակտի բեկանում:

«Քաղաքացիական դատավարության օրենսգրքի»<sup>1</sup> իրավակարգավորումների համատեքստում ընդդատության կանոնների խախտման տակ պետք է հասկանալ դատարանի կողմից ինչպես առարկայական, այնպես էլ տարածքային ընդդատության կանոնների խախտումը: «ՀՀ ՔԴՕ-ն, սակայն, չի տարբերակում առարկայական և տարածքային ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքները: Ավելին, ՀՀ ՔԴՕ-ում «ենթակայություն» հասկացության փոխարեն օրենսդիրը օգտագործում է «առարկայական ընդդատություն» հասկացությունը, որը հենց ենթակայությունն է: Շրջանառության մեջ դրված ՀՀ ՔԴՕ նախագծով արդեն առանձնացվել են քաղաքացիական գործերով «ենթակայություն» և «ընդդատություն» հասկացությունները: Սույն աշխատանքի հետագա շարադրանքում առարկայական ընդդատություն հասկացությունը օգտագործելիս մենք ի նկատի ենք ունենալու հենց ենթակայությունը:

Ըստ ՀՀ ՔԴՕ իրավակարգավորման՝ ընդդատության կանոնների խախտման հետևանքը հայցի հարուցման փուլում հայցադիմումը վերադարձնելն է, գործի նախապատրաստման, քննության փուլերում՝ գործի հանձնումը այլ դատարանի քննությանը՝ ըստ պատշաճ ընդդատության<sup>2</sup>:

Բացի այս երկու հիմքերից, ՀՀ ՔԴՕ-ն նախատեսում է նաև հայցադիմումի ընդունումը մերժելը (ՀՀ ՔԴՕ 91 հոդվ. 1-ին մաս, 1-ին կետ) և գործի վարույթի կարճումը (ՀՀ ՔԴՕ 109 հոդվ. 1-ին մաս, 1-ին կետ) այն դեպքերում, երբ վեճը ենթակա չէ դատարանում քննության:

«Վեճը ենթակա չէ դատարանում քննության» եզրույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իմաստով պետք է մեկնաբանել այն կերպ, որ վեճը ենթակա չէ ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Հետևաբար, կարող ենք նշել, որ **առարկայական ընդդատության (ենթակայության) կանոնների խախտման իրավական հետևանքը** հայցի հարուցման փուլում հայցադիմումի ընդունումը մերժելն է, իսկ գործի նախապատրաստման, քննության փուլերում՝ գործի վարույթը կարճելը:

**Տարածքային ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքը** համապատասխանաբար հայցի հարուցման փուլում հայցադիմումը վերադարձնելն է, իսկ գործի նախապատրաստման, քննության փուլերում՝ գործի հանձնումը այլ դատարանի քննությանը՝ ըստ պատշաճ ընդդատության:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելիս դատարանը նախ և առաջ պետք է որոշի՝ վեճը ենթակա է արդյոք դատարանի քննությանը: Եթե դատարանը պարզում է, որ վեճը դատարանի քննությանը ենթակա չէ, ապա մերժում է հայցադիմումի ընդունումը: Քաղաքացիական գործի դատական ենթակայությունը որոշելուց անմիջապես հետո հայցադիմումն (դիմումն) ընդունող դատավորը պետք է պարզի,

<sup>1</sup> Ընդունվել է 17.06.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.09/20(53): Այսուհետ՝ նաև ՀՀ ՔԴՕ:

<sup>2</sup> Տե՛ս **Մեղրյան Ս. Պ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունը սխեմաներում: Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 84:

թե տվյալ գործն ընդդատյա է արդյոք այն դատարանին, որն սպասարկում է ինքը: Այսինքն՝ ընդհանուր իրավասության դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելիս ստուգում է նաև գործի (վեճի) իրեն ընդդատյա լինելու՝ վեճի քաղաքացիաիրավական (մասնավոր իրավական) բնույթը և վարույթ է ընդունում այն հայցադիմումը, որը բխում է քաղաքացիաիրավական հարաբերությունից<sup>1</sup>: Ընդդատության հարցը դատավորը լուծում է միանձնյա հայցադիմումն ընդունելու հարցը լուծելու հետ միաժամանակ: Եթե գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին, ապա դատավորը վերադարձնում է հայցադիմումը (ՀՀ ՔԴՕ 92 հոդվ. 1-ին մասի 3-րդ կետ):

Այլ է իրավիճակը, երբ գործը դատարանում քննելիս է պարզվում, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ: Տվյալ դեպքում դատարանն այն ուղարկում է ըստ պատշաճ ընդդատության: Նշված հարցի կարգավորմանն է նվիրված ՀՀ ՔԴՕ 86-րդ հոդվածը, որի 1-ին մասի համաձայն. **«Դատարանը՝ ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թելուզ այն հետազայում դարձել է ընդդատյա այլ դատարանի»:**

Նշված դրույթը կարգավորում է այն դեպքերը, երբ վարույթը հարուցվել է պատշաճ ատյանում և պատշաճ վայրում, սակայն դրա ընթացքում որոշ հանգամանքների բերումով տվյալ գործը ընդդատյա է դարձել մեկ այլ դատարանի: Այդպիսի հանգամանքներ կարող են լինել, օրինակ, երբ պատասխանողի բնակության (գտնվելու) վայրը փոփվում է, տեղի է ունենում ոչ պատշաճ կողմի փոխարինում կամ հակընդդեմ հայց ներկայացվելուց հետո սկզբնական հայցվորը հրաժարվում է իր հայցապահանջից: Թվարկված և հնարավոր բոլոր այլ դեպքերում սկզբնապես ընդդատության կանոնների պահպանմամբ ճիշտ ընտրված ընդդատությունը փոխելն արգելված է:

ՔԴՕ 86-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է այն դեպքերը, երբ այն դատարանը, որին ներկայացվել է հայցադիմումը, կամ որն արդեն իրականացնում է վարույթ, գործը հանձնում է այլ դատարանի քննության: Գրականության մեջ տարածքային ընդդատության փոփոխումն իրավացիորեն բնորոշվում է որպես «օրենքով նախատեսված հիմքերով սահմանված ընդդատության կանոններին հակառակ գործը մեկ այլ դատարանի լուծմանը հանձնելուն ուղղված գործողություն»<sup>2</sup>: Այսպիսով, ՀՀ ՔԴՕ 86-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննության՝

1. եթե գործը տվյալ դատարանում քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ.

2. գործը տվյալ դատարանում քննելու անհնարինության այլ դեպքերում»:

Առաջին դեպքը կիրառվում է այն ժամանակ, երբ դատարանում քննվում է որևէ քաղաքացիական գործ, որը վարույթի հարուցման պահին ընդդատյա չէր տվյալ դատարանին, և ընդդատության կանոնների խախտումը բացահայտվել է միայն վարույթի ընթացքում: Սրա օրինակ կարող են ծառայել հետևյալ դեպքերը. վարույթը հարուցվել է պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարան, սակայն գործի քննության ընթացքում պարզվել է, որ այդ վայրը հայցվորը սխալ էր որոշել,

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԿԴ/0745/02/11 քաղաքացիական գործով 31.08.2012 թ. որոշումը:

<sup>2</sup> Տե՛ս "Подведомственность и подсудность дел гражданского судпроизводства". Учебное пособие. под редакцией Г. Л. Осокина, Томск, 1993, էջեր 32-33:

գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը (բացառիկ ընդդատության կանոնի կիրառման ոլորտ) հարուցվել է պատասխանողի բնակության (գտնվելու) վայրում և այլն:

Նշված հոդվածի վերլուծությունից և ՀՀ ՔՂՕ իրավակարգավորումների ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ գործը այլ դատարանի քննությանը հանձնելու համար հիմք հանդիսացող հանգամանքների գնահատումը և գործը այլ դատարանի քննությանը հանձնելը դատարանի պարտականությունն են: Միևնույն ժամանակ գտնում ենք, որ անհրաժեշտ է գործը այլ դատարանի քննությանը հանձնելու միջնորդությամբ հանդես գալու իրավունք օրենսդրորեն վերապահել նաև կողմերին:

Բացի այդ, ՀՀ ՔՂՕ 86-րդ հոդվածի 2-րդ մասը ուղղակիորեն չի սահմանում, թե սույն նորմը կիրառելի է միայն տարածքային, թե նաև առարկայական ընդդատության կանոնների խախտման պարագայում:

Գտնում ենք, որ գործի հանձնումը մի դատարանից մեկ այլ դատարանի քննության կանոնը վերաբերում է միայն տարածքային ընդդատության կանոնների խախտմանը: Նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ ՀՀ ՔՂՕ 86-րդ հոդվածը ներառված է ՀՀ ՔՂՕ 12-րդ գլխում, որի վերտառությունն է «Տարածքային ընդդատություն»:

Սակայն միայն այս հանգամանքի առկայությունը բավարար չէ նման եզրահանգման համար, քանի որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի<sup>1</sup> 86-րդ հոդվածի 3-րդ մասերի համաձայն. «Իրավական ակտի կամ իրավական ակտի բաժնի, գլխի կամ հոդվածի վերնագիրը չի կարող օգտագործվել իրավական ակտի կամ համապատասխանաբար նրա բաժնի, գլխի կամ հոդվածի մեկնաբանման համար»:

Հետևաբար, ՀՀ գործող իրավակարգավորման պայմաններում բաց է մնում այն հարցը, թե ՀՀ ՔՂՕ 86-րդ հոդվածը կիրառվում է միայն տարածքային ընդդատության կանոնների, թե նաև առարկայական ընդդատության կանոնների խախտման պարագայում:

Եթե ընդունենք, որ ՀՀ ՔՂՕ 86-րդ հոդվածի նորմերը կիրառվում են միայն տարածքային ընդդատության կանոնների խախտման պարագայում, ապա առաջանում է հարց. ինչպե՞ս պետք է ղեկավարվել այն դեպքերում, երբ խախտվել են առարկայական ընդդատության կանոնները:

Իրավական կարգավորման այս տարակարծությունը իր լուծումը չի ստացել նաև դատական պրակտիկայում: Ավելին, դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ նշված նորմը կիրառվում է իրար հակասող մեկնաբանություններով: Դատարանները շատ հաճախ առարկայական ընդդատության կանոնների խախտման պարագայում կարճում են քաղաքացիական գործի վարույթը՝ վեճը դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմնավորմամբ, իսկ որոշ դեպքերում՝ գործը հանձնում այլ դատարանի քննությանը:

Այսպես, մի շարք գործերով դատարանները ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունած գործը հանձնում են մեկ այլ դատարանի քննությանը այն հիմնավորմամբ, որ գործը ընդհանուր իրավասության դատարանի քննությանը ենթակա չէ: Օրինակ, թիվ ԵԿԴ/0187/02/14 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության

<sup>1</sup> Ընդունվել է 03.04.2002թ., ուժի մեջ է մտել 31.05.2002թ.: Տե՛ս ՀՀՊՏ N 49(224), ՀՕ-320:

դատարանը քաղաքացիական գործն ուղարկվել է վարչական դատարան այն հիմնավորմամբ, որ գործը ընդդատյա է վարչական դատարանին:

Մեկ այլ գործով հայցվորը հայց էր հարուցել Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ աշխատանքում վերականգնվելու և հարկադիր պարապուրդի համար վճարում կատարելու պահանջների մասին: Դատարանը, դատաքննության փուլում պարզելով, որ հայցվորը համայնքային ծառայող է, և հիմնվելով ՀՀ ՎԴՕ 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի վրա՝ եկել է այն եզրակացության, որ հայցվորը, հանդիսանալով համայնքային ծառայող, իր իրավունքների դատական պաշտպանության համար պետք է դիմեր վարչական դատարան, և ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի քննության ենթակա չլինելու հիմնավորմամբ՝ գործի վարույթը համարել է կարճման ենթակա<sup>1</sup>: Վճռի դեմ հայցվորը ներկայացրել էր վերաքննիչ բողոք, որի արդյունքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն ընդհանուր իրավասության դատարանի քաղաքացիական գործի վարույթը կարճելու դիրքորոշումը իրավաչափ չի համարել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ պարագայում հայցվորը զրկվում է դատական պաշտպանության օրենսդրորեն սահմանված հնարավորությունից<sup>2</sup>: Ավելին, վերաքննիչ քաղաքացիական դատարանը վերաքննիչ բողոքը մասնակի բավարարել է, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 20.06.2012 թվականի վճիռը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան նոր քննության:

Փաստորեն, կարող ենք արձանագրել, որ միևնույն գործով առնվազն երկու դատական ատյան միևնույն նորմը կիրառել է իրար հակասող մեկնաբանությամբ: Ավելին, վերաքննիչ քաղաքացիական դատարանը նշված որոշմամբ գործը անմիջապես ուղարկել է ՀՀ վարչական դատարանի քննությանը, չնայած այն հանգամանքին, որ վերջինս նման լիազորությամբ օժտված չէ:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ առարկայական ընդդատության կանոնների խախտման դեպքում դատարանները շատ հաճախ կարճում են քաղաքացիական գործի վարույթը<sup>3</sup>: Թիվ ԵԿԴ/3246/02/13 քաղաքացիական գործով, 18.02.2014թ. կայացրած վճռով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը կարճել է քաղաքացիական գործի վարույթը այն հիմնավորմամբ, որ վեճի առարկա իրավահարաբերությունները իրենց բնույթով հանրային իրավահարաբերություններ են, և հայցվորը պետք է դիմեր վարչական դատարան:

Փաստորեն, ՔԴՕ 86-րդ հոդվածի 2-րդ մասի թերի կարգավորումը հանգեցնում է իրար հակասող դատական ակտերի կայացմանը, երբ դատարանները միևնույն նորմը կիրառում են իրար հակասող մեկնաբանություններով: Նշվածը առաջ է բերում իրավական խնդիր. ինչպե՞ս դեկավարվել բոլոր այն դեպքերում, երբ հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո պարզվում է, որ գործը ընդհանուր իրավասության

<sup>1</sup> Տե՛ս Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԿԴ/0745/02/11 քաղաքացիական գործով 20.06.2012թ. վճիռը:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.08.2012 թվականի թիվ ԵԿԴ/0745/02/11 քաղաքացիական գործով որոշումը:

<sup>3</sup> Այսպես, օրինակ, թիվ ԵԿԴ/0999/02/14 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը կարճել է քաղաքացիական գործի վարույթը՝ վեճը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով: Տե՛ս նշված գործով կայացված 16.10.2014թ. վճիռը:

դատարանին ընդդատյա չէ:

Գործող իրավակարգավորման պայմաններում ստացվում է, որ դատարանները ունեն այլընտրանք. կարծում են քաղաքացիական գործի վարույթը կամ գործը հանձնում են այլ դատարանի քննության:

Կարծում ենք, որ օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ այս խնդիրը ենթակա է լուծման: Մասնավորապես, անհրաժեշտ է ՀՀ ՔՂՕ 86-րդ հոդվածում սահմանել, որ այն կիրառելի է միայն տարածքային ընդդատության կանոնների խախտման պարագայում:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ ՀՀ ՔՂՕ 86-րդ հոդվածի 2-րդ մասը պետք է լրամշակել՝ այն սահմանելով հետևյալ կերպ. *«Ղատարանը սեփական նախաձեռնությամբ կամ կողմերի միջնորդությամբ տարածքային ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունած գործը պետք է հանձնի այլ դատարանի քննության՝*

*1. եթե գործը տվյալ դատարանում քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ»:*

Ինչ վերաբերում է առարկայական ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքներին, ապա գտնում ենք, որ դատական պրակտիկայում լայնորեն կիրառվող գործի վարույթի կարճումը այս պարագայում լավագույն լուծում համարվել չի կարող:

Նախ և առաջ, հազվադեպ չեն այն իրավիճակները, երբ ընդհանուր իրավասության դատարանն առարկայական ընդդատության կանոնների խախտմամբ ներկայացված հայցադիմումները վարույթ ընդունելուց հետո ՔՂՕ 109-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով կարճում է գործի վարույթը՝ նկատի ունենալով, որ վեճը ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա չէ: Եթե հաշվի առնենք, որ ՎՂՕ 80-րդ հոդվածի և 96-րդ հոդվածի դրույթներն անթույլատրելի են համարում վարչական գործով վարույթը, եթե առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, ակնհայտ է դառնում, որ ՔՂՕ նախատեսված իրավակարգավորումները թերի են:

Բացի այդ, բազմաթիվ են այն իրավիճակները, երբ ընդդատության հիմքով ընդհանուր իրավասության դատարանի քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին որոշումը դառնում է բողոքարկման առարկա, ինչի հետևանքով դատական պրոցեսը ձգձգվում է՝ քաղաքացիական գործի ընդդատության շուրջ կողմերի միջև առաջացած վեճը լուծելու նպատակով:

Ի տարբերություն ՀՀ ՔՂՕ-ով նախատեսված խնդրահարույց իրավակարգավորմանը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը<sup>1</sup> այս հարցում նախատեսում է վերահասցեագրման ինստիտուտը:

Վերահասցեագրման ինստիտուտը հնարավորություն է տալիս վարչական դատարանին պատճառաբանված որոշմամբ իրեն ոչ ընդդատյա գործը հանձնել մեկ այլ դատարանի քննությանը: Կարծում ենք՝ վերահասցեագրման ինստիտուտը առարկայական ընդդատության կանոնների խախտման պարագայում ավելի նպատակահարմար և արդյունավետ կարող է լինել, քան գործի վարույթի կարճումը:

Բացի այդ, դատական պրակտիկայում նշված ինստիտուտը բավականին հաջող

<sup>1</sup> Ընդունվել է 05.12.2013թ., ուժի մեջ է մտել 01.01.2014թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1: Այսուհետ՝ նաև ՀՀ ՎՂՕ:



է գործում: Դրա օրինակ կարող են ծառայել ՀՀ վարչական դատարանի՝ գործը վերահասցեագրելու մասին մի շարք պատճառաբանված որոշումները<sup>1</sup>:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով հստակ կարգավորում տալ այն հարցին, թե գործի քննության փուլում որո՞նք են առարկայական ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքները:

Կարծում ենք, որ նպատակահարմար կլիներ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ևս սահմանել վերահասցեագրման ինստիտուտը՝ դրանով իսկ համապատասխանեցնելով ՀՀ ՎԴՕ և ՀՀ ՔԴՕ սահմանված իրավակարգավորումները:

Այսպես, առաջարկում ենք ՀՀ ՔԴՕ-ում ավելացնել նոր հոդված՝ այն ձևակերպելով հետևյալ կերպ.

«1. Դատարանը, մինչև դատաքննության ավարտը կողմերի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության:

2. Պահանջն ըստ ընդդատության վերահասցեագրելու վերաբերյալ որոշումը դատարանը կայացնում է պահանջն իրեն ընդդատյա չլինելու վերաբերյալ հանգամանքը պարզելուց հետո՝ եռօրյա ժամկետում՝ այն ուղարկելով դատավարության մասնակիցներին»:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերի տեղափոխման վերջին կանոնը ընդհանուր է. այն ներառում է բոլոր այնպիսի դեպքերը, երբ տվյալ դատարանում գործը քննելը անհնարին է: Ըստ էության խոսքը այն դեպքերի մասին է, երբ, օրինակ, բնական աղետների պատճառով տվյալ վայրի դատարանն ի վիճակի չէ քննելու գործը: Սույն կանոնը նախատեսված է արտակարգ դեպքերի համար, և այդ պատճառով էլ այն ունի սահմանափակ կիրառություն:

Պետք է նշել, որ 1964 թ. ՔԴՕ-ն գործը տվյալ դատարանում քննելու անհնարինության «այլ դեպքեր»-ը չէր նախատեսում, սակայն պարունակում էր գործը մեկ ուրիշ դատարանին հանձնելու ևս երկու դեպքեր՝ 1) եթե դատարանը գտնում է, որ տվյալ գործը ավելի արագ և ճիշտ կքննվի մեկ ուրիշ դատարանում, մասնավորապես՝ ապացույցների մեծամասնության գտնվելու վայրի դատարանում, 2) եթե պատասխանողը, որի բնակության վայրը հայտնի չի եղել առաջ, միջնորդություն հարուցի գործն իր բնակության վայրի դատարանին հանձնելու մասին: Այս նորմերն ուղղված էին գործերի քննության առավել բարենպաստ պայմաններ ստեղծելուն և հայցվորի կողմից այլընտրանքային ընդդատության կանոնի չարաշահումը կանխելուն: Գտնում ենք, որ նշված կանոններից առաջինը հաջողությամբ կարող է գործել դատական հանձնարարության ինստիտուտի շրջանակներում, ուստի կարիք չկա այն նախատեսելու որպես գործը մի դատարանից մեկ այլ դատարան հանձնելու առանձին հիմք: Ինչ վերաբերում է երկրորդ կանոնին, ապա վերջինս բխում է ընդդատության ինստիտուտի ընդհանուր կանոնի տրամաբանությունից: Ուստի համակարծիք ենք պրոֆ. Ռ. Գ. Պետրոսյանի այն մտքի հետ, որ այն անհրաժեշտ է վերականգնել:

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/1525/05/14 վարչական գործով 03.04.2014թ., թիվ ՎԴ/6236/05/14 վարչական գործով 01.09.2015թ. «Հայցադիմումը վերահասցեագրելու մասին» որոշումները:

Բացի այդ, ՔՂՕ-ում 2007 թվականին կատարված փոփոխություններից հետո գործը այլ դատարանի քննությանը հանձնելու ևս մեկ հիմք օրենսգրքից հանվել է այն է, երբ դատավորների ինքնաբացարկը կամ նրանց դեմ հայտնված բացարկը բավարարելուց հետո նրանց փոխարինումը տվյալ դատարանում դառնում է անհնարին: Պրոֆ. Ռ. Գ. Պետրոսյանի կարծիքով, օրենսդրորեն պատշաճ ձևակերպված և դատական պրակտիկայով ստուգված այս կանոնները գործող ՔՂՕ-ում վերարտադրելու փոխարեն դրա մեջ մտցվել է «անհնարինության այլ դեպքեր» անորոշ հիմքը, որը, անհասկանալի լինելուց և տարակարծություններ առաջացնելուց բացի, դարձյալ կարող է չարաշահվել դատարանների կողմից: Պրոֆ. Ռ. Գ. Պետրոսյանի կարծիքով, նշված երկու դեպքերն անհրաժեշտ է վերականգնել օրենսգրքում, իհարկե նոր իրավական մտածողությանը համապատասխան: Այն է՝ դրանցից առաջինում ավելացնելով «եթե կողմերը համաձայն են դատարանի որոշման հետ» կապակցությունը: Հնարավոր չարաշահումները կանխելու նպատակով ՔՂՕ 86-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը պետք է շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Գործը տվյալ դատարանում քննելու անհնարինության մասին օրենքով նախատեսված այլ դեպքերում»<sup>1</sup>:

Գտնում ենք, որ գործը տվյալ դատարանում քննելու անհնարինությունը պետք է հիմնավորված լինի օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի պատճառներով: Օբյեկտիվ բնույթի պատճառների թվին կարող ենք դասել հետևյալները. այդ վայրի դատարանը ինչ-ինչ պատճառներով չի գործում, դատավորին հայտնվել է ինքնաբացարկ, տվյալ դատարան հայց է հարուցվել այդ դատարանի դատավորի կողմից<sup>2</sup>: Որպես սուբյեկտիվ բնույթի հանգամանք կարող է ծառայել այն դեպքը, երբ դատավորի ինքնաբացարկը կամ նրա դեմ հայտնված բացարկը բավարարելուց հետո նրա փոխարինումը տվյալ դատարանում դառնում է անհնարին, քանի որ մի դատավորը գտնվում է ստացիոնար բուժման մեջ, մյուսը՝ արձակուրդում, երրորդը՝ գործուղման մեջ և այլն<sup>3</sup>:

Ինչ վերաբերում է պրոֆ. Ռ. Գ. Պետրոսյանի տեսակետին, ապա գտնում ենք, որ գործը տվյալ դատարանում քննելու անհնարինության բոլոր դեպքերը ՀՀ ՔՂՕ-ում սահմանել հնարավոր չէ: Ավելին, գտնում ենք, որ գործը տվյալ դատարանում քննելու անհնարինությունը կարող է հիմնավորվել կոնկրետ գործի քննության ընթացքում, որի պատճառները կարող են տարբեր լինել: Իսկ հնարավոր չարաշահումները կանխելու նպատակով պետք է սահմանել, որ դատարանը գործը տվյալ դատարանում քննելու անհնարինությունը պետք է հիմնավորի առանձին կայացվող որոշման մեջ՝ նշելով բոլոր այն պատճառները, որոնք հանգեցրել են գործը տվյալ դատարանում քննելու անհնարինության:

ՀՀ ՔՂՕ չի տալիս նաև այն հարցի պատասխանը, թե հնարավոր է արդյոք բացառիկ ընդդատության կանոններով վարույթ ընդունված գործը հանձնել այլ դատարանի քննությանը: ՀՀ ՔՂՕ 84-րդ հոդվածը սահմանում է, որ սույն հոդվածով սահմանված ընդդատությունը չի կարող փոխվել կողմերի համաձայնությամբ: Իսկ ՀՀ Բ-

<sup>1</sup> Տե՛ս Պետրոսյան Ռ. Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Երրորդ հրատ., Երևանի համալս. հրատ., Եր., 2007, էջեր 275-276:

<sup>2</sup> Տե՛ս Եрохина Т. П., Некоторые проблемы подсудности в гражданском судопроизводстве: Дисс. канд. юрид. наук: Саратов, 2003, էջեր 97-98:

<sup>3</sup> Տե՛ս Գ. Լ. Осокина, Курс гражданского судопроизводства России. Общая часть: Учебное пособие.-Изд-во Том. Ун-та, 2002, էջ 403:

ԴՕ 84-րդ հոդվածով նախատեսվում է պայմանագրային ընդդատությունը, որի դեպքում կողմերի գրավոր համաձայնությամբ կարող է փոխվել միայն ընդհանուր տարածքային և այլընտրանքային ընդդատությունը: Հետևաբար, բացառվում է «բացառիկ ընդդատության» ենթակա հայցերի հարուցումը և քննությունը ՀՀ ՔԴՕ 82-րդ և 83-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոններով: Ուստի գտնում ենք, որ բացառիկ ընդդատության կանոններով վարույթ ընդունված գործը այլ դատարանի քննությանը հանձնվել չի կարող:

ՔԴՕ 86-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ գործը այլ դատարանի քննությանը հանձնելու մասին կայացվում է որոշում:

Վկայակոչված հոդվածը ևս զերծ չէ թերություններից: Այսպես, հոդվածից պարզ չէ՝ նշված որոշումը կայացվում է առանձին ակտի ձևով, թե արձանագրային որոշմամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործող իրավակարգավորման պայմաններում գործը այլ դատարան հանձնելու ինստիտուտը կիրառվում է նաև առարկայական ընդդատության կանոնների խախտման պարագայում, գտնում ենք, որ նշված որոշումը պետք է կայացվի առանձին ակտի ձևով:

Գործը մի դատարանից մեկ այլ դատարան հանձնելիս ընդդատության հարցի շուրջ կարող են առաջանալ վեճեր, որոնք կարելի է բաժանել երկու խմբի՝ առաջին՝ դատարանի (դատավորի) և շահագրգիռ անձանց միջև առաջացող վեճեր, երկրորդ՝ դատարանների և դատավորների միջև առաջացող վեճեր<sup>1</sup>: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը չի թույլատրում նշված վեճերից և ոչ մեկը:

Այսպես, ՀՀ ՔԴՕ սահմանում է, որ գործը տվյալ դատարանին ընդդատյա չլինելու հիմքով հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վերաքննության կարգով՝ հայցվորի կողմից այն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում (ՔԴՕ 92 հոդվ. 4-րդ մաս): Բայց դա վերաբերում է հայցադիմումի ընդունման պրոցեսին: Իսկ երբ իր վարույթ ընդունած գործը դատարանն ուղարկում է մեկ այլ դատարան, ապա նման որոշումը բողոքարկվել չի կարող, որովհետև դատական քաջքուկը կանխելու և գործերի ժամանակին քննությունն ապահովելու նպատակով դատարաններին արգելվում է վեճ ծավալել (նաև՝ բողոքարկել) ընդդատության հարցերի շուրջ: Այս կապակցությամբ ՔԴՕ 86-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Մեկ դատարանից մեկ այլ դատարան ուղարկված գործը պետք է քննի այն ստացած դատարանը»: Դրույթի իմաստը այն է, որ քաղաքացիական գործի քննությունը անվերջ չձգձգվի՝ մեկ դատարանից մեկ այլ դատարան տեղափոխելու պատճառով: Ուստի սկզբնական դատարանը պետք է հնարավորինս հստակ և ճիշտ որոշի պատշաճ ատյանը:

Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր որոշումներից մեկում ամրագրել է այն սկզբունքը, որ եթե պետությունում գոյություն ունի երկու դատական ատյան, և նրանցից մեկը հրաժարվել է քննել վեճը այն հիմնավորմամբ, որ այն իրեն ընդդատյա չէ, ապա երկրորդ դատական ատյանը պարտավոր է գործը ընդունել վարույթ առանց վեճն իրեն ընդդատյա լինելու վերաբերյալ հարցի քննարկման<sup>2</sup>:

Ընդդատության կանոնների խախտման վերաբերյալ պարզաբանման ենթակա հաջորդ հարցը վերաբերում է նրան, թե ընդդատության կանոնների խախտմամբ

<sup>1</sup> St' u Г.Л. Осокина, Гражданский процесс. Общая часть. М., 2003, էջ 442:

<sup>2</sup> St' u Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Ավակովան ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» 22.06.2006 թվականի որոշումը:

կայացված ըստ էության ճիշտ դատական ակտը ենթակա է բեկանման, թե ոչ:

«Հ ԲԴՕ-ն այս հարցին պատասխան չէր տալիս, սակայն վերջերս տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում ընդդատության կանոնների խախտումը մտցվել է դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի մեջ:

Այսպես, ՀՀ ԲԴՕ 220.4 հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն. «Դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե գործը քննվել է ընդդատության կանոնների խախտմամբ»: Նշված հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ ընդդատության կանոնների խախտումը համարվում է դատական ակտի անվերապահ բեկանման հիմք, և օրենսդիրը տարբերակում չի դնում տարածքային ընդդատության կանոնների խախտման և առարկայական ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքների միջև:

Կարծում ենք, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով պետք է տարբերակում մտցվի ենթակայության (գործող իրավակարգավորման համաձայն՝ առարկայական ընդդատության) և ընդդատության կանոնների խախտմամբ քննված գործերի բեկանման հարցում:

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանը 15.01.2009 թվականի թիվ 144-Օ-ՈՒ եզրակացության մեջ արտահայտել է այն դիրքորոշումը, որ ընդդատության կանոնների խախտումը հանդիսանում է դատական ակտի անվերապահ բեկանման հիմք, ինչպես որ բոլոր այն դեպքերը, երբ դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով:

Շատ իրավագետների կարծիքով, դատական ակտի բեկանման հիմք պետք է հանդիսանա ոչ թե ընդդատության կանոնների ցանկացած խախտում, այլ միայն բացառիկ ընդդատության կանոնների խախտումը: Այսպես, նշված տեսակետը արտահայտողների կարծիքով, բացառիկ ընդդատության կանոնների խախտմամբ քննված գործը այլ դատարանի կողմից պետք է զնահատել որպես դատարանի ոչ օրինական կազմով գործի քննություն՝ դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով: Տարածքային ընդդատության մնացած բոլոր կանոնների խախտումները դասվում են դատական ակտի բեկանման պայմանական հիմքերի թվին, քանի որ դատարանի ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել զուտ ձևական նկատառումներով<sup>1</sup>:

ՌԴ ֆեդերալ արբիտրաժային դատարանը 23.04.2007թ. թիվ 14307/06 որոշմամբ եկել է այն եզրակացությանը, որ բացառիկ ընդդատության կանոնների խախտումը հանդիսանում է դատական ակտի ինքնուրույն բեկանման հիմք: ՌԴ արբիտրաժային դատարանը 07.10.2008թ. որոշմամբ արտահայտել է այն դիրքորոշումը, որ միայն բացառիկ ընդդատության կանոնների խախտումը կարող է հանգեցնել դատական ակտի բեկանման: Ընդդատության այլ կանոնների խախտումները դատական ակտի բեկանման հիմք չեն կարող հանդիսանալ:

Կարծում ենք, որ ընդդատության, այդ թվում և բացառիկ ընդդատության կանոնների խախտումը ինքնին չի կարող դատական ակտի բեկանման հիմք հանդիսանալ, քանի որ վեճը կողմերի միջև լուծվել է նույն իրավասությամբ օժտված դատարանի կողմից: Դատական ակտի բեկանումը միմիայն ընդդատության կանոնների խախտման հիմքով փաստացի հանգեցնում է դատական պրոցեսի կրկնությանը:

<sup>1</sup> St' u Г. Л. Осокина, Курс гражданского судопроизводства России. Общая часть: Учебное пособие.-Изд-во Том. ун-та, 2002, էջեր 407-408:

Գտնում ենք՝ ընդդատության կանոնների խախտմամբ քննված քաղաքացիական գործով կայացված դատական ակտի բեկանման համար անհրաժեշտ է հետևյալ երեք պայմանների միաժամանակյա առկայությունը. առաջին՝ եթե թույլ տրված խախտումը էական է: Երկրորդ՝ այն ազդել է գործի ելքի վրա: Երրորդ՝ **առանց թույլ տրված խախտման վերացման հնարավոր չէ իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը:**

Ընդդատության կանոնների խախտման պարագայում դատական ակտի բեկանումը պետք է պայմանավորել այդպիսի խախտումներ առաջացրած հետևանքներով: Եթե վերը նշված հետևանքները առկա են, ապա դա պետք է հանգեցնի դատական ակտի բեկանման:

Կարծում ենք, որ վերաքննիչ դատարանում ընդդատության կանոնների խախտման հանգամանքը պարզելը գործի քննությունը ու ըստ էության վճռի կայացմանը չի կարող խոչընդոտել, որովհետև նա այսպես թե այնպես պարտավոր է վերաքննել այն<sup>1</sup>: Եթե գործի ընդդատության կանոնների խախտումը գործի սխալ լուծման չի հանգեցրել, ապա վճռաբեկ դատարանում այդ խախտումը պարզելու դեպքում նույնպես վճիռը բեկանելու հիմք չի կարող դառնալ, որովհետև դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը սուսկ ձևական նկատառումներով բեկանվել չի կարող (ՔՂՕ 228 հոդվ. 1-ին մաս): Այս նորմը առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների վճիռների և որոշումների կայունությունն ապահովող լրացուցիչ երաշխիք է:

Ինչ վերաբերում է ենթակայության կանոնների խախտմամբ քաղաքացիական գործի քննության և լուծման իրավական հետևանքներին, ապա գտնում ենք, որ այս դեպքում դատական ակտը անվերապահորեն պետք է բեկանվի, քանի որ գործը քննվում է ոչ թե նույն իրավասություններով օժտված դատարանի կողմից, այլ այն դատարանի կողմից, որի իրավասությունները բոլորովին այլ են: Այլ են նաև այդ դատարաններին ընդդատյա գործերի շրջանակները, տվյալ գործերի քննության կարգը, ապացուցման պարտականության բաշխումը կողմերի միջև և այլն: Հետևաբար, գտնում ենք, որ ենթակայության կանոնների խախտման պարագայում գործ ունենք այն դեպքի հետ, երբ գործը քննվել է դատարանի ոչ օրինական կազմով, որը արդեն դատական ակտի անվերապահ բեկանման հիմք պետք է հանդիսանա:

Վերոշարադրյալի հիման վրա գտնում ենք, որ ՀՀ ՔՂՕ 220.4 հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը պետք է վերաշարադրել՝ այն ձևակերպելով հետևյալ կերպ. **«Դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե գործը քննվել է ենթակայության կանոնների խախտմամբ»:**

<sup>1</sup> Տե՛ս Պետրոսյան Ռ. Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Երրորդ հրատ., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 266:

## ЮРИДИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ РАССМОТРЕНИЯ И РАЗРЕШЕНИЯ ГРАЖДАНСКОГО ДЕЛА С НАРУШЕНИЕМ ПРАВИЛ ПОДСУДНОСТИ

**Ани Микаелян**

*Аспирант кафедры гражданского процесса ЕГУ*

В данной статье рассматриваются вопросы о юридических последствиях рассмотрения и разрешения гражданского дела с нарушением правил подсудности. В статье автор пытается выделить правовые последствия предметной подсудности и территориальной подсудности. В статье прежде всего предметом обсуждения становятся институты прекращения производство по делу в случаях нарушения правил подсудности и передачи дела из одного суда в другой. В статье также затрагивается вопрос о возможности отмены судебного решения в случаях нарушения правил подсудности.

## LEGAL CONSEQUENCES OF CONSIDERATION AND RESOLUTION OF THE CIVIL CASES WITH VIOLATION OF THE RULES OF JURISDICTION

**Ani Mikayelyan**

*Post-graduate student of the YSU Chair of Civil Procedure*

The article is devoted to the issues related to the legal consequences of consideration and resolution of civil cases with violation of the rules of jurisdiction. The author has made an attempt to distinguish the consequences of violation of the rules of objective jurisdiction and territorial jurisdiction. First of all the article discusses the institutes of the rules of jurisdiction in civil proceedings in case of violation dismissing and transferring the case from one court to another. The article also touches upon the question of the possibility of appeal of the judgment in case of violation of rules of jurisdiction.

**Բանալի բառեր** - ընդդատության կանոնների խախտում, ընդդատություն, ենթակայություն, առարկայական ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքներ, տարածքային ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքներ, գործի հանձնումը մեկ դատարանից մեկ այլ դատարան:

**Ключевые слова** - нарушение правил подсудности, подсудность, подведомственность, правовые последствия нарушения правил предметной подсудности, правовые последствия нарушения правил территориальной подсудности, передача дела из одного суда в другой.

**Key words** - violation of the rules of jurisdiction, jurisdiction, jurisdiction, the legal consequences of violating the rules of objective jurisdiction, the legal consequences of violation of territorial jurisdiction, to transfer the case from one court to another.

## Կլոր սեղան

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի և Ֆրանսիայի Մոնպելյեի համալսարանի սահմանադրական իրավունքի բաժանմունքի դասախոսների մասնակցությամբ՝  
«Սահմանադրական փոփոխությունների իրավաքաղաքական նախադրյալները» թեմայով

2016 թ. մայիսի 15-ին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնում «Սահմանադրական փոփոխությունների իրավաքաղաքական նախադրյալները» թեմայով կազմակերպված կլոր սեղանին մասնակցում էին Ֆրանսիայի Մոնպելյեի համալսարանի սահմանադրական իրավունքի բաժանմունքի վարիչ Կարոլի Գուզմանը, նույն համալսարանի դասախոս Աննա Մաթևոսյանը և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոսներն ու ասպիրանտները: Թեմայի ընտրությունը պայմանավորված է եղել սահմանադրական փոփոխությունների հաճախականության տեսանկյունից Հայաստանի և Ֆրանսիայի իրավական համակարգերի որոշակի ընդհանրությամբ և 2015 թ. դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած Սահմանադրության այն նորամուծություններով, որոնք սահմանադրական փոփոխություններ իրականացնելու որոշակի իրավասություն են վերապահել Ազգային ժողովին և ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներին: Քննարկումը սկսվել է հյուրերի կարճ ելույթներով, որոնց առնչությամբ արձագանքները ներկայացնում ենք ստորև:

**Կարոլի Գուզման** – Ֆրանսիայի իրավական համակարգին բնորոշ է սահմանադրական փոփոխությունների անհամեմատ մեծ հաճախականությունը: Մասնավորապես՝ երկրում միայն 1958 թ. Սահմանադրությունում 24 անգամ կատարվել են փոփոխություններ, որոնք եղել են ինչպես մասնակի, այնպես էլ ծավալուն, օրինակ՝ 2008 թ. վերջին փոփոխությունն առնչվել է 30 հոդվածի: Ընդհանուր առմամբ Ֆրանսիայի Սահմանադրությունը համարվում է «կոշտ», սակայն սահմանադրական փոփոխությունների դիմելու ձգտումն այնքան մեծ է, որ գործնականում այն ավելի հաճախ է ենթարկվում փոփոխությունների, քան մի շարք այնպիսի երկրների սահմանադրություններ, որոնց ընդունված է անվանել «ձկուն» սահմանադրություններ:

Բնորոշ է այն, որ սահմանադրական փոփոխություններ նախաձեռնելիս անվերապահորեն հավաստվում է, որ խոսքն այնպիսի նորամուծությունների մասին է, որոնք անհրաժեշտ են ոչ միայն տվյալ իրավիճակից ելնելով, այլև համահունչ են հետագա բնականոն զարգացումների պահանջներին, և տևական ժամանակով գործնականում որևէ նախադրյալ չի ծագի դրանք վերանայելու համար, սակայն անցնում է մի կարճ ժամանակ, և անգամ դրա հեղինակներն են խոսում արդեն իսկ ամրագրված սահմանադրական նորմերի ոչ այնքան արդյունավետության մասին:

Ինչպես գիտեք, Ֆրանսիայում Սահմանադրությունը փոփոխելու հիմնականում երկու եղանակ է գործում՝ հանրաքվե և Սահմանադրական կոնգրես: Սակայն այդ եղանակներից առավել լայն տարածում ունի Սահմանադրական կոնգրեսը: Այսպես, 1958 թ. Սահմանադրության ընդունումից հետո Ֆրանսիայում անցկացվել է 8 հանրաքվե, որոնցից ընդամենը մեկն է վերաբերել սահմանադրական փոփոխություններին: Ընդ որում, Սահմանադրական կոնգրեսը հաճախ իրականացնում է բավականին լուրջ իրավական նշանակություն ունեցող փոփոխություններ:

Իմ և Ֆրանսիացի իրավագետների մեծամասնության կարծիքն այն է, որ Սահմանադրությունը չի կարող ենթարկվել հաճախակի փոփոխությունների անգամ այն դեպքում, երբ առաջարկվող փոփոխությունները հետապնդում են առաջադեմ գա-

ղափարներ և վայելում են հանրության աջակցությունը: Խնդիրն այն է, որ պետության Հիմնական օրենքի ցանկացած դրույթի մասին լիարժեք պատկերացում կարելի է ունենալ միայն այն դեպքում, երբ այն անցնում է որոշակի տևական փորձաշրջան, ընդ որում, հարկ է լինում համարժեք հետազոտել նաև այն օրենսդրության կիրառման արդյունքները, որոնք թելադրված են լինում նույն սահմանադրական փոփոխություններով:

Իմ հանգամանք, սահմանադրական փոփոխությունները քաղաքական ուժերը հաճախ օգտագործում են որպես իրենց քաղաքական վարկանիշը բարձրացնելու միջոց, ինչն ինքնին մտահոգող չէ, սակայն անընդունելի է, երբ, բացի քաղաքական նկատառումներից, բավարար չափով հաշվի չեն առնվում իրավաստեղծ գործունեության անհրաժեշտ նախադրյալներն ու սկզբունքային նշանակություն ունեցող ընթացակարգային կանոնները: Այդպիսին էր, թերևս, 2015 թ. նոյեմբերի 13-ին Փարզում հերթական ահաբեկչության առնչությամբ հապճեպ կարգով սահմանադրական փոփոխություններ կատարելու Ֆրանսիայի Նախագահ Օլանդի նախաձեռնությունը: Ի դեպ, այդ նախաձեռնությունը ձախողվեց, ինչը ևս լուրջ հետազոտության ու դասեր քաղելու նյութ է:

**Սամվել Մուրադյան** – Սահմանադրական փոփոխությունների ոչ միայն որակի, այլև հանրային աջակցության տեսանկյունից էական նշանակություն ունի նաև այն, թե կոնկրետ ով է նախաձեռնել սահմանադրական փոփոխությունների գործընթացը, և այն ինչ իրավաքաղաքական նպատակներ է հետապնդում: Քաղաքական ուժերի նախաձեռնած սահմանադրական փոփոխությունները հաճախ չեն արտացոլում հանրային տրամադրությունները. դրանք մեծ մասամբ ուղղված են քաղաքական խնդիրների լուծմանը, մինչդեռ քաղաքացիական նախաձեռնությամբ իրականացվող հանրաքվեների դեպքում նախապատվությունը տրվում է մարդու իրավունքների և ազատությունների ամրագրման ու պաշտպանության առավել գործնական հարցադրումներին: Բացի այդ, իրեն չի կարող արդարացնել անհարկի լայն շրջանակներ ընդգրկող սահմանադրական փոփոխությունների նախաձեռնությունը. այս դեպքում ժողովուրդը, ըստ էության, զրկված է լինում նախագծերի վերաբերյալ լիարժեք պատկերացում կազմելու և իր ձայնը համարժեք արտահայտելու հնարավորությունից: Ֆրանսիայում ևս կան մեծածավալ փոփոխություններ իրականացնելու օրինակներ, ինչը նույնպես ողջունելի չէ: Սակայն իրավահամեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Ֆրանսիայի մեր կոլեգայի թվարկած 24 դեպքերի գերակշիռ մասը վերաբերում է սոսկ մասնակի փոփոխություններին, մինչդեռ մեր հայրենական պրակտիկայում առայժմ փոփոխությունները աչքի են ընկնում մեծ շրջանակներով: Կարելի է հուսալ, որ սահմանադրական փոփոխությունների նոր ընթացակարգերի պարագայում կիրառման մեջ կդրվեն արդեն մասնակի փոփոխություններ, որոնց շնորհիվ առավել ոլորին կլինի բացահայտել հանրային կարծիքը դրանց առնչությամբ:

Խնդիրն այն է, որ հասարակական կյանքում և միջազգային հարաբերություններում ևս տեղի են ունենում արժեքների արմատական վերանայման զարգացումներ, դրանք խիստ հարափոփոխ են, ուստի հիմնավորված չէ հնարավորինս արագ դրանց արձագանքելն ու օրենսդրությունը համապատասխանեցնել այդ զարգացումներին: Օրենսդրությունը կարող է ազդել այդ զարգացումների վրա, սակայն հասկանալի է, որ արագ արձագանքելու գործելաոճը միշտ չէ, որ հանգեցնում է դրական արդյունքների: Արդյունքում մենք փորձում ենք համապատասխանեցնել օրենսդրությունը մի իրավիճակի, որն արդեն որոշ ժամանակ անց արմատապես փոխվում է: Թերևս դա է պատճառը, որ սահմանադրական փոփոխությունների հեղինակները վստահ են, որ իրենց առաջարկությունները տևական ժամանակ փոփոխության նյութ չեն լինի, մինչդեռ համեմատաբար կարճ ժամանակ անց պատկերը փոխվում է, հետևաբար յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է հստակ կանխատե-



սել հասարակական կյանքի զարգացման առավել հնարավոր ուղղությունները, դրանք ուղղորդելու փաստացի հնարավորությունները և այլն:

**Նորայր Այվազյան** – Սահմանադրական փոփոխությունների նախադրյալների, նախաձեռնելու հիմքերի առնչությամբ տեսագործնական կտրվածքով արդեն իսկ բավարար հետազոտություններ կան, որոնց շրջանակներում մշակվել են կանխատեսելի չափանիշներ: Սակայն խնդիրը ոչ այնքան այդ չափանիշների շրջանակը պարզելն է, որքան դրանց առկայությունը և ձևավորման աստիճանը հստակեցնելը, դրանք համարժեք ընկալելը:

Մենք չենք կարող անտեսել այն, որ երբեմն անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկվում արդեն իսկ գործող սահմանադրական նորմերի իրագործման ուղղությամբ, սակայն եզրակացություն են անում դրանց անկատարության վերաբերյալ: Ընդհանրապես իրավական նորմերի գնահատականը կարող է հիմնավորված ու խելամիտ համարվել դրանց փաստացի կիրառման արդյունքների վերլուծության շնորհիվ:

Իհարկե, երբ խոսքն այնպիսի իրավական նորմերի մասին է, որոնք իրենց որակով ակնհայտ խնդրահարույց են, և հենց այդ գործոնն է բացառում դրանց փաստացի կիրառումը, հարկ է լինում արդեն այլ չափանիշներով դատողություններ անել և ելակետ ընդունել այն, որ խոցելի իրավական նորմի կիրառումը չի կարող ոչ մի պարագայում շահեկան լինել: Սակայն այս դեպքում ևս հարկ է լուրջ փաստարկներով հիմնավորել այս կամ այն իրավական նորմի խոցելիությունը, խնդրի մոտենալ նաև այն տեսանկյունից, թե ինչ նկատառումներով իրավահարաբերությունների բնականոն զարգացումը խոչընդոտող այդ նորմերը չեն վիճարկվել դատական կամ արտադատական կարգով, ինչո՞ւ դրանց ցածր որակի մասին հարցը բարձրացվում է միայն այն ժամանակ, երբ հընթացս դրվում է համալիր իրավական բարեփոխումների խնդիրը: Արդյունքում ստացվում է, որ այդ իրավական նորմերի ցածր որակին մենք անդրադառնում են միայն այն դեպքում, երբ հարկ է լինում հիմնավորել, օրինակ՝ սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը: Այդպիսի գործելառճը համարժեք չի ընկալվում հանրության կողմից, և պատահական չէ, որ սահմանադրական բարեփոխումների առնչությամբ հանրային քննարկումների շրջանակներում հաճախ էր հնչում այն հարցը, թե ինչու սահմանադրական այս կամ այն նորմի անկատարության մասին ժամանակին չեն բարձրաձայնել, ինչո՞ւ միջոցներ չեն ձեռնարկվել, որպեսզի օրենսդրական ակտերի հիմքում չդրվեն խնդրահարույց նորմեր և այլն:

Ընդհանրապես սահմանադրագիտության տեսանկյունից խոցելի են ինչպես հաճախակի իրականացվող փոփոխությունները, այնպես էլ այդ գործընթացի առնչությամբ «կոշտ» դիրքորոշումը: Բոլոր դեպքերում, Սահմանադրության իրական արժեքը վերջինիս խելամիտ կայունություն մեջ է: Միայն կայուն Սահմանադրության դեպքում են ձևավորվում հանրային հարգանք և վստահություն այդ երկրի Հիմնական օրենքի նկատմամբ, մինչդեռ հարափոփոխ օրենսդրությունը հանրության մոտ անխուսափելիորեն այն տպավորությունն է թողնում, որ իրավասու մարմինները չունեն հստակ որոշված նպատակներ և դրանք իրագործելու արդյունավետ եղանակների վերաբերյալ տեսլական: Այդ իրավիճակում իրենց վստահ չեն զգում նաև տնտեսավարողներն ու հատկապես ներդրողները, որովհետև նրանք ևս չեն կարող համոզված լինել, որ տվյալ պահին գործող իրավական համակարգը, որին այս կամ այն չափով իրենք վստահում են, չի ենթարկվի էական փոփոխությունների՝ անհարկի վնաս պատճառելով իրենց օրինական շահերին:

**Գևորգ Դանիելյան** - Սահմանադրական փոփոխությունների պարբերականությունը, կարծում են, պայմանավորված է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ բազմաթիվ գործոններով: Այս պահին նպատակահարմար են գտնում անդրադառնալ այդպիսի գործընթաց նախաձեռնելու առնչությամբ իրավական եղանակներին: Խնդիրը մեր երկրում ձեռք է բերել մեծ հրատապություն այն տեսանկյունից, որ 2015

թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում Սահմանադրության նորմերի մի զգալի հատված կարող է փոփոխության ենթարկվել արդեն Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Իմ կանխատեսումներն այնպիսին են, որ արդեն հաջորդ գումարման Ազգային ժողովը կնախաձեռնի սահմանադրական փոփոխությունների առաջին քայլերը: Այս եզրահանգման համար, թերևս, հիմք են հանդիսանում դեռևս սահմանադրական բարեփոխումների փուլում հանրային քննարկումների ընթացքում հնչած տարաբնույթ ընկալումներն ու մեկնաբանությունները: Ակնհայտ է, որ հանրության մի որոշ հատված կտրականապես համամիտ չէ սահմանադրական լուծումների հետ, այդ թվում այն նորմերի, որոնցում փոփոխություններ կատարելու իրավասությունը վերապահված է Ազգային ժողովին, և փորձելու է առաջիկայում քննարկման նյութ դարձնել իր տարբերակները:

Հավելենք, որ գործող Սահմանադրությունը սահմանադրական փոփոխություններ նախաձեռնելու իրավական ողջամիտ հնարավորություն է ընձեռել նաև քաղաքացիներին. մասնավորապես Սահմանադրության 202-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրություն ընդունելու և փոփոխելու նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող 200 հազար քաղաքացի և այլն: Մենք պետք է պատրաստ լինենք այդպիսի զարգացումների, ուստի Ֆրանսիայի փորձը կարող է խիստ օգտակար լինել հայրենական իրավական համակարգի բարելավման գործընթացում:

Մյուս կողմից, սահմանադրական փոփոխություններ նախաձեռնելու և իրականացնելու իրավական ընթացակարգերի ու մշակույթի բացակայությունը անխուսափելիորեն լուրջ խնդիրներ է առաջադրելու: Ցավում են, սակայն այս առնչությամբ ունեն ոչ այնքան հուսալի կանխատեսումներ. ամենայն հավանականությամբ նույն Ազգային ժողովը սահմանադրական փոփոխություններ է նախաձեռնելու ճիշտ այն ընթացակարգերով, որոնք բնորոշ են օրենսդրական փոփոխություններին, մինչդեռ դրանք էապես տարբերվող գործընթացներ են: Ընդ որում, այս կանխատեսման համար հիմք է հանդիսանում այն, որ Ազգային ժողովում դեռևս հիմնարար քայլեր չեն ձեռնարկվում այս ոլորտին առնչվող հասարակական հարաբերությունների համալիր կարգավորման ուղղությամբ, թերևս պատգամավորները կգործեն այն տարբերակով, որն արդեն իրենց ծանոթ է օրինաստեղծ գործունեության շրջանակներում՝ դրանից բխող բացասական հետևանքներով հանդերձ:

**Աննա Մաթևոսյան** – Եթե մենք փորձեն սահմանադրական փոփոխությունների հաճախականության և դրանց հիմքերի մասին դատողություններ անել՝ որևէ երկրի նույնանուն երևույթների առնչությամբ զուտ արտաքին տվյալների ու վիճակագրական ցուցանիշների հիմքով, ապա, կարծում են, չի հաջողվի խորքային բացահայտումներ անել: Իհարկե կան բազմաթիվ ընդհանրություններ, սակայն մեր խնդիրն է բացահայտել այդ ընդհանրությունները և դրանք սահմանազատել բոլոր այն առանձնահատկություններից, որոնք բնորոշ են այս կամ այն երկրին: Նույնը վերաբերում է նաև սահմանադրական փոփոխությունների հաճախականությանը: Միաժամանակ, համամիտ են այն մտտեցումների հետ, թե ովքեր են հանդես գալիս սահմանադրական փոփոխությունների նախաձեռնությամբ: Իմ համոզմամբ, քաղաքացիական նախաձեռնության կարգով սահմանադրական փոփոխությունների նախագծերն աչքի չեն ընկնում անհրաժեշտ որակով, դրանցում հաճախ համարժեք հաշվի չեն առնվում սոցիալ-քաղաքական զարգացումներն ու պետության իրական հնարավորությունները: Այդ իրավիճակում հանրային իշխանությունները պետք է ոչ թե կենտրոնանան այդ թերությունների վրա և փորձեն ձախողել գործընթացները, այլ աջակցել քաղաքացիական նախաձեռնության ուժերին և հասնել այն բանին, որ այդ նախագծերը ևս համապատասխանեն անհրաժեշտ որակական չափանիշներին:

**Կարողի Գուզման** – Սահմանադրական համեմատաբար հաճախակի փոփոխություններ նախաձեռնելը բնորոշ է Ֆրանսիային, որովհետև այս երկրում առավել մեծ են հարգանքը և վստահությունը Սահմանադրության և ընդհանրապես օրենքի նկատմամբ, մարդիկ ավելի շատ են հակված այն մտայնությանը, որ իրավական բարեփոխումների միջոցով հնարավոր կլինի առավել կատարյալ դարձնել իրավակարգը, լուծել գործնականում ծագող հիմնախնդիրները: Իմ խորին համոզմամբ, սոցիալական ակտիվությունը Ֆրանսիայում անհամեմատ ավելի բարձր է, քան եվրոպական մյուս երկրներում: Եթե հետևենք ֆրանսիացիների առօրյա խոսակցությանը, ապա կնկատենք, որ նրանք առավել հաճախ են հղում անում Սահմանադրությամբ կամ իրավունքի որևէ աղբյուրով իրենց վերապահված իրավունքներին ու ազատություններին, առավել հետևողական ու ակտիվ են դրանց երաշխավորման հարցերով հանրային իշխանության մարմիններին դիմելու տեսանկյունից:

**Գնել Մուղնեցյան** – Ընդհանուր առմամբ համամիտ եմ, որ սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը պայմանավորող գործոնների վերաբերյալ կան հարաբերականորեն միասնական չափանիշներ, թեպետ այս հարցում ևս տարածայնություններ կան: Մասնավորապես, այն հարցը, թե սահմանադրական բարեփոխումները պետք է կյանքի կոչվեն, երբ ակնհայտ է դարձել քաղաքական ձգնաժամը և այն սահմանադրական լուծումների միջոցով հաղթահարելու կարի՞քը, թե՞ առավել շահեկան է, երբ տեսական հարթությամբ գնահատվում է իրավիճակը, կանխատեսումներ են արվում, և ըստ այդմ էլ փորձ է արվում սահմանադրական փոփոխությունների միջոցով կանխել հնարավոր քաղաքական ձգնաժամը:

Կոնկրետ մեր երկրում վերջին շրջանում իրականացված սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտության առնչությամբ բերված փաստարկները բավարար չափով համոզիչ չթվացին: Հանրությունն ակնկալում էր հնարավորինս որոշակի ներկայացվեին բարեփոխումներ նախաձեռնելու չափանիշները և ակնկալիքը: Այս փուլում հանրության համար դեռևս տեսանելի չեն սահմանադրական բարեփոխումների արդյունքները:

**Էդգար Շաթիրյան** – Ցանկացած իրավիճակում սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտության, այն իրականացնելու սահմանների ու ժամանակի հարցադրումներին հնարավորինս ճշգրիտ պատասխանելու համար նախ հարկ է հստակեցնել առնվազն հետևյալ խնդիրները. ա) սահմանադրական փոփոխությունների կոնկրետ ի՞նչ շրջանակ ենք ակնկալում, բ) ինչպիսի՞ն է փոփոխման ենթակա իրավական նորմերի իրավակիրառ պրակտիկայի արդյունավետությունը, գ) նվազագույնը որքա՞ն ժամանակ է մեզ անհրաժեշտ ակնկալվող փոփոխությունների արդյունքներն իրատեսական դարձնելու համար, դ) ինչպիսի՞ ազդեցություն այն կունենա արտաքին հարաբերությունների վրա և այլն:

Այլ կերպ ասած սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունը կանխորոշող չափանիշների (թեպետ ընդհանուր առմամբ դրանք կարող են միասնական համարվել) շրջանակն ու իրացման աստիճանը մեծապես կախված են տարաբնույթ գործոններից, որոնց մի մասին անդրադարձանք վերևում:

Կարևոր եմ համարում նկատել նաև, որ սահմանադրական փոփոխությունների արդյունավետությունը գնահատելու համար ևս հարկ է ընտրել ողջամիտ ժամկետներ: Զուտ հետազոտական մեթոդաբանության տեսանկյունից իրավաչափ չէ, երբ մենք արդեն այս օրերին փորձում ենք գնահատել միայն ամիսներ առաջ կատարված սահմանադրական փոփոխությունների արդյունավետությունը, մինչդեռ նախորդ Սահմանադրության առնչությամբ հնչեցնում էինք այն կարծիքը, թե տաս տարին դեռ բավարար չէ այդ իրավական փաստաթղթի թերությունների մասին խոսելու համար: Սա, թերևս, վկայում է երկակի դատողություններ անելու մասին, ինչը չի կարող նպաստել անաչառ գիտական հետազոտությանը:

Նկատենք նաև, որ 2015 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրության փոփոխությունների մի զգալի ու անչափ էական հատված դեռևս կի-

րաբան մեջ չի էլ դրվել, ուստի պարզապես հիմնավորված չէ դատողություններ անել այն իրավական լուծումների փաստացի արդյունավետության մասին, որոնք երբևէ չեն էլ կիրառվել: Այս փուլում դեռևս բացակայում են այն անհրաժեշտ ելակետային տվյալները, որոնց առկայության դեպքում միայն հնարավոր կլինի համարժեք խոսել, օրինակ՝ սահմանադրական փոփոխությունների արդյունքում կառավարման ձևի փոփոխության արդյունավետության մասին կոնկրետ մեր երկրում:

**Գևորգ Ղանիեյան** – Սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորող առաջնային փաստարկն այն է, որ երկրի Հիմնական օրենքը պետք է բացառապես նպաստի անհատի ու պետության արդարացի շահերի անխաթար իրացմանը, Սահմանադրությունը ոչ մի պարագայում չի կարող խոչընդոտել հանրության բնականոն զարգացումը: Եթե ակնհայտ է դարձել, որ պետության Հիմնական օրենքը կամ դրա առանձին նորմեր այլևս ի գործ չեն նպաստելու հիշյալ գերխնդրի լուծմանը, իսկ որոշ դեպքերում անգամ լուրջ խոչընդոտներ են հարուցում, ապա ոչ մի սկզբունք կամ գաղափար չի կարող արդարացնել սահմանադրական կայունությունը:

Համամիտ եմ, որ սահմանադրական, ընդհանրապես իրավակարգավորումների կայունությունն ինքնին ողջունելի է, այն ևս համարվում է որոշակիության սկզբունքի անքակտելի բաղադրիչը, սակայն կայունությունն ինքնանպատակ չէ և պետք է ստորադասվի հանրության առջև ծառայած հիմնահարցերի արդյունավետ լուծմանը:

Հաճախ այս կամ այն երկրում ձևավորված պրակտիկական փորձ է արվում ներկայացնելու իբրև նմանաբնույթ իրավիճակների մեկնաբանության համընդհանուր «բանալի», սակայն իրավահամեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ տվյալ դեպքում հարկ է ցուցաբերել որոշակի խոհեմություն: Այսպես, Ֆրանսիան և Հայաստանը, իրոք, առանձնանում են սահմանադրական փոփոխությունների դիմելու համեմատաբար բարձր պարբերականությամբ: Ըստ մեր ֆրանսիացի գործընկերոջ՝ դրա հիմնական շարժառիթը հանրության նկատելի հարգանքն ու հավատն է իրավունքի նկատմամբ, ուստի մարդիկ փորձում են օրենսդրության արդիականացման ճանապարհով ամբողջությամբ բարելավել իրենց կյանքը:

Ինքս ձեռնպահ կմնայի նույն այս բացատրությունը կիրառելի համարել Հայաստանի կամ այն երկրների համար, որոնք ևս հաճախակի են դիմում սահմանադրական ու իրավական փոփոխությունների: Նախ, մենք հիմքեր չունենք պնդելու, որ մեր երկրում հաջողությամբ հաղթահարված է իրավական նիհիլիզմը, և մարդիկ մեծագույն հավատ ունեն իրավական փոփոխությունների հանդեպ: Հաճախ իրավական փոփոխությունների առնչությամբ հանրության ականհայտ նկատելի հետաքրքրությունը թելադրված է ոչ այնքան դրանց նկատմամբ ունեցած մեծ վստահությամբ ու հարգանքով, որքան իրենց համար բացահայտ անընդունելի իրավական լուծումները բացառելու նկատառումով:

Եթե համեմատելու լինենք, թե սոցիալական ակնհայտ նկատելի ակտիվության պայմաններում քաղաքական համակարգի որ բաղադրիչներն են ավելի հաճախ հանդես գալիս օրենսդրությունում բարեփոխումներ կատարելու նախաձեռնությամբ, ապա կնկատենք, որ գերակայում է հենց պետությունը՝ հանձննս գործադիր իշխանության մարմինների, իսկ անձինք առավելապես, ինչպես արդեն նկատեցի, մտավախություն ունենալով, որ նորամուծությունները կվատթարացնեն իրենց կենսապայմանները, փորձում են ակտիվորեն հակազդել: Այսպիսով, հաճախակի արձանագրվող օրենսդրական փոփոխությունները ոչ թե անթաքույց վկայում են իրավունքի հանդեպ հանրության բարձր վստահությամբ, այլ ակնհայտ մտավախությամբ, որ օրենսդրական փոփոխությունները չեն բխի ժողովրդավարության շահերից:

Իրավական բարեփոխումների ողջ գաղափարախոսությունը, կարծում եմ, պետք է կառուցված լինի այն մեկնակետի հենքով, ըստ որի՝ ծագած խնդիրները

պետք է լուծել՝ փնտրելով դրանց արդյունավետ ու առավել ընդունելի լուծումները գործող օրենսդրությունում, այլ կերպ ասած՝ իրավական փոփոխության համար դրվագային բնույթի յուրաքանչյուր բարդ իրավիճակ ինքնըստինքյան դեռևս բավարար հիմք չէ: Յուրաքանչյուր դեպքում հարկ է հավուր պատշաճի հետազոտել տվյալ վիճակը, գնահատել դրա իրավական կարգավորվածության իրական արդյունավետությունը, ծագած խնդիրը լուծելու այլընտրանքային իրավական հնարավորությունների առկայության հարցը, և միայն այն դեպքում, երբ բոլոր այս հարցադրումների համալիր պատասխանը մեզ մատնացույց կանի օրենքը փոխելու անհրաժեշտությունը, կարելի է դիմել այդ քայլին: Հակառակ պարագայում մենք արձանագրում ենք մի իրավիճակ, երբ ոչ միայն պարբերաբար փոխվում է այս կամ այն ոլորտի կանոնակարգմանը նվիրված օրենսդրությունը, այլև որոշակի ժամանակ անց վերադառնում ենք այն տարբերակին, որից ընդամենը մեկ-երկու տարի առաջ անհիմն հրաժարվել ենք և փորձել հիմնավորել դրա անկատարությունը: Նկատեն, որ իրավակարգավորման այս գործելաոճն առավել նկատելի է հարկային մարմինների նախաձեռնած օրենսդրական ակտերում. այս ոլորտում մինևույն իրավակարգավորումը բացառելն ու կարճ ժամանակ անց դարձյալ դրան վերադառնալը վերածվել են «ավանդույթի»:

Ես ևս ընդունում եմ, որ քաղաքական ուժերի պարագայում երբեմն մեծ է լինում հրապուրանքը՝ ծագած խնդրին հնարավորինս օպերատիվ արձագանքելու տեսանկյունից: Այն, որ Ֆրանսիայի Նախագահ Ֆրանսուա Օլանդը փորձել է արտակարգ դրության ժամանակ նախաձեռնել սահմանադրական փոփոխություն, կարելի է տարբեր կերպ գնահատել, սակայն գերխնդիրն այս դեպքում այն է, որ այդպիսի արագ լուծումները հղի են լուրջ ծախսողումների հանգեցնելու վտանգով: Պատահական չէ, որ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ հանրաքվե անցկացնելու արգելքը համընդհանուր սկզբունք է, որը գործում է նաև մեր երկրի Սահմանադրությամբ (208-րդ հոդված), խնդիրն այն է, որ իրավական լրջագույն սահմանափակումների ու սոցիալական լարված մթնոլորտում իրատեսական չէ ակնկալել լավագույն լուծումներ ու օրինագծերի առնչությամբ հնարավորինս համաչափ հոգեբանական վերաբերմունք:

Սա, ի դեպ, քանիցս հիմնավորվել է նաև Ֆրանսիայի պարագայում: Երկրի 1958 թ. Սահմանադրությունը արգելել է զինված ուժերի կիրառումը արտակարգ դրության հետևանքների դեմ պայքարում, հատկապես արգելվել է զանգվածային անկարգությունների կանխման գործողություններին այդ ուժերի ներգրավումը: Սակայն մի քանի տարի առաջ, երբ շուրջ երկու շաբաթ շարունակ կրոնական հողի վրա տեղի ունեցան աննախադեպ լայն տարածում գտած զանգվածային անկարգություններ (այրվում էին հազարավոր ավտոմեքենաներ ու շինություններ), իշխանությունները անհրաժեշտ համարեցին էյֆեյան աշտարակի անվտանգության գործը վերապահել զինված ուժերին, քանզի ակնհայտ էր դարձել, որ միայն ոստիկանական ուժերով հնարավոր չէ ցուցաբերել արդյունավետ դիմակայություն:

Վերը նշված դեպքում, կարծում եմ, իրեն արդարացրեց կոնկրետ իրավիճակով պայմանավորված ծայրահեղ անհրաժեշտության և անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտների համատեղ կիրառմանը նախապատվություն տալը: Իսկ հետագայում, արդեն առավել ընդունելի պայմաններում հնարավոր դարձավ համալիր անդրադառնալու վերը նշված խնդրի սահմանադրական կարգավորմանը:

Վերջում ես կխնդրի Կարոլի Գուզմանին՝ հնարավորինս հանգամանորեն անդրադառնալ Ֆրանսուա Օլանդի՝ 2015 թ. նոյեմբերի 13-ի ահաբեկչության առնչությամբ սահմանադրական փոփոխությունների նախաձեռնության ձախողմանը, ինչը, կարծում եմ, ուսանելի կլինի նաև մեզ համար:

**Կարոլի Գուզման** – Ինչպես գիտեք, այդ ահաբեկչության հետևանքով զոհվեց 130 մարդ, տարբեր աստիճանի վնասվածքներ ստացան շուրջ 400 մարդ, այսինքն՝ սա 2-րդ համաշխարհային պատերազմից հետո ամենադաժան ահաբեկչությունն էր:

Նույն օրվա գիշերը Ֆրանսիայի Նախագահ Ֆրանսուա Օլանդը հանդես եկավ ելույթով և ընդգծեց սահմանադրական այնպիսի փոփոխությունների անհրաժեշտությունը, որոնք միտված կլինեն ահաբեկչության կանխմանը: Արդեն նոյեմբերի 16-ին Նախագահն առավել հանգամանորեն ներկայացրեց սահմանադրական փոփոխությունների երկու հիմնադրույթները՝ ա) արտակարգ դրության իրավական ռեժիմը ներառել Սահմանադրության մեջ (Ֆրանսիայում այն սուսկ օրենսդրական կարգավորման առարկա է) և բ) երկքաղաքացիներին գրկել Ֆրանսիայի քաղաքացիությունից: Այս առաջարկությունը խորհրդարանում ընդունեցին ծափահարություններով, ուստի տպավորությունն այնպիսին էր, որ սահմանադրական փոփոխությունները շատ արագ ու հաջող կընթանային: Ընդ որում, այդպիսի կանխատեսումների հիմքում դրված էր նաև այն, որ հանրության մեջ անցկացված սոցիարցունների արդյունքներով 85 տոկոսը կողմնակից էր նախաձեռնությանը:

Սակայն նախնական մասնագիտական քննարկումներն ընթացան բոլորովին այլ ուղղությամբ, մասնավորապես, իրավագետների մի ստվար հատված սկսեց վիճարկել այդ նախաձեռնության արդյունավետությունը. նրանց արտահայտած մոտեցումներից պարզ էր դառնում, որ այդ նախաձեռնությունը կարող էր զուտ քաղաքական ենթատեքստ ունենալ՝ գրոյական իրավական արդյունավետությամբ: Վերջին հաշվով, ահաբեկչություն կարող են իրականացնել նաև ընդհանրապես քաղաքացիություն չունեցող անձինք, ուստի խնդիրը ոչ այնքան քաղաքացիությանը, որքան արհեստավարժ կանխարգելման գործունեությանն էր վերաբերում:

Իրավագետների բացասական արձագանքը շուտով փոխեց տրամադրությունները նաև խորհրդարանում, անգամ իշխող կուսակցության ներկայացուցիչները սկսեցին բացահայտ արտահայտել իրենց անհանգստությունը: Ֆրանսիայի Նախագահը փորձեց մի պահ գնալ զիջումների և հանձնարարեց էապես փոխել նախագիծը՝ համապատասխանեցնելով հնչած առաջարկություններին: Այս քայլը, կարծես, լիցքաթափեց իրավիճակը և նախադրյալներ ստեղծեց նախագծի բարեհաջող ընթացքի համար, սակայն նույնիսկ այդ պարագայում, այնուամենայնիվ, որոշվեց նախագիծը հանել քննարկումից. Ֆրանսիայի Նախագահը հայտարարեց, որ սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտություն չի տեսնում:

Կարծում եմ, որ հենց սահմանադրական փոփոխությունների բարդ ընթացակարգերը հնարավորություն տվեցին, որ Ֆրանսիայի Նախագահն առավել սթափ գնահատի իրավիճակը և գերծ մնա հապճեպ որոշումներ կայացնելուց: Սահմանադրական փոփոխությունները երբեմն անհարկի իրենց վրա են բևեռում հանրային ուշադրությունը, իսկ առավել գործնական խնդիրները, որոնք հնարավոր է և անհրաժեշտ է շուտափույթ լուծել եղած օրենսդրության շրջանակներում, մի անորոշ ժամանակով անտեսվում են: Այս փուլում ահաբեկչության դեմ պայքարն առավել իրատեսական ու ազդեցիկ դարձնելու ուղղությամբ Ֆրանսիայում արմատական քայլեր են ձեռնարկվում, և համոզված եմք, որ միայն այդ եղանակով է հնարավոր դիմակայել արդի վտանգավոր մարտահրավերներին:

### Summary

On the 15<sup>th</sup> of May, 2016, a round table on «The Legal and Political Preconditions for Constitutional Amendments» was organized at the Constitutional Law Department of the Yerevan State University, in which took part Mrs. Carolie Goosman, the head of the Constitutional Law sector of the University of Montpellier, Mrs. Anna Matevosyan, a professor at the same university, professors and PhD students of the Constitutional Law Department of the Yerevan State University.

The subject was chosen, taking into consideration certain similarities of the legal systems of Armenia and France, in terms of frequently changing constitutions, and the Constitutional Amendments per December 22, 2015, that give certain powers to the National Assembly and citizens, who have right to vote, to make some changes in the Constitution.

The discussions were accompanied by short speeches made by the guests.

### Резюме

15 мая 2016 г. на кафедре конституционного права юридического факультета Ереванского Государственного Университета был организован круглый стол по теме: «Политико-правовые предпосылки конституционных изменений», в котором принимали участие из Франции зав. сектором конституционного права университета Монпелье Кароли Гузман, преподаватель того же университета Анна Матевосян, а также преподаватели и аспиранты кафедры конституционного права юридического факультета Ереванского Государственного Университета.

Выбор темы продиктован схожими факторами конституционных изменений как во Франции, так и в Армении, а также теми новыми положениями Конституции, вступившей в юридическую силу с 22 декабря 2015 г., согласно которым парламент и граждане Армении приобрели полномочия осуществления конституционных изменений. На обсуждении выступили как представители французского университета, так и кафедры конституционного права юридического факультета Ереванского Государственного Университета.

**Հարգելի՛ հեղինակներ,  
Հանդեսին նյութեր հանձնելիս խնդրում ենք  
պահպանել հետևյալ պահանջները.**

Խմբագրական խորհուրդը և խմբագրությունը կքննարկեն միայն այն նյութերը, որոնք կուղարկվեն էլեկտրոնային փոստով կամ խմբագրություն կներկայացվեն թղթային տարբերակով՝ էլեկտրոնայինի հետ միասին:

Հոդվածները առավելագույնը պետք է ունենան 25.000 տպագիր նիշ՝ ներառյալ տողատակերը:

Նյութերն ընդունվում են համապատասխան բուհերի ամբիոնների, գիտահետազոտական հիմնարկների բաժինների երաշխավորության, ինչպես նաև մասնագետի կարծիքի առկայության դեպքում: Նյութին կից անհրաժեշտ է ներկայացնել հոդվածի վերնագիրը, համառոտագիրը, հեղինակի տվյալները և բանալի բառեր՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն:

Նյութերի ծավալը որոշելիս խնդրում ենք հիմք ընդունել հետևյալ պահանջները. տեքստը տպագրվում է սովորական A4 չափի թղթի վրա՝ 1.5 տողաչափով, հիմնական տեքստի տառերի չափը՝ 12, տողատակերի տառերի չափը՝ 10, լուսացքները՝ ձախից, վերևից, աջից և ներքևից՝ 2 սմ, Unicode տառատեսակով՝ «Arial Unicode»:

Նորմատիվ ակտեր օգտագործելիս տեքստում պետք է նշել դրա տեսակը (Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիր և այլն), ընդունման ժամանակահատվածը (ընդունման օրը՝ թվերով, ամիսը՝ տառերով, ընդունման տարին՝ քառանիշ թվերով, օրինակ՝ 2013 թվականի դեկտեմբերի 12), չակերտներում նշել լրիվ (առանց կրճատումների) անվանումը (օրինակ՝ ոչ թե ՀՀ, այլ Հայաստանի Հանրապետություն): Այս դեպքում տողատակում բավարար է նշել հրատարակության աղբյուրը:

Տեքստում կարելի է նշել ակտի տեսակը, ամսաթիվը և առանց չակերտների կրճատ անվանումը, որը կտա ճիշտ պատկերացում փաստաթղթի մասին:

Հեղինակներին խստիվ խորհուրդ է տրվում մինչև ուղարկելը մանրամասն ստուգել շարվածքի, ինչպես նաև համապատասխան իրավաբանական հասկացությունների ճշտությունը:

Նյութի առաջին էջում՝ վերնագրից հետո, նշվում են տեղեկություններ հեղինակի մասին, որոնք կարտացոլվեն մեր պարբերականում՝ հեղինակի անուն և ազգանունը ամբողջությամբ, պաշտոնը և աշխատանքի վայրը, առկայության դեպքում՝ գիտական աստիճանը և կոչումը: Օրինակ՝ ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու ...:

Վերջին էջում հեղինակը պարտադիր ստորագրում է, նշում կոնտակտային տվյալները: